



**ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄՈԴՈՒԼ**

Սոցիալ-հոգեբանական աջակցության ոլորտ

**ՓԻ-ԷՅՉ ԻՆԹԵՐՆԵՇՆԸԼ
Հայկական մասնաճյուղ
Պարոնյան 8/8, Երևան
www.ph-int.org**

Երևան - 2017

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄՈԴՈՒԼ

ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Հեղինակներ՝

Ալեքսանյան Ա.
Գասպարյան Ա.
Հովակիմյան Գ.
Վիրապյան Է.

Ձեռնարկը մշակող խումբը շնորհակալություն է հայտնում
ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ղեկավարությանը և
դասախոսական կազմին՝ նախաձեռնությանն աջակցելու համար:

Անուշ Ֆրունզիկի Ալեքսանյան - ՀՀ ԿԳԼ կրթության ազգային ինստիտուտի Մանկավարժական կադրերի վերապատրաստման և ատեստավորման բաժնի մասնագետ, «Երկուսով» հոգեբանական մասնագիտացված կենտրոնի տնօրեն:

Ծնվել է 1983 թվականին Երևան քաղաքում, 2006 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի Փիլիսոփայության, հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի հոգեբանության բաժինը: 2005 թվականից զբաղվում է գործնական հոգեբանությամբ: 2007 թվականից նաև հանդիսանում է կրթության ոլորտի փորձագետ, զբաղվում է մանկավարժական կադրերի վերապատրաստման և մասնագիտական զարգացման հարցերով: Շուրջ 20 հոդվածների և ձեռնարկների հեղինակ և համահեղինակ է:

Արշակ Դավթի Գասպարյան - Քրեական արդարադատության ոլորտի միջազգային փորձագետ, հոգեբան, «Սոցիալական արդարություն» ՀԿ և «Հայաստանի երեխաների պաշտպանության ցանցի» նախագահ:

Ծնվել է 1982 թվականին Երևան քաղաքում, 2007 թվականին ավարտել է ԵՊՀ Հոգեբանության ֆակուլտետի ասպիրանտուրան:

2001 թ-ից աշխատում է քրեական արդարադատության ոլորտում, համակարգել է հոգեբանական աշխատանքները ՀՀ քրեակատարողական համակարգում: Մասնագիտացել է նաև անչափահասների արդարադատության և երեխաների պաշտպանության ոլորտներում: Դասավանդում է քրեական արդարադատության ոլորտի աշխատակիցների վերապատրաստման տարբեր հաստատություններում:

Հեղինակել 15 գիտական հոդվածներ և 2 ուսումնամեթոդական ձեռնարկների համահեղինակ է:

Պրոբացիայի Եվրոպական միության, Բանտային և ուղղիչ աշխատանքների միջազգային ասոցիացիայի և Կրիմինոլոգների եվրոպական ասոցիացիայի անդամ է:

Գայանե Ռուբիկի Հովակիմյան - ՀՀ արդարադատության նախարարության «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ -ի տնօրենի վերականգնողական ծրագրերի հարցով տեղակալ:

Ծնվել է 1979 թվականին Կիրովական /ներկայիս Վանաձոր/ քաղաքում: 2002 թվականին գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի Փիլիսոփայության, հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի սոցիոլոգիայի բաժինը՝ մագիստրոսի որակավորմամբ: 2002 թվականից աշխատում է ՀՀ արդարադատության նախարարության կազմում, համատեղությամբ նույն թվականից զբաղվում է մանկավարժական և գիտահետազոտական գործունեությամբ: Շուրջ քսան հոդվածների, ձեռնարկների և մեթոդական ուղեցույցների հեղինակ և համահեղինակ է:

Էլենոորա Գևորգի Վիրապյան – ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության կանանց հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ:

Ծնվել է 1958 թվականին Երևան քաղաքում, 1983 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում աշխատում է 1997 թվականից: Զբաղվում է բռնության (այդ թվում՝ ընտանեկան բռնության, մարդկանց թրաֆիքինգի և շահագործման, գենդերային խնդիրներով: Մի շարք մշակումների և ձեռնարկների համահեղինակ է:

Սույն մոդուլը ստեղծվել է «Փի-Էյչ Ինթերնեշնլ» (պաշտոնապես գրանցված որպես «Փրոջեքթ Հարմոնի») կազմակերպության հայկական մասնաճյուղի և ՀՀ Ոստիկանության համատեղ նախաձեռնությամբ՝ երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտի մասնագետների ներգրավմամբ: Մոդուլը մշակվել և փայտագրվել է ԱՄՆ Պեքթրաբրուդարության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բաժնի ֆինանսական աջակցությամբ՝ «Փի-Էյչ Ինթերնեշնլ»-ի կողմից իրականացվող «Համայնքային կապեր՝ ի նպաստ իրավական սոցիալականացման» ծրագրի շրջանակում:

Սույն մոդուլը արտացոլում է հեղինակների տեսակետները, մեկնաբանությունները և եզրակացությունները, որոնք կարող են չհամընկնել ԱՄՆ Պեքթրաբրուդարության տեսակետների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|-----------|
| ԳԼՈՒԽ 1 | 8 |
| ԱՆՁԱՓՈՒՍՏՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ | 8 |
| 1.1. Անչափահասների արդարադատության համակարգի կազմն ու բնույթը | 8 |
| 1.2. Անչափահասների արդարադատության համակարգը անչափահասների հանցավորության կանխարգելման ենթատեքստում | 12 |
| ԳԼՈՒԽ 2 | 19 |
| ԵՐԵՒԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | 19 |
| 2.1. Նորածնություն և մանկիկություն (ծննդից մինչև 1 տարեկան)..... | 19 |
| 2.2. Վաղ մանկություն (1-3 տարեկան) | 20 |
| 2.3. Նախադպրոցական մանկություն (3-6 տարեկան)..... | 21 |
| 2.4. Կրտսեր դպրոցական տարիք (6-10 տարեկան) | 23 |
| 2.5. Միջին դպրոցական տարիք, դեռահասություն (10-14 տարեկան) | 24 |
| 2.6. Պատանեկություն, ավագ դպրոցական տարիք (14-17 տարեկան) | 29 |
| 2.7. Դեռահասությանը հատուկ խնդիրներ | 30 |
| 2.8. Թմրամիջոցները եվ դեռահասը..... | 32 |
| 2.9. Ինքնասպանության վտանգը դեռահասության տարիքում..... | 34 |
| 2.10. Ինչպես խուսափել դեռահասությանը բնորոշ վտանգներից | 37 |
| ԳԼՈՒԽ 3 | 44 |
| ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ | 44 |
| 3.1. Կոնֆլիկտի կառուցվածքը | 44 |
| 3.2. Դեռահասի շփումը և կոնֆլիկտները մեծահասակների հետ..... | 49 |
| 3.3. Ծողովարումը՝ որպես կոնֆլիկտի պատճառ | 50 |
| 3.4. Դեռահասի շփումը և կոնֆլիկտները հասակակիցների հետ | 53 |

| | |
|---|-----------|
| ԳԼՈՒԽ 4 | 56 |
| ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 56 |
| 4.1. Անչափահասների հանցավորության պատճառականության հոգեբանական որոշ առանձնահատկություններ | 56 |
| 4.2. Դեվիանտ (շեղվոր) վարքի բնորոշումը, տարատեսակներն ու հոգեբանական առանձնահատկությունները | 59 |
| ԳԼՈՒԽ 5 | 63 |
| ԲՈՆՈՒԹՅՈՒՆ | 63 |
| 5.1. Ֆիզիկական բռնություն | 63 |
| Ֆիզիկական նշաններ | 63 |
| Վարքային նշաններ | 64 |
| 5.2. Սեռական բռնություն | 65 |
| Ֆիզիկական նշաններ | 66 |
| Վարքային նշաններ | 66 |
| 5.3. Հուզական և հոգեբանական բռնություն | 67 |
| Ֆիզիկական նշաններ | 68 |
| Վարքային նշաններ | 68 |
| 5.4. Բարոյական բռնություն կամ անտեսում | 69 |
| Ֆիզիկական նշաններ | 70 |
| Հոգեկան և վարքային նշաններ | 71 |
| 5.5. Բռնության հետևանքները | 71 |
| 5.6. Բռնության կիրառման ռիսկի գործոններն ընտանիքում | 73 |
| ԳԼՈՒԽ 6 | 76 |
| ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ | 76 |
| 6.1. Ընտանեկան բռնության հատկանիշները, առանձնահատկությունները, ընտանեկան բռնության գենդերային ասպեկտը, գենդերային խտրականությունը | 76 |
| 6.2. Վիճակագրական տվյալներ, բռնության հիմնական պատճառներ | 79 |
| 6.3. Ոլորտի օրենսդրություն, կառուցակարգային հենքեր | 82 |
| 6.4.1. Տեղեկատվության փոխանակում, բռնության ենթարկված երեխայի ուղղորդում | 93 |
| 6.5. Երեխայի խնամքի և պաշտպանության հաստատությունների տեսակներ | 97 |

| | |
|--|------------|
| ԳԼՈՒԽ 7 | 108 |
| ՀԱՄԱՅՆՔԱՀԵՆ ՄՈՏԵՑՈՒՄ ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ | 108 |
| 7.1. Համայնքային ռեսուրսներ և ծառայություններ. ընդհանուր պատկերացում համայնքային ոստիկանության վերաբերյալ | 108 |
| 7.2. Ծառայությունների և գործընկեր կառույցների քարտեզագրում | 110 |
| Համագործակցություն գործի վարման շրջանակում | 113 |
| | |
| ԳԼՈՒԽ 8 | 119 |
| ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 119 |
| 8.1. Հանցավորության դեմ պայքարի արդի հայեցակարգերը | 119 |
| 8.2. Վերականգնողական արդարադատություն | 123 |
| 8.3. Առանց ծնողական խնամքի մնացած (ԱԾԽՄ) երեխաների սոցիալական պաշտպանության իրավական կարգավորումները և խնամքի կազմակերպման հիմնական ձևերը | 130 |
| 8.4. Անչափահաս իրավախախտի ռիսկերը և կարիքները, պրոֆիլակ- տիկ աշխատանք կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների շրջանում | 137 |
| 8.5. Անչափահասի հանցավորության ու նրա կողմից կրկնահանցագործության ռիսկի գնահատում | 141 |
| 8.5.1. Ինչի համար են և ինչ են մեզ տալիս ռիսկի գնահատման գործիքները | 144 |
| | |
| ԳԼՈՒԽ 9 | 165 |
| ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՎԱՐԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 165 |
| 9.1. Անչափահասների հետ հարցազրույց վարելու ընթացակարգային ընդհանուր ուղենիշներ | 165 |
| 9.1.1. Հարցազրույցի տևողությունը | 165 |
| 9.1.2. Հարցերի շարադրումը | 166 |
| 9.2. Հարցազրույցի վայրի ընտրությունը ևս կարևոր է | 167 |
| 9.3. Ընդհանուր ուղենիշներ անչափահասի հետ հարցազրույցի ընթացքում վստահության մթնոլորտ ձևավորելու ուղղությամբ | 172 |

ԳԼՈՒԽ 1

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ¹

1.1. Անչափահասների արդարադատության համակարգի կազմն ու բնույթը

Համարվում է, որ անչափահասների արդարադատության համակարգը միջազգայնորեն ընդունված իրավական կանոնների ու նորմերի համակարգ է (հիմնականում՝ Միավորված Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ) և Եվրոպայի Խորհրդի (ԵԽ) կողմից), որ միտված է պաշտպանել երեխային² ընդունված ստանդարտ արդարադատական համակարգերում: Նշված նորմերն ու կանոնները ոչ այնքան գործողություններ ու կոնկրետ ընթացակարգեր են, որքան՝ վերաբերմունք ու մոտեցում, արժեքներ ու դիրքորոշումներ՝ արդարադատական համակարգի հետ որևէ կերպ առնչված երեխայի նկատմամբ: Ու թեև այս կանոններն ու նորմերը ոչ միշտ են մատնացույց անում կոնկրետ ոստիկանական կառույցների դերն ու նշանակությունը, այդուհանդերձ խիստ էական է երեխայի նկատմամբ վերաբերմունք ձևավորել ամբողջականությամբ

¹ Սույն գլուխն արտացոլում է լոկ անչափահասների արդարադատության համակարգի հիմնական իրավական փաստաթղթերն ու դրանց հիմնարար մոտեցումները հանցավորության կանխարգելման ուղղությամբ: Այն նպատակ է հետապնդել ոստիկանության աշխատակցին տալ համակարգային պատկերացում անչափահասների հետ իրականացվող աշխատանքների ամբողջականության մասին և տեսանելի դարձնել ոստիկանության դերը քրեական արդարադատության ողջ շղթայում անչափահասների հետ վարվեցողության ոլորտում: Սույն գլխում ներկայացված տեղեկատվությունն՝ իր համակարգայնությամբ ուղենիշային է՝ անչափահասների հետ հարցազրույցներ վարելու, նրանց իրավախախտման դիսկն ու հավանականությունը գնահատելու, այդ պրոյունքները վերլուծելու ու իրացնելու աշխատանքների, այդ մասին նյութը յուրացնելու համար, որոնց մասին կխոսվի այլ բաժիններում (գլուխներում): Առավել խորքային և ամբողջական գիտելիքների համար անհրաժեշտ է տեքստում արժարժված փաստաթղթերի ցանկը համալրել հետևյալ փաստաթղթերով և՛

- ⁴գատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ-ի կանոններ (Հավանայի կանոններ)
- ⁴գատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ (Տոկիոյի կանոններ)
- «Վիեննայի ղեկավարող սկզբունքները» (Vienna Guidelines)

² Մի շարք միջազգային իրավական կարգավորումներում կիրառելի են «երեխա» կամ «երիտասարդ» արտահայտությունները, որոնք ձեռնարկի սույն բաժնի ենթատեքստում արտահայտում են «անչափահաս» եզրույթը:

մեջ՝ կարևորելով քրեական արդարադատության ողջ համակարգի (ոստիկանություն, քննչական կոմիտե, դատախազություն, դատարան, քրեակատարողական ծառայություն և պրոբացիայի պետական ծառայություն) դերը երեխա-հասարակական հարաբերություններ (համայնք) շղթայում:

Այսպես, 1993 թ. հունիսի 23-ին Հայաստանը միացել է ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային (ԵԻԿ): ԵԻԿ-ը պահանջում է մասնակից պետություններից մշակել և իրականացնել անչափահասների արդարադատության համապարփակ քաղաքականություն՝ հատուկ ուշադրություն դարձնելով անչափահասների իրավախախտումների կանխարգելմանը, ազատագրկման այլընտրանքային միջոցների ներդրմանը, որոնք հնարավորություն կտան անչափահասների իրավախախտումներին արձագանքել՝ առանց ընդունված, ստանդարտ ընթացակարգերին դիմելու: Հաջորդիվ, կարևոր փաստաթղթերն են՝

- «Անչափահասների գործերով արդարադատության իրականացման նվազագույն ստանդարտ կանոններ (Պեկինյան կանոններ)»,
- «Անչափահասների հանցավորության կանխարգելման ՄԱԿ-ի ուղենիշներ (Ռիադյան ուղենիշներ)»,
- «Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության համար Միավորված Ազգերի Կազմակերպության կանոններ»:

Ընդունված է համարել, որ այս երեք փաստաթղթերը, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի հետ միասին, կազմում են անչափահասների արդարադատության համակարգի հիմնական ստանդարտները:

Ինչպես ԵԻԿ-ը, այնպես էլ այս փաստաթղթերը³ պահանջում են, որ ազգային իրավական համակարգերը հաշվի առնեն օրենքի հետ խնդիրներ ունեցող անչափահասների հատուկ կարգավիճակն ու խոցելիությունը: Դրանք վերաբերում են նաև կանխարգելմանը, նաև վարվեցողությանը՝ հիմք ընդունելով այն կենտրոնական սկզբունքը, որ անչափահասների նկատմամբ արդարադատության

³ Ընդունված Գլխավոր ասամբլեայի կողմից համապատասխանաբար՝ 1990 թվականի դեկտեմբերին, 1985 թվականի նոյեմբերին և 1990 թվականի դեկտեմբերին

ուղրտում բոլոր գործողությունները պետք է բխեն երեխայի լավագույն շահից⁴:

Այս իմաստով, դիտարկվում է, որ, առնվազն, երեխան պիտի լինի լաված, պիտի ապահովել նրա զարգացումն ապահովող պայմաններն ու անվտանգությունը (օրինակ՝ ամուսնալուծությունների ու երեխայի բնակության վայրի որոշման պարագայում)⁵: Քրեական արդարադատության համակարգում (դիցուք ոստիկանությունում) սա առնվազն ենթադրում է.

Երեխայի հետ շփվելիս (անկախ այն հանգամանքից՝ իրավախախտ է, վկա, թե տուժող/զոհ) բռնության ու վատ վերաբերմունքի որևէ ձևի բացառում: Հաճախ մեծահասակները (դիցուք՝ ոստիկանը), ելնելով, օրինակ՝ անչափահասի կողմից կատարված իրավախախտման բնույթից (դաժանությամբ ուղեկցված ծեծ, երկար մտածված ու նպատակին հասցված գողություն, կողոպուտ կամ այլ՝ «մեծահասակին բնորոշ» վարք) ու խոսքից (քրեական միջավայրում հայտնի ժարգոն, ատելությամբ ու թշնամանքով լեցուն արտահայտություններ, ինքնավստահ ու տրամաբանված խոսք), թյուր պատկերացում են կազմում, թե 14-15 տարեկան այս երեխան արդեն մեծացել է ու կարիք չկա նրան դիտարկել որպես երեխա: Այս իմաստով, նման մոտեցումը կարող է նպաստել (միգուցե, նույնիսկ՝ ոչ դիտավորությամբ) կոպիտ, հատու, խոսքի ու վարքի, անտարբեր կամ խիստ վրդովված (անձնային մակարդակում) վերաբերմունքի, սպառնալիքների և այլ: Իհարկե, չի կարելի բացառել աքսելերացիոն գործընթացների կարևորությունը, ինչ-ինչ պատճառներով հոգեբանական տարիքի գերակայությունը կենսաբանական տարիքի նկատմամբ և այլն: Սակայն երեխաների, այդ թվում՝ դեռահասների կենսաբանական, սոցիալական ու հոգեբանական առանձնահատկությունները միշտ պիտի դիտարկվեն որպես առաջնահերթություն:

⁴ Բխում է ԵԻԿ 3-րդ հոդվածի 1-ին մասից. «Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին»:

⁵ https://en.wikipedia.org/wiki/Best_interests, ինչպես նաև UNHCR Guidelines on Determining the Best Interests of the Child - <http://www.unhcr.org/4566b16b2.pdf>

Երեխայի հետ վստահության մթնոլորտ ձևավորելու անհրաժեշտություն (առավել մանրամասն՝ հաջորդ գլուխներում): Վերը բերված օրինակով ու պատճառաբանությամբ, հաճախ ուստիկանը, կենտրոնանալով հնարավոր քրեական գործով «ճշմարիտ» ու «իրեն անհրաժեշտ» տեղեկատվությունը բացահայտելու նպատակի վրա, կարող է անտարբերության մատնել երեխայի հույզերը, տարիքային առանձնահատկություններով պայմանավորված (հաճախ նաև ինքնապաշտպանական) վարքը, ինչը սովորաբար կարող է հանգեցնել գործընկերության դադարեցմանը կամ, առնվազն, անարդյունավետ հաղորդակցման:

Ուստիկանության շենքում և դրանից դուրս երեխայի անվտանգության երաշխիքների ստեղծում (այս մասին հաջորդիվ՝ առավել մանրամասն հաջորդ գլուխներում): Առաջին դեպքում, անհրաժեշտ է հարցազրույց վարելու հմտություններ այնպես, որ երեխան իրեն զգա ապահով ու անվտանգ (օրինակ՝ հարցազրույցի համար նախատեսված սենյակ, հնարավոր բռնության ենթարկողից անջատ պայմաններում հարցազրույց և այլն): Երկրորդ դեպքում, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել երեխային բռնության միջավայրից, առնվազն ժամանկավորապես, հեռու պահելու ուղղությամբ (անհրաժեշտության դեպքում, ուղղորդելով համապատասխան ծառայություններ մատուցող համայնքահեն կամ այլ կազմակերպություններ):

Անհրաժեշտ է հնարավորություն տալ երեխային կիսվել իր մտավախություններով, կարծիքով ու վերաբերմունք հայտնել իրողության, ընթացակարգերի և այլ երևույթների վերաբերյալ: Անկախ այն հանգամանքից, թե ինչ պատճառով է երեխան առնչվել օրենքին (դիցուք՝ ուստիկանությանը), նա պիտի հնարավորինս մանրամասնորեն տեղյակ լինի, թե ինչու է ինքը գրուցում ուստիկանի հետ (ինչու է կանչվել կամ եկել), ինչ հնարավոր զարգացումներ, քայլեր են հետևելու ուստիկանի կողմից, ինչպիսի ընթացակարգեր կան և մոտավոր ինչ տևողությամբ են ընթանալու գործընթացները: Ավելին, երեխային անհրաժեշտ է հնարավորություն տալ կիսվել իր պատկերացումներով, դժգոհություններով ու հնարավոր մտահոգություններով ինչպես կասկածվող իրողության (օրինակ՝ դասընկերոջը ծեծելու կամ հոր

կողմից ծեծվելու և այլն), այնպես էլ՝ դատավարական հնարավոր ընթացակարգերի վերաբերյալ (օրինակ՝ դատարանում հանդես գալու մտահոգություն, բակ վերադառնալու մտավախություն և այլն):

Այսպիսով, անչափահասների արդարադատությունը երեխայի իրավունքների, երեխայի պաշտպանության ու արդարադատության համակարգերի միասնության «ծնունդ է», որի առանցքում երեխայի լավագույն շահն է՝ արդարադատության իրականացման գործընթացում: Ստեղծված նորմերն ու կանոններն ուղենիշ են այն բանի, թե ինչպես վերաբերվել երեխային, երբ նա որևէ կերպ առնչվել է օրենքին: Այս իմաստով, անչափահասների արդարադատության համակարգն առավելապես հետամուտ է իրավախախտումների կանխարգելմանը և հանցավորության նվազ հնարավորություններով միջավայրի ստեղծմանը, քան իրավախախտի վնասագերծմանն ու պատժելուն:

1.2. Անչափահասների արդարադատության համակարգը անչափահասների հանցավորության կանխարգելման ենթատեսքում

Միջազգային փաստաթղթերի և հատկապես անչափահասների արդարադատության համակարգին առնչվող նորմերն ու կանոնները առավելապես միտված են անչափահասին ու նրա միջավայրի բարեփոխմանը, պատիժը թողնելով որպես ծայրահեղ միջոց:

Դրա համար գոյություն ունեն մի քանի պատճառներ: Մասնավորապես.

Համարվում է, որ երեխաների՝ իրենց գործողությունների համար պատասխանատվության մակարդակը ավելի ցածր է, և նրանց վերագրվող պատասխանատվության աստիճանը մեծանում է նրանց մեծանալուն զուգահեռ: Մեկ այլ հիմնավորմամբ, ի տարբերություն չափահասների, իրավախախտում կատարած երեխաներն ավելի շատ են ընդունակ փոփոխվել և տարբեր վարքագծային դրսևորումներ յուրացնել: Մյուս մոտեցումն այն է, որ օրենքի հետ բախվող կամ առնչություն ունեցող (այդ

թվում՝ իրավախախտում կատարած, վկա, զոհ/տուժող) երեխաները և երիտասարդները հավանաբար ավելի խոցելի են չարաշահման և վատ վերաբերմունքի նկատմամբ, և դժվար թե կարողանան ինքնուրույն պաշտպանվել մեծահասակների վարքից ու «մեծահասակների կողմից ընդունված» օրենքներից:

Այս է պատճառը, որ անչափահասների արդարադատության համակարգն առանձնակի ուշադրություն է դարձնում հատկապես իրավախախտումների կանխարգելմանը⁶: Այսպես, «Պեկինյան կանոնները» ուղեցույց են պետությունների համար, թե ինչպես պաշտպանել երեխաների իրավունքները և հարգել նրանց կարիքները անչափահասների արդարադատության համակարգերը մշակելիս: Սա առաջին փաստաթուղթն է, որ խրախուսում է ստանդարտ իրավական ընթացակարգերի և պաշտոնական քննության փոխարեն, համայնքային ծրագրերի, ցանկացած պետական մարմնում առավելագույնս երեխայի շահերից ելնելով քննության իրականացումը: Սույն «Կանոնների» 12-րդը նախատեսված է հատուկ ուստիկանության համար, համաձայն որի՝ «...իրենց պարտականությունները լավագույն ձևով կատարելու համար, ուստիկանության այն ծառայողները, որոնք հաճախակի կամ բացառապես զբաղվում են անչափահասների հարցերով, կամ հիմնականում ներգրավված են անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների կանխարգելման մեջ, պետք է հատուկ հրահանգավորվեն և վերապատրաստվեն»⁷: Ուստիկանական մասնագիտացված ստորաբաժանումների հիմնական դերը ոչ միայն սույն փաստաթղթերում շարադրված կոնկրետ սկզբունքների պահպանումն ապահովելն է, այլև անչափահասների կողմից կատարված հանցագործությունների կանխումն ու դրանց դեմ պայքարի ավելի արդյունավետ կազմակերպումը, ինչպես նաև անչափահաս իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի բարելավումը: Ընդհանուր սկզբունքներով «Պեկինյան կանոններն» անդրադառնում են նաև համայնքին ու հասարակությանը՝ շեշտադրելով անչափահասի և նրա ընտանիքի բարե-

⁶ Թեպետ, համակարգն անդրադառնում ու կարևորում է նաև ազատությունից զրկելու ու ազատագրվման վայրերում պահելու պայմաններին ու ընթացակարգերին, երեխաների իրավունքների պաշտպանությանն ու այլ կարևոր հարցերի ևս:

⁷ «Պեկինյան Կանոններ», Կանոն 12.1

կեցությունը, համայնքային այնպիսի պայմանների ապահովմանը, որը կնպաստի անչափահասների բովանդակակալից կյանքին և այլն⁸:

Հանցավորության կանխարգելման վերաբերյալ կան բազմաթիվ մոտեցումներ և սահմանումներ: Մասնավորապես, Եվրոպական Պրոբացիոն Կանոնների համատեքստում հանցավորության կանխարգելումը «քրեական արդարադատության համակարգում ընդգրկված գերատեսչությունների և իրավասու այլ գործակալությունների կողմից իրականացվող քաղաքականությունը և գործունեությունն է, որի նպատակն է՝ կանխարգելել (կամ, ինչն առավել հավանական է՝ նվազեցնել) հանցավորությունը»⁹:

Նույն կանոններում նաև սահմանվում է կրկնահանցավորության կանխումը, որն «այն գործընթացն է, երբ քրեական արդարադատության ոլորտի գերատեսչությունների ներգրավմամբ կամ առանց դրա, իրավախախտները դադարեցնում են իրենց հակասօրինական գործողությունները և հանցավորությունից զերծ կյանք են վարում՝ նրանց մարդկային կապիտալը (ինչպիսիք են՝ անձնական հմտություններն ու գիտելիքները) և սոցիալական կապիտալը (ինչպիսիք են՝ զբաղվածությունը, ընտանիքը, սոցիալական առնչությունները/փոխհարաբերություններն ու կապերը և քաղաքացիական հասարակության ներգրավումը) զարգացնելու միջոցով»¹⁰:

ՄԱԿ-ի հաջորդ՝ «Անչափահասների հանցավորության կանխարգելման՝ ուղենիշներ»ի (Ռիադյան ուղենիշներ) համաձայն՝ անչափահասների հանցավորության կանխարգելումը «... կարող է կանխարգելվել երիտասարդներին օրինական և սոցիալական տեսակետից օգտակար գործունեության մեջ ներգրավելու և

⁸ «Պեկինյան Կանոններ», Ընդհանուր սկզբունքներ, «1. Անդամ երկրներն իրենց համապատասխան ընդհանուր շահերից ելնելով՝ պետք է ձգտեն նպաստել անչափահասի և նրա ընտանիքի բարեկեցությանը»: «2. Անդամ երկրները պետք է ձգտեն ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք անչափահասի համար համայնքում բովանդակակալից կյանք ապահովելու հնարավորություն կտան, ինչը կխթանի հանցագործություններից և իրավախախտումներից առավելագույնս զերծ անձնական զարգացման և կրթության գործընթացը կյանքի այնպիսի փուլում, երբ տղան կամ աղջիկը առավել հակված են իրավախախտ վարքագծի»:

⁹ Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի կողմից հաստատված 2010/1 հանձնարարականը «Եվրոպական Պրոբացիոն Կանոնների» վերաբերյալ, 2-րդ հավելված՝ օգտագործված տերմիններ

¹⁰ Նույն տեղում

հասարակության ու կյանքի հանդեպ մարդասեր վերաբերմունք սերմանելու միջոցով:¹¹

Կանխարգելումը դիտարկվում է ոչ միայն որպես բացասական իրավիճակների հաղթահարման, այլև բարեկեցությանը և բարգավաճմանն օժանդակող դրական միջոց: Այն պահանջում է առավել պրոակտիվ մոտեցում, որին պետք է ուղղված լինեն ողջ հասարակության ջանքերը՝ ներառյալ ընտանիքի, համայնքի, լրատվամիջոցների, իսկ կրթությունը, սոցիալական քաղաքականությունը, օրենսդրությունն ու անչափահասների արդարադատությունը¹² պետք է ակտիվորեն նպաստեն նրա իրականացմանը:

Այս իմաստով, իզուր չէ, որ աշխարհում մոտ 80 պետություններ որդեգրել են հենց քրեական գործերով արտադատական լուծումների (Diversion) գործընթացը: Գործընթաց, որ հնարավորինս կանխում է անչափահասի շփումը քրեական արդարադատության բոլոր օղակների հետ¹³: Այս շրջանակներում կիրառվում են ոլորտում հայտնի վերականգնողական արդարադատության հիմնական սկզբունքները, որոնց համաձայն իրավախախտում կատարողի գիտակցությանն է հասցվում այն փաստը, որ իր արարքը վնաս է հասցրել ոչ միայն կոնկրետ գործով տուժողին, այլ ողջ համայնքին: Հետևաբար, հանցագործությամբ հասցված վնասների վերացման գործընթացին պետք է մասնակցություն ցուցաբերի ոչ միայն վնաս հասցնող, այլև տուժող կողմը, որին կցուցաբերվի անհրաժեշտ օգնություն և պահանջների հնարավոր (այդ թվում՝ խրախուսական) բավարարում: Վերականգնողական արդարադատության առանձնահատկություններից է նաև նրա նպատակային նշանակությամբ կիրառությունը: Վերականգնողական ծրագրերի նպատակները սահմանված են տարբեր կերպ, սակայն հիմնականում պարունակում են հետևյալ էական տարրերը.

- Տուժողներին օժանդակություն ցուցաբերել, խրախուսել նրանց՝ արտահայտել իրենց կարիքներն ու պահանջները և նրանց ներգրավել որոշում ընդունելու գործընթացին:

¹¹ Անչափահասների հանցավորության կանխարգելման ՄԱԿ-ի ուղենիշների (Ռիադյան ուղենիշներ), մաս 3՝ ընդհանուր կանխարգելումը

¹² ՄԱԿ ուղենիշները անչափահասների հանցավորությունը կանխելու վերաբերյալ (Ռիադյան ուղենիշներ), 3-րդ գլուխ

¹³ UN Office on Drugs and Crime, Handbook on Restorative Justice Programmes

- Վերականգնել հանցագործության հիմքով վնասված սոցիալական հարաբերությունները՝ համաձայնության գալու միջոցով
- Դատապարտել քրեական վարքագիծը՝ որպես անընդունելի և վերականգնել սոցիալական արժեքները: Հարկ է նշել, որ դարեր շարունակ վերը նշվածը քրեական իրավունքի ընդհանուր նպատակներից մեկն է հանդիսացել
- Բացառել կրկնահանցագործության դեպքերը և հանցագործներին ներգրավել բնականոն հասարակական կյանքում: Ըստ էության՝ հաշվի է առնվում հանցագործի կողմից ոչ միայն անցյալում դրսևորված վարքագիծը, այլ հնարավոր կանխատեսումներ արվում նրա հետագա վարքագծի վերաբերյալ:
- Բացահայտել հանցածին վարքագիծ ծնող հանգամանքները և դրանց մասին տեղեկացնել հանցագործությունների թվի կրճատման համար պատասխանատու մարմիններին:
- Գոյություն ունեն սուբյեկտի կազմով միմյանցից տարբերվող վերականգնողական գործընթացների զանազան տեսակներ: Օրինակ՝ որոշ երկրներում վերականգնողական արդարադատությունը կիրառվում է ոստիկանության կողմից: Ոստիկանությունն ինքն է իրականացնում վերականգնողական գործընթացը, իսկ որոշ դեպքերում ոստիկանությունը գործն ու կողմերին ուղղորդում է համապատասխան ծրագիրը իրագործողներին¹⁴:

Այսպիսով, միջազգային փաստաթղթերի մակարդակում շեշտը դրվում է ոչ միայն և ոչ այնքան կոնկրետ հանցավորության դեմ պայքարի և հանցագործության մեջ կասկածվողին «վնասազերծելու» վրա, այլ՝ միջավայրի փոփոխության: Շեշտադրվում է անչափահասի ներքին ու արտաքին ռեսուրսների զարգացումը (անչափահաս, ընտանիք, կրթություն, համայնք), պայմանների բարելավումը, որի արդյունքում, առնվազն, նվազում է իրավախախտման համար նպաստավոր պայմանների ակտիվությունը:

¹⁴ Enhancing Criminal Justice Reform , Including Restorative Justice, Workshop, 2002, Bangkok

Պարզագույն հետևություն, որ կարելի է անել միջազգային փաստաթղթերի վերլուծությունից¹⁵, հանգում է նրան, որ.

Օրենքը խախտելու մեջ կասկածվող կամ դրա համար դատապարտված անչափահասների նկատմամբ վերաբերմունքը պետք է փարբերվի նույն կարգավիճակում գտնվող չափահասների նկատմամբ վերաբերմունքից

(այս մասին առավել մանրամասն կխոսվի իրավախախտների և օրենքի հետ առնչություն ունեցողների հետ աշխատանքի վերաբերյալ գլխում):

Թեպետ քրեական պատասխանատվության տարիքը չլրացած, բայց իրավախախտում կատարած երեխաները չեն ենթարկվում քրեական պատասխանատվության, սակայն համարվում է, որ նրանք ունեն սոցիալական, համայնքային ու համալիր աջակցության կարիք:

Անչափահասների մասին օրենսդրությունում շեշտը պետք է դրվի ավելի շուտ երիտասարդ անձի բարեկեցության և վերականգնման, քան պատժիչ մոտեցման վրա:

Պետք է ջանքեր գործադրվեն անչափահասի՝ քրեական անցյալ ունեցողի պիտակավորումից խուսափելու համար, քանի որ սա կարող է լրջորեն խոչընդոտել սոցիալական վերաինտեգրմանը:

Ստուգիչ հարցեր

1. Ինչպե՞ս կբնութագրեք անչափահասների արդարադատության համակարգը:
2. Ինչպիսի՞ նորմերից ու կանոններից է կազմված անչափահասների արդարադատության համակարգը:
3. Ի՞նչ հիմնական սկզբունքներ են ընկած անչափահասների արդարադատության հիմքում:
4. Ինչպե՞ս է երեխայի լավագույն շահը ներկայացվում անչափահասների արդարադատության համակարգում:

¹⁵ Սույն բաժնում ներկայացված փաստաթղթերն ամբողջական վերլուծության չեն ենթարկվել՝ նյութն ավելորդ չձանրաբեռնելու նկատառումով: Սակայն, դասընթացի ընթացքում, խիստ ցանկալի է բավարար ժամանակ տրամադրել ու ներկայացնել բոլոր փաստաթղթերի յուրահատկությունն ու Ոստիկանական աշխատանքում դրանց կարևորությունը՝ առանձին-առանձին:

5. Ինչպե՞ս է անչափահասների արդարադատության համակարգը խաչվում վերականգնողական արդարադատությանը:
6. Ինչպիսի՞ բովանդակություն ունի վերականգնողական արդարադատությունը:
7. Ի՞նչ է հանցավորության ու կրկնահանցագործության կանխարգելումը միջազգային փաստաթղթերի ենթատեքստում:
8. Թվարկե՞ք անչափահասների արդարադատության համակարգը կազմավորող միջազգային փաստաթղթերը:

ԳԼՈՒԽ 2

ԵՐԵՒԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ոստիկանն իր գործունեության ընթացքում կամա թե ակամա առնչվում է երեխաների հետ: Երեխաները տարբեր տարիքային փուլերում կարող են տարբեր կերպ ընկալել աշխարհը, արձագանքել իրենց ուղղված խոսքին, շփվել մեծահասակի հետ:

Ստորև ներկայացված են երեխայի զարգացման տարիքային փուլերը և ոստիկանի գործունեության համար կարևոր յուրաքանչյուր փուլի առանձնահատկությունները:

1. Նորածնություն և մանկիկություն 0-1 տարեկան
2. Վաղ մանկություն 1-3 տարեկան
3. Նախադպրոցական տարիք 3-6 տարեկան
4. Կրտսեր դպրոցական տարիք 6-10 տարեկան
5. Դեռահասություն 10-14 տարեկան
6. Պատանեկություն 14-17 տարեկան
7. Դեռահասությանը բնորոշ վտանգներ
8. Թմրամիջոցները և դեռահասը
9. Ինքնասպանության վտանգը դեռահասության տարիքում
10. Ինչպևն խուսափել դեռահասությանը բնորոշ վտանգներից

2.1. Նորածնություն և մանկիկություն (ծննդից մինչև 1 տարեկան)

Երեխայի կյանքի առաջին տարվա ընթացքում այնպիսի փոփոխություններ են լինում, ինչպիսիք տեղի չեն ունենում նրա կյանքի հետագա ոչ մի տարվա ընթացքում: Փոքր երեխաները սողում են, նստում են, քայլում են և խոսում են, մնացած փոփոխությունները տեսնելն ավելի դժվար է: Բավական դժվար է իմանալ՝ ինչ է իրականում տեսնում, լսում կամ մտածում երեխան: Նորածին երեխայի մոտ գործում են բոլոր զգայարանները: Վեց օրական երեխաներն արդեն տարբերում են իրենց մոր հոտն այլ կանանց հոտերից:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ 4 ամսական երեխաները նախընտրում են նայել նոր առարկաների, իսկ դա նշանակում է, որ նրանք բավական լավ հիշում են նախկինները:

1 տարեկանում երեխան հասկանում է 10-20 բառ, կարող է արտաբերել 1 կամ ավել բառեր: Երեխաներն այս տարիքում դեռ չեն հասկանում առարկաների իրական նշանակությունը:

2.2. Վաղ մանկություն (1-3 տարեկան)

Նորածնության ավարտին մոտ երեխան մի փոքր ինքնուրույնություն և անկախություն է ձեռք բերում մորից:

Մեկուկես տարեկան երեխաների նկարած նկարները դժվար է նկար անվանել, ավելի շուտ դրանք խուճուճիկների են նման: Արդեն 3 տարեկանին մոտ նրանց նկարներում կարելի է նկատել իրական պատկեր հիշեցնող ձևեր: Երեք տարեկանից սկսած նրանց արած նկարներում կարելի է նշմարել մարդու պատկեր և հիմնականում գլխատանի, որտեղ բացի գլխի կլորակից նաև կան մանր դետալներ՝ աչքեր, քիթ, բերան: Այս տարիքի երեխաների նկարած նկարներին մասնագետները տալիս են որոշակի հոգեախտորոշիչ նշանակություն:

Մեկից-մեկուկես տարեկան գրեթե բոլոր երեխաները կարողանում են ինքնուրույն քայլել: Այս տարիքում դիտվում է երևակայության միայն տարրական ձևերը: Փոքրիկ երեխաներն ընդունակ չեն ինչ-որ բան հնարել կամ խաբել: Միայն 3 տարեկանին մոտ նոր նրանք կարողանում են ասել այն, ինչ իրականում գոյություն չունի: Այսինքն, այս տարիքում երեխայի խոսքերը հիմնականում այն է, ինչ նա տեսել կամ հասկացել է: Դա չի նշանակում, որ դա իրականությունն է, պարզապես դա երեխայի ընկալածն է:

Ուշադրությունն այս տարիքում ոչ կամաձին բնույթ է կրում: Այդ պատճառով շատ հեշտ է այս տարիքի երեխային շեղել մեկ գործունեությունից մեկ այլ գործողության՝ նրա ուշադրությունը տեղափոխելով: Սա է պատճառը, որ այս տարիքի երեխաները դյուրահավատ են և սովորաբար գնում են անձանոթ մեծահասակների հետ, երբ նրանց ինչ-որ բանով գայթակղում են: Նրանք շատ

արագ մոռանում են, թե ինչ տեղի ունեցավ քիչ առաջ և շեղվում մեկ այլ առարկայի ուղղությամբ:

Երկու տարեկանին մոտ բնականոն զարգացող երեխան հասկանում է մեծահասակի արտասանած գրեթե բոլոր բառերն ու հրահանգները: Նրանց խաղը դեռ լիովին պատկերում է իրականությունը. նրանք պարզապես կրկնօրինակում են այն:

Այս տարիքի վերջում սկսում են առաջ գալ սոցիալական հույզերը՝ ամոթը, հպարտությունը, մեղքի զգացումն ու կարեկցանքը: Սրանք էլ հենց պատճառ են հանդիսանում, որ երեխաները լռում են իրենց նկատմամբ կիրառված սեռական բռնությունների և ոտնձգությունների մասին, քանի որ ամաչում են, մեղքի զգացում են ունենում: Այս տարիքի վերջում որոշ երեխաներ արդեն հստակ գիտակցում են այդ գործողությունների բացասական բնույթը:

Այս տարիքում երեխան դեռ ընդունակ չէ ընտրություն կատարել և որոշում կայացնել: Բոլոր ցանկությունները հիմնականում միևնույն ուժն ունեն:

Այս շրջանում երեխաների մոտ սկսում են զարգանալ սեռական դերերի ընկալումը: Աղջիկներն ու տղաներն սկսում են իրենց տարբեր կերպ պահել:

Երկուսուկես-երեք տարեկանում երեխաները հասկանում են իրենց սեռական պատկանելիությունը:

2.3. Նախադպրոցական մանկություն (3-6 տարեկան)

Երեք տարեկան հասակը սահմանն է վաղ մանկության և նախադպրոցական տարիքի միջև և սեփական «ես»-ի տարբերակման ճգնաժամը:

Այս տարիքին բնորոշ է նեգատիվիզմը, քմահաճությունը, կամակորոությունը, ինքնակամությունը, բողոքն ու արժեզրկումը: Այս տարիքում են առաջին անգամ երեխաները հակառակվում և օգտագործում վատ խոսքեր: Դա յուրահատուկ մանկական ժամանցի է վերածվում:

Աստիճանաբար սկսում է զարգանալ ապերցեպցիան¹⁶:

¹⁶ Ապերցեպցիան մեր նախկինում ապրած և տեսած իրավիճակների մասին հիշողությունների ամբողջությունն է, որն ազդում է ներկայիս իրավիճակների ընկալման վրա:

Այս տարիքում երեխան հաճախ սխալ եզրահանգումներ է անում տեսածի և լսածի, հասկացածի վերաբերյալ: Ո՛չ այս տարիքից առաջ, ո՛չ էլ նրանից հետո, երեխան չի մտապահում այդքան հեշտությամբ, այդքան բազմազան ինֆորմացիա, որքան այս տարիքում:

Այս տարիքում երեխան կարող է բավական լայն և բազմաբովանդակ տեղեկություններ հաղորդել:

Երեք-չորսուկես տարեկանի հիշողությունը ոչ կամածին է: Չորս-վեց տարեկան երեխան արդեն կարողանում է պարզագույն պատճառական կապեր գտնել իրեն շրջապատող իրականության մեջ, հասկանում է, որ մեծահասակը չի կարող նորից դառնալ երեխա և այլն: Այս տարիքում, բացի յուրօրինակ մտահանգումներից, երեխաները նաև բավական օբյեկտիվ եզրակացություններ կարող են անել: Երբեմն երեխաները սխալ եզրահանգումներ են անում ասվածը սխալ հասկանալու պատճառով:

Նախադպրոցական տարիքը ստեղծագործականության տարիքն է: Այս տարիքում երեխաները կարող են հնարել պատմություններ և նույնիսկ հավատալ սեփական հորինվածքներին: Այս ընթացքում երեխան կարող է պատմել, որ իրեն դայակը պարտեզում ծեծել է, որ իր մայրիկն իրեն աստիճաններից ներքև գլորեց, բայց երեխան պետք է ինչ-որ տեղ տեսած և լսած լինի նույնիսկ այս հորինվածքները, օրինակ, սեռական բնույթի պատմություններ երեխան չի հնարի, եթե նման բաներ երբևէ չի տեսել կամ չի լսել:

Սեռի հոգեբանական յուրացումը և սեռական նույնացումը, որը երեխայի՝ իրեն աղջիկ կամ տղա զգալն է, ևս սկսվում է հենց նախադպրոցական տարիքում:

Նախադպրոցական տարիքի երեխան արդեն սկսում է յուրացնել հասարակության մեջ ընդունված էթիկական նորմերը:

Նախադպրոցական տարիքի երեխաներն ունեն բավական լավ զարգացած հուզական և մեխանիկական հիշողություն և կարող են շատ տեղեկություններ տրամադրել, սակայն պետք է զգույշ լինել, քանի որ երեխան երևակայելու և տարբեր պատմություններ հորինելու հակում կարող է ունենալ: Նման հակման առկայությունը հնարավոր է պարզել նրա ծնողների հետ նախնական հարցազրույցի ժամանակ նրանց կողմից տրամադրված ինֆորմացիայից:

2.4. Կրտսեր դպրոցական տարիք (6-10 տարեկան)

Սա մանկության այն շրջանն է, երբ երեխաները ձեռք են բերում տարաբնույթ կարողություններ և հմտություններ՝ կարդալուց և թվաբանությունից մինչև գնդակով խաղալն ու պարը, և այլն:

Ուսումը նրանց համար կարևոր գործունեություն է: Կարևոր է տեղյակ լինել, որ կրտսեր դպրոցական տարիքում երեխայի համար հիմնական նորությունը ճանաչողական գործընթացների կամային կարգավորումն է:

Վեց-յոթ տարեկան երեխան կորցնում է իր մանկական անմիջականությունը: Եթե նախադպրոցական տարիքում երեխան ցույց է տալիս իր բոլոր ապրումները՝ անկախ նրանից, թե ում նկատմամբ է դրանք զգում, ապա կրտսեր դպրոցական տարիքի երեխան կարող է թաքցնել իր ապրումները՝ ելնելով անձի հեղինակությունից կամ դիրքից:

Կրտսեր դպրոցական տարիքում մտածողությունը գերակշռող գործառույթ է դառնում: Երեխան կարող է պատճառահետևանքային կապեր որոնել, տրամաբանական հետևություններ և եզրակացություններ կատարել: Պատկերավոր մտածողությունն այս տարիքում դեռևս մտածողության հիմնական տեսակն է: Երևակայությունը շարունակում է զարգանալ, սակայն այս տարիքում երեխան արդեն հստակ տարբերում է սուտը ճշմարտությունից. մանկական երևակայական սուտը, որը բնական էր 3-5 տարեկանում, այս փուլում արդեն նահանջում է: Կրտսեր դպրոցականի երևակայությանը հատուկ է նաև պարզ վերարտադրողականությունը, այսինքն նա կրկնում է այն, ինչ կա: Տարիքի հետ միասին վերարտադրողական երևակայությունը պետք է վերածվի ստեղծագործականի: Ի տարբերություն նախադպրոցականների՝ կրտսեր դպրոցականները փոքր ինչ ավելի ուշադիր են: Նրանք արդեն կարողանում են կամային կերպով ուշադրությունը կենտրոնացնել անհետաքրքիր նյութի վրա, սակայն դեռ գերակշռում է ոչ կամաձին ուշադրությունը: Ուսումնական գործունեությունն առաջնային է այս տարիքում: Կրտսեր դպրոցական տարիքի ողջ ընթացքում հասակակիցների հետ շփումը կարևոր դեր է խաղում երեխայի անձի և սոցիալական զարգացման վրա: Այս տարիքում սկսում

են ձևավորվել նրա ընկերական հարաբերությունները, և երեխայի մոտ ձևավորվում են ընկերության մասին նախնական պատկերացումներ: Նախադպրոցական տարիքի երեխան սիրում է ինքն իրեն, բայց նրա մոտ դեռ ձևավորված չէ ինքնագնահատականը կամ իրական ինքնասիրությունը: Երեխայի ինքնագնահատականը ձևավորվում է դպրոցական տարիքում: Այս տարիքում ինքնագնահատականը բացառապես կամ առավելապես կախված է երեխայի դպրոցական հաջողություններից: Յոթից ութ տարեկան երեխայի համար արդարացի է ուրիշների հետ վարվել այնպես, ինչպես նրանք են վարվում իր հետ:

Ութից տասնմեկ տարեկան երեխան ճիշտ է համարում արդարացնել մեծահասակների սպասելիքները:

Դպրոցական առաջին տարիներին, աշակերտի ներքին դիրքորոշում ունենալով՝ նա ցանկանում է սովորել և լավ սովորել, այդ պատճառով դասարանում նրա համար որոշիչ դեր ունեցողը ուսուցիչն է: Սովորաբար այս տարիքում երեխաներն ընդօրինակում են ուսուցչի վերաբերմունքը և կրկնօրինակում նրա վարքը: Դա արտահայտվում է դասընկերների նկատմամբ վերաբերմունքում: Երեխաները չեն սիրում և հալածում են այն երեխային, ում չի սիրում ուսուցիչը:

Ոստիկանի գործունեության ընթացքում այս տարիքի երեխաների հետ աշխատանքն իրականում կարող է դժվարանալ այն առումով, որ կրտսեր դպրոցականն այլևս մանկական անմիջականությամբ չի մոտենում իրավիճակին, ինչպես նաև, մեծահասակների կարծիքն անչափ կարևորելով, կարող է կեղծել տեղեկությունները:

2.5. Միջին դպրոցական տարիք, դեռահասություն (10-14 տարեկան)

Դեռահասությունը կապված է երեխայի օրգանիզմի վերակառուցման և սեռական հասունացման հետ: Ֆիզիկական և հոգեբանական զարգացման ուղիները զուգահեռ չեն ընթանում և այս տարիքի սահմանները բավական անորոշ են: Որոշ երեխաներ հատում են դեռահասության սահմանը 11 տարեկանում, մյուսները՝ 13-ում: Սովորաբար այս տարիքային փուլն ամբողջությամբ

դժվար է անցնում և երեխայի, և նրան շրջապատող մեծահասակների համար: Այդ պատճառով դեռահասության տարիքն անվանում են ձգձգված ճգնաժամ:

Սեռական հասունացումը կապված է օրգանիզմում տեղի ունեցող հորմոնալ փոփոխությունների հետ: Աճի և սեռական հորմոնների ակտիվացումն ու բարդ համագործակցությունն առաջացնում է ֆիզիկական և ֆիզիոլոգիական զարգացում: Ավելանում է երեխաների քաշն ու հասակը, ընդ որում աղջիկների մոտ այդ փոփոխություններն սկսում են 2 տարի ավելի շուտ, քան տղաների: Տղաների մոտ այդ գործընթացները ձգվում են ընդհուպ մինչև 17 տարեկանը: Բացի սեռային տարբերություններից, այստեղ նկատվում են նաև փոփոխությունների անհատական տարբերություններ:

Անատոմիա-ֆիզիոլոգիական փոփոխությունները ֆոն են ստեղծում հոգեբանական ճգնաժամի համար:

Մարմնի կտրուկ աճն անհամաչափ է տեղի ունենում. սկզբում մեծահասակի գլխի չափերին է հասնում գլուխը, ապա դաստակներն ու ոտնաթաթերը, ապա երկարում են վերջույթները, և նոր դրանից հետո իրանն է աճում: Կմախքի ինտենսիվ աճն առաջ է ընկնում մկանների աճից, այս ամենը բերում է մի տեսակ մարմնի անհամաչափության, որը դրսևորվում է դեռահասության «անտաշության»:

Երեխաները հաճախ իրենց այս շրջանում ոչ ճարպիկ և անշնորհք են զգում:

Ներքին փոփոխություններում կարևորագույնը հորմոնալ փոթորիկն է, որը հանգեցնում է հուզական ֆոնի կտրուկ փոփոխությունների, անհավասարակշռվածության: **Սեռական հասունացումը դեռահասության կենտրոնական հոգեֆիզիոլոգիական փոփոխությունն է հանդիսանում:** Առաջանում են երկրորդական սեռական նշանները՝ սեռական հասունացման արտաքին նշանները, որոնք կրկին տարբեր երեխաների մոտ տարբեր ժամանակ են ի հայտ գալիս: Փոխվում է տղաների ձայնը, որոշների մոտ կտրուկ ընկնում է ձայնի տեմբը, ժամանակ առ ժամանակ փոխարինվելով բարձր նոտաներով, որն ի դեպ շատ ցավոտ է լինում նրանց համար: Ումանց մոտ այդ ձայնի կտրվելն ավելի նուրբ ու դանդաղ է տեղի ունենում և գրեթե աննկատ է անցնում:

Արագ աճի հետ կապված դժվարություններ են առաջանում գլխուղեղի արյան շրջանառության, սրտի և թոքերի գործունեության հետ կապված: Այդ պատճառով դեռահասների համար բնորոշ է անոթային տոնուսի կտրուկ տատանումներ: Արագ աճող երեխան կարող է ժամեր շարունակ գնդակով խաղալ կամ պարել բացարձակ որևէ ծանրաբեռնվածություն չզգալով, բայց միևնույն ժամանակ կարող է հարաբերականորեն հանգիստ վիճակում ծայրաստիճան հոգնածություն զգալ: Առույգությունը, թարմությունն ու հետաքրքրությունը փոխարինվում են ջարդվածության, տխրության և լիարժեք պասիվության զգացմամբ:

Մեծահասակների համար կարևոր է հասկանալ, որ երեխան անընդհատ ստիպված է ապրել իր մարմնում տեղի ունեցող ֆիզիկական և ֆիզիոլոգիական փոփոխությունները, դրանց հետ կապված անհարմարությունները, օրգանիզմում տեղի ունեցող «հորմոնալ փոթորիկը»: Դեռահասների մոտ սեռական հորմոններն ավելի շատ են արտադրվում, քան հասուն մարդկանց մոտ: Երանց մոտ անընդհատ ակտիվացած է մակերիկամների գործունեությունը, որն օրգանիզմի գործունեությունը պահում է լարված, սթրեսային իրավիճակներում, ապահովում է օրգանիզմի ուժերի մոբիլիզացումը դժվար իրավիճակներում: Դեռահասները գրեթե անընդհատ գտնվում են սթրեսային վիճակում:

Դեռահասը կարողանում է վերացարկվել կոնկրետ ակնառու նյութից և դատողություններ անել մաքուր խոսքային ձևով: Տեսական մտածողության զարգացումը թույլ է տալիս դեռահասին վերացական գաղափարներ վերլուծել, դատողություններում գտնել սխալներն ու տրամաբանական հակասությունները:

Ինչպես մանկական տարիքում խաղն է կարևոր, այնպես էլ այս տարիքում երևակայելը, երազելն ու տարբեր իրավիճակներ մտքում խաղարկելը: Սա կարող է երբեմն դուրս գալ իր սահմաններից և վերածվել ստախոսության, սակայն գիտակցաբար:

Դեռահասության շրջանը հագեցած է շատ սուր ներքին խնդիրներով ու կոնֆլիկտներով, այդ պատճառով երևակայությունը գալիս է օգնելու բուռն հուզական կյանքին:

Առաջատար գործունեությունն ինտիմ-անձնական շփումն է հասակակիցների հետ: Դեռահասը կարիք ունի գաղտնիքներ ունենալու, թաքուն ու մտերմիկ ընկերություն անելու:

Դեռահասության տարիքում առաջանում է **հասունության սուբեկտիվ զգացողություն, որը նրան թույլ է տալիս համարձակ քայլերի գնալ:**

Շնորհիվ ինտենսիվ աճի՝ դեռահասության շրջանում ուժեղ հետաքրքրություն է առաջանում սեփական արտաքինի հանդեպ: Դեռահասի կողմից իր ֆիզիկական պատկերի չափազանց կարևորումը բերում է նրան, որ երեխան շատ սուր է ապրում իր արտաքինի թերությունները՝ իրական, թե երևակայական: Մարմնի մասերի անհամաչափությունը, շարժումների անփութությունը, դիմագծերի ոչ այնքան ճիշտ լինելը, մանկական մաքրությունը կորցնող մաշկը, ավելորդ քաշը կամ չափից դուրս նիհարությունը տխրեցնում և հաճախ հանգեցնում են թերարժեքության զգացման, ինքնամփոփության, երբեմն նույնիսկ ներոզի: Այս տարիքում հաճախ հանդիպում են նյարդային անորոշության դեպքերը: Երեխայի ֆիզիկական պատկերի և ինքնագիտակցության վրա ընդհանուր առմամբ ազդում է սեռական հասունացման տեմպը: Այն երեխաները, որոնք ուշ են հասունանում, ավելի անբարենպաստ պայմաններում են հայտնվում, իսկ արքեւերացիան ավելի բարենպաստ պայմաններ է ստեղծում անձի զարգացման համար: Աղջիկները, որոնք արագ են զարգանում, ավելի լավ են իրենց զգում, ավելի ինքնավստահ են իրենց պահում, սակայն տղաների համար սեռական հասունացման տեմպերը շատ ավելի կարևոր են և ավելի խորն են ապրում այս ոլորտում տեղի ունեցող բոլոր փոփոխությունները:

Այս տարիքում դեռահասներն իրենց անընդհատ զգում են միլիոնավոր հայացքների ներքո, նրանց թվում է, թե բոլորն իրեն են նայում, նույնիսկ փողոցի անձանոթ անցորդները: Այդ սուբեկտիվ զգացողությունը նրանց ավելի խոցելի է դարձնում:

Դեռահասների մոտ սկսում են դրսևորվել անձի կանացի կամ տղամարդկային հատկանիշներ: Հակառակ սեռի հանդեպ հետաքրքրությունն այս տարիքում դրսևորվում է սկզբում ոչ ադեկվատ ձևով, ագրեսիվ դրսևորումներով, սակայն փոքր ինչ ուշ, հետաքրքրության ավելացմանը զուգընթաց, կարող է դրսևորվել կեղծ անտարբերություն, ամոթխածություն: Ավագ դեռահասների մոտ արդեն կայանում են ադեկվատ հարաբերություններ:

Դեռահասները մեծահասակներից անկախանալու և ազատվելու ցանկություն են ունենում, և նրանց գրեթե բոլորի ուսումնական առաջադիմությունն ընկնում է:

Առաջանում է դեռահասներին բնորոշ բարոյական «կողեքս», որով նրանք սկսում են կառավարել սեփական վարքն ու առաջնորդվել հասակակիցների հետ հարաբերություններում: Հետաքրքիր է, որ դեռահասության բարոյական «կողեքսը» ինտերնացիոնալ է, ինչպես Ա. Դյումայի «Երեք հրացանակիրները» վեպը, որը համարվում է դեռահասության վեպ և նրա կարգախոսը «բոլորը մեկի համար, մեկը՝ բոլորի»: Այդ բարոյական «կողեքսի» կամ ընկերական շփման կանոնների մեջ մտնում են փոխադարձ աջակցությունը, սատարումը, անհրաժեշտության դեպքում օգնությունը, վստահությունը ընկերոջ նկատմամբ, գաղտնապահությունը, հուզական հարմարավետությունը, ապահովությունը շփման մեջ, ընկերոջ ունեցած այլ հարաբերությունները չքննադատելը, նրա ինքնուրույնությունն ու ներքին կյանքը հարգելը և այլն:

Դեռահասի հասունության զգացումը առաջին հերթին արտահայտվում է նրա ընդգծված ցանկությամբ, որ բոլորը՝ մեծահասակներն ու հասակակիցները, իրեն վերաբերվեն, ինչպես մեծի: Նա մեծահասակների հետ ձգտում է հավասարության և իր տեսակետը պաշտպանելու համար նրանց հետ գնում է կոնֆլիկտների: Երեխայի մեծահասակության զգացումն արտահայտվում է անընդհատ ինքնուրույնության ձգտման մեջ, իր կյանքի որոշ ոլորտներ ծնողների հսկողությունից և մասնակցությունից զերծ պահելու ցանկության մեջ:

Նա կարծես կորցնում է իր «Ես»-ը, որը սկսում է փնտրել «Մենք»-ի մեջ, և այդ «Մենք»-ն այս տարիքում հանդիսանում են հասակակիցները: Ընկերոջ պահանջն այս տարիքում առաջնայիններից մեկն է. ընկերոջ մեջ դեռահասը տեսնում է իր «Ես»-ի արտացոլումը: Ընկերության միջոցով դեռահասը ճանաչում է ոչ միայն ինքն իրեն, այլև ձևավորում իր սեփական արժեքային համակարգն ու բարոյական սկզբունքները: Շփում-գործունեության միջոցով ձևավորվում է երեխայի անձը, բառի լայն իմաստով, նրա ինքնագիտակցությունը և մյուս նորագոյացությունը՝ սոցիալական գիտակցությունը:

2.6. Պատանեկություն, ավագ դպրոցական տարիք (14-17 տարեկան)

17 տարեկան հասակն անցումային շրջան է հանդիսանում դեռահասության և երիտասարդության միջև: Այս տարիքում սրվում է սեփական արժեքների կարևորությունն ու նշանակությունը, չնայած երեխաները շատ հարցերում դեռ ենթակա են արտաքին ազդեցություններին:

Պատանեկության կարևորագույն ձեռքբերումը կենսական պլանների ձևավորումն է:

Նրանց համար, ովքեր դժվար են անցնում 17 տարեկանի ճգնաժամը, հատուկ են բազմատեսակ վախեր: Սեփական անձի, ծնողների և հարազատների առաջ պատասխանատվության զգացումը, իրական ձեռքբերումներն այս շրջանում մեծ բեռ են պատանու համար: Սրան գումարվում է նաև նոր կյանքի, սխալվելու հավանականության, բուհ ընդունվելու, տղաների մոտ բանակ գնալու վախը: Բարձր տագնապայնությունն ու այդ ֆոնի վրա առաջ եկող վախերը կարող են ներուտիկ արձագանքների պատճառ հանդիսանալ:

Այս տարիքային փուլն անձի կայունացման, կայուն աշխարհայացքի ձևավորման, կյանքում սեփական տեղի և դիրքի հստակեցման, ապագային ուղղված շրջանն է:

Այս փուլում ավարտվում է ֆիզիկական, սեռական զարգացման և հասունացման գործընթացը, որը սկսվել էր դեռահասության ընթացքում: Պատանու մարմինը ստանում է հասուն ֆիզիկական կառուցվածք, հորմոնալ համակարգը կարգավորվում է և ստանում բնականոն ընթացք: Մարմնի կառուցվածքը ստանում է իր հասուն, համաչափ ձևը, դեռահասության տարիքին բնորոշ ֆիզիկական կերպարի անհամաչափությունները վերանում են:

Ինտելեկտուալ զարգացումն ընթանում է աշխարհի և կյանքի մասին գիտելիքների կուտակմամբ և համակարգմամբ: Ի տարբերություն դեռահասի, որը աշխարհաճանաչման մեջ ելնում է ինքն իրենից՝ առաջին հերթին հենվելով սեփական ապրումների վրա, պատանին վերադառնում է ինքն իրեն և տալիս աշխարհայացքային հարցեր. «Ո՞վ եմ ես, և ի՞նչ տեղ եմ զբաղեցնում այդ համակարգում» և այլն:

Մաքսիմալիզմն ու կատեգորիկությունը հատուկ են ոչ միայն դեռահասության տարիքի մտածողությանը, այլև պատանեկությանը: Պատանեկության տարիքում անցում է տեղի ունենում արտաքին վերահսկումից դեպքի ներքին վերահսկում, ինքնավերահսկում:

Ինտենսիվ կերպով զարգանում է ինքնակարգավորումը, ուժեղանում է սեփական վարքի, հույզերի դրսևորումների վերահսկումը: Անկախ իրենց բնավորությունից և խառնվածքից, 16-17 տարեկան երեխաները, արտաքինից ավելի զուսպ և հավասարակշռված են երևում, քան 11-15 տարեկանները:

Պատանեկությանն առանձնահատուկ բնորոշ է էմպաթիան՝ ուրիշի ապրումների հասկացումն ու ուրիշի տեսանկյունից իրավիճակը ընկալելու կարողությունը:

Ինչպես մասնագիտական, այնպես էլ անձնային ինքնորոշումը դառնում է պատանեկության կարևորագույն նորագոյացությունը: Սա նոր ներքին դիրքորոշում է, որը ներառում է սեփական անձի գիտակցումը՝ որպես հասարակության անդամ, և այդ հասարակության մեջ սեփական դիրքի ընդունումը: Պատանիները խնդիր ունեն որոշելու, թե ինչ դեր է խաղում իրենց կյանքում կրոնը, ինչ վերաբերմունք ունեն իրենք հասարակության հանդեպ:

Իրական խորը սերն առաջին անգամ դրսևորվում է պատանեկության տարիքում: Այս ընթացքում սկսում է զարգանալ նաև անձի բարոյական կայունությունը:

Անցումային այս տարիքում հասակակիցների հետ շփումը դառնում է փոքր ինչ անկարևոր և առավել կարևորվում է մեծահասակների հետ շփումը:

2.7. Դեռահասությանը հատուկ խնդիրներ

Դեռահասության ամենավառ առանձնահատկություններից մեկն *անձնային անկայունությունն է*: Այն առաջին հերթին դրսևորվում է տրամադրության հաճախակի տատանումներում, աֆեկտիվ բռնկումներով:

Դեռահասներին բնորոշ է *բարոյական անկայունություն*: Երեխան և դեռահասը դեռ չունեն իրական բարոյականություն, և բարոյական նորմերը նրանց համար ինչ-որ արտաքին բան են

իրենցից ներկայացնում: Այդ կանոններին և նորմերին դեռահասների մեծ մասը հետևում է, որպեսզի արդարացնի ինչ-որ նշանակալի անձանց սպասելիքները՝ նրանց հետ լավ հարաբերությունները պահպանելու և նրանց կողմից խրախուսվելու համար. նա ամբողջովին կախված է արտաքին ազդեցություններից: Դեռահասներն իրենց համար տարբեր հասակակիցների խմբեր են փնտրում, որոնցում իրենք կարող են ընդգրկվել և փարատել անվստահությունն ու մեռակության տազնապը: Հաճախ վերջիններիս կարծիքը որոշիչ է հանդիսանում: Ընկերների հետ միասին դեռահասները կարող են այնպիսի քայլեր կատարել, որոնք ինքնուրույն երբեք չէին համարձակվի անել, և ապագայում էլ կարող են զղջալ արվածի համար:

Դեռահասներին նաև *անկայուն ինքնագնահատականն է* հատուկ: Դեռահասի ինքնագիտակցությունը շատ բաներում կախված է արտաքին ազդեցություններից:

Դեռահասի բնավորությունը և ձգտումները ևս *հակասական են*: Միևնույն դեռահասի վարքում կարող է դրսևորվել ուրիշների կողմից գնահատված և ընդունված լինելու ձգտումը՝ սեփական ինքնուրույնության և թերությունների ցուցադրման հետ միաժամանակ, ամաչկոտությունը՝ կապը կտրածության հետ, սենտիմենտալությունը՝ կոպտության հետ, զգացմունքային երազկոտությունը՝ չոր փիլիսոփայելու հետ: Դեռահասը ցանկանում է լինել այնպիսին, ինչպիսին բոլորն են, միևնույն ժամանակ ամեն կերպ փորձելով առանձնանալ բոլորից:

Դեռահասության անկայունության հետ է կապված այս տարիքում հաճախ հանդիպող սոցիալական խնդիրները՝ վաղ ալկոհոլացումը, տոքսիկոմանիան, թմրամոլությունը, դելինկվենտ վարքը, սուիցիդները:

Պարտադիր չէ, որ ոստիկանությունում կամ նարկոլոգիական դիսպանսերում հայտնված դեռահասներն անբարենպաստ ընտանիքներից լինեն: Լինում է, որ «դժվար» են դառնում նաև սիրված երեխաները, որոնց տանը «սերը չի պակասել», բայց նրանք անբավարարված են հասակակիցների կամ մեծահասակների հետ հարաբերություններից, իրենց անհաջողակ են համարում կամ ոչ բավարար չափով են ծանրաբեռնված իրական գործերով, և այլն: Դեռահասության խնդիրների պատճառները շատ

բազմազան են: Դրանցից մեկն ինքնահաստատվելու և տարբերվելու ցանկությունն է՝ զուգորդված համընդհանուր նորմերի և օրենքների հանդեպ բողոքով:

Բողոքը դեռահասներին բերում է մի շարք ոչ ֆորմալ խմբերին կամ շարժումներին անդամակցելուն: Բոլոր դեռահասները, որոնք ընդգրկվում են նման խմբերում և շարժումներում, սոցիալապես հարմարված չեն, նույնիսկ եթե ուղղակի ագրեսիա չեն դրսևորում:

Բողոքը դեռահասներին դրդում է տնից փախուստների կամ թափառաշրջիկության: Որոշ դեռահասներ իրենց համար ինչ-որ ռոմանտիկա են գտնում գիշերելու տեղ փնտրելու, սնունդ հայթայթելու և նմանատիպ այլ արկածների մեջ:

Առանձնահատուկ դժվար իրավիճակներում դեռահասների մոտ կարող է դրսևորվել սուիցիդալ վարք, առաջանալ մահվան մասին մտքեր, դրան համապատասխանող արտահայտություններ, սպառնալիքներ, լինեն ինքնասպանության փորձեր: Սուիցիդը հազվագյուտ է գիտակցական ընտրություն լինում, ավելի հաճախ հուսահատ քայլ է լինում գոյություն ունեցող խնդիրների համար ոչ մի լուծում չգտնելու արդյունքում: Ա. Ե. Լիչկոյի տվյալներով՝ դեռահասների միայն 10%-ն է իսկապես ցանկանում մահանալ, մնացածների՝ 90%-ի մոտ սուիցիդալ վարքը միայն «օգնության ճիչ է»¹⁷:

2.8. Թմրամիջոցները եվ դեռահասը

Ցավոք, այսօր տարածված խնդիր է ալկոհոլի ու թմրանյութերի օգտագործումը դեռահասության տարիքում: Նրանք այդպես վարվում են ավելի հաճախ մի քանի նպատակի հասնելու համար, օրինակ՝

- Հասակակիցների կողմից խմբի մեջ ընդգրկվելու,
- «Սառնարյուն» կամ ամեն ինչ տեսած երևալու,
- Հետաքրքրությունը բավարարելու,
- Տրամադրությունը փոխելու կամ սեռական հարաբերություններից ունեցած հաճույքը ուժեղացնելու համար:

¹⁷ Личко А.Е. Подростковая психиатрия. Пуководство для врачей. _ Изд. 2-е, доп. и перераб._Л.Медицина,1985_416 с.

իրականում թմրանյութերը կարող են՝

- Նվազեցնել դեռահասին շրջապատող միջավայրի ազդեցությունից առաջացած տագնապները,
- Ազատել ձանձրությանից՝ նոր զգացումներ, ապրումներ պարզևել,
- Ոչ բավարար քնի դեպքում ապահովել առույգություն:

Թմրանյութերի, ինչպես նաև նիկոտինի ու ալկոհոլի օգտագործումը դեռահասի՝ հասունության իր իրավունքի մասին հայտարարելու ձևերից մեկն է: Տվյալ դեպքում կոպիտ վարքի դրսևորումն ընկալվում է որպես տղամարդկություն և «մեծահասակություն», ծխելու կամ խմելու որոշակի ոճերը ենթադրում են կանացիություն ու գայթակղելու ցանկություն, կարողություն:

Թմրանյութերի կամ ալկոհոլի օգտագործումը այս տարիքում ընկալվում է իբրև խմբային համագործակցության արտահայտում: Դրանց օգտագործումը օգնում է առանձնացնել «յուրայիններին» և «օտարներին», ինչպես նաև մեծ դեր ունի խմբային դիմադրությունն ու ըմբոստությունն արտահայտելու հարցում, ինչն այս տարիքին առավել հատուկ է:

Այժմ դիտարկենք վարքի այն ձևերը, որոնք դեռահասների ծնողները կամ շահագրգիռ այլ մարդիկ պետք է ընկալեն որպես կարմիր դրոշակներ: Դրանք բոլորն էլ կարող են մատնանշել թմրանյութերի օգտագործումը:

- Նոր ընկերների անսպասելի հայտնվելը և հների հետ կապերի խզումը
- Շատ ժամանակ միայնակ անցկացնելը
- Իր զբաղմունքների մասին հարցերին անորոշ, խճճված պատասխաններ տալը
- Անսպասելի իմպուլսիվ և խելառ պահվածքը
- Տնային դեղատուփից դեղահաբերի անհայտանալը
- Դպրոցական խնդիրների աճը՝ դասերը բաց թողնելու մասին տեղեկությունները, անհաջող ստուգարքները, վարքի հետ կապված խնդիրները, դպրոցական կյանքի նկատմամբ հետաքրքրության կորուստը
- Դեռահասի մոտ անհասկանալի կերպով հայտնված գուժարները

- Այլ դեռահասների կարճատև այցերը՝ հնարավոր է նրանք թմրանյութեր են փոխանցում
- Մռայլվածությունը և ամեն ինչի հանդեպ բացասական վերաբերմունքը
- Առողջության հետ կապված կայուն խնդիրները՝ հոգնածությունը, կարմիր, ուռած աչքերը, ախորժակի փոփոխությունը
- Անձնական հիգիենայի կանոնները չպահելը և արտաքին տեսքին անտարբեր վերաբերմունքը, անխնամ լինելը

Գոյություն ունեն մի շարք նշաններ, որոնք ցույց են տալիս, որ դեռահասի մոտ սկսվում են լուրջ անձնական խնդիրներ:

Դրանք կարող են լինել ալկոհոլիզմը, հասակակիցների կազմաքանդիչ խմբի հետ շփումը, որևէ կուլտի նմանակումը, թմրանյութերի օգտագործումը, չափազանց մեծ ախորժակը կամ դրա կորուստը, ընկերների քիչ քանակը, ընտանիքից մեկուսացումը, ագրեսիվ վարքը (կոիվներ, գոռգոռոցներ), մեքանա կամ մոտոցիկլետ վարելու խելագար ձևը, անձնական հիգիենային չհետևելը, մռայլությունը, դժգոհությունը, շփումներից խուսափելը կամ պարզապես չշփվելը, թույլ էներգետիկան, չափից դուրս գլոբալականությունը, սուտը, տագնապի ախտանշանները, ցուցադրական սեքսուալությունը (չափազանց «սեքսուալ» հագուստը կամ վարքը):

2.9. Ինքնասպանության վտանգը դեռահասության տարիքում

Արտասահմանյան գրականության մեջ առանձնացնում են դեռահասների ինքնասպանության հետևյալ պատճառները՝

ա) Կորուստները

Ռոմանտիկ հարաբերությունների կորուստ

Դեռահասի համար նման հարաբերությունների կորուստը հիմնականում հոգեկան ցնցում է: Նրա աշխարհը փլվում է: Հաճախ ինքնավստահ արտաքինի հետևում թաքնվում է զգայուն և շուտ վիրավորվող երիտասարդ, իսկ մեծամտության հետևում՝ զգայուն ու շուտ վիրավորվող աղջնակ: «Ժամանակը բուժում է» կամ «կան և ուրիշներ» այս տիպի ծամծամված արտահայտությունները շատ

վիրավորական են երիտասարդի համար և հանգեցնում են նրան, որ երիտասարդը չի ընդունում իրականությունը:

Սիրելի մարդու մահը

Սիրելի մարդու մահվան հետ կապված տառապանքները կարող են այնքան ուժեղ լինել, որ երիտասարդին համակի նրա հետ մահով միանալու ցանկությունը: Հաճախ է լինում այնպես, որ երբ ընտանիքը վերապրում է հարազատի մահը, այդ ընթացքում դեռահասն իր խնդիրներով մղվում է հետին պլան: Շատ մեծահասակներ գտնում են, որ երիտասարդն ընդունակ չէ հարազատի մահը վերապրել այնքան խորը, ինչպես իրենք:

Ընտանի կենդանու մահը:

Քիչ չէ պատահում, որ դեռահասը միայն տնային կենդանուն կարող է ամեն ինչը «պատմել»: Նրանք և «լսում» են, և «սիրում» են, և երբեք չեն «դատի»: Իսկ եթե հանկարծ այդ կենդանին սատկի:

Աշխատանքի կորուստը

Շատ դեռահասների համար աշխատանքը նշանակում է հասունություն և անկախություն:

«Դեմքը» կորցնելը

Նայեք այն տղայի դեմքին, ով հասարակայնորեն հայտարարել է, թե մտադիր է դառնալ ֆուտբոլային թիմի կապիտան և չի հաջողել: Նայեք այն աղջնակին, ով երազել է դառնալ միջոցառման թագուհին, բայց մերժվել է և այլն:

Ծնողների ամուսնալուծությունը

Ծնողներից մեկի կորուստը նրանց ամուսնալուծության հետևանքով շատ ավելի է վիրավորում անչափահասին, քան ընդունված է համարել: Շատ դեռահասներ իրենց մեղավորությունն ու պատասխանատվությունն են զգում ընտանիքի փլուզման համար: Հնարավոր ամուսնալուծության հետ կապված հորինված կամ իրական վախը նույնպես առաջ է բերում անտանելի հոգեկան տառապանքներ:

բ) Ճնշումներ

Ճնշում դպրոցում

Այս տիպի ճնշումների շարքին են դասվում, օրինակ՝ բարձր գնահատականների ձգտումը, միաժամանակ մի քանի կարևոր հանձնարարություն կատարելը, հասարակական կյանքում գերակտիվ մասնակցությունը, դպրոցի մարզական կյանքին մասնակցելու պահանջները, ջանասիրությունը:

Ճնշումներ հասակակիցների կողմից

Դրանք կարող են լինել, օրինակ՝ հասակակիցների շրջանում ընդունված լինելու ձգտումը, խմբի բարքերը, հագնվածքի նմանությունները, թմրանյութերը, խմիչքը, սեռական հարաբերությունները, երաժշտական նախընտրությունները:

Ճնշումներ ծնողների կողմից

Ծնողները կարող են ճնշել հաջողության, փողի, կրթարանի (կամ այլ ուսումնական հաստատության) ընտրության, լավ ընկերներ ու արժանի կրթություն ձեռք բերելու հարցում: Դեռահասին կարող են ընկճել նաև ծնողների՝ հսկելու անհրաժեշտության և իր՝ անկախ լինելու ցանկության հակասությունները, ծնողների միջև անհամաձայնությունները, աշխատանքի տեղավորվելու խնդիրը, հագուստը, երաժշտությունը, նույնիսկ ծնողները՝ իրենց երեխաների հետ «ընկերներ» լինելու ձգտումները, նրանց՝ ավելի շատ քարոզներով, քան սեփական օրինակով որևէ բան սովորեցնելը և այլն:

գ) Ցածր ինքնագնահատականը

Արտաքնապես գրավիչ չլինելը

Ուշադրություն դարձրեք այն պատանուն, ով վստահ է, որ մարմնական կառուցվածքով ինքը ոչ մի հասակակցի հետ համեմատվել չի կարող կամ այն աղջնակին, ով իրեն համարում է տգեղ, անբարեստես, խղճուկ:

Երկրորդ կարգի մարդ լինելը

Նայեք երիտասարդին կամ աղջնակին, ովքեր միշտ կողքի են մնում, անտեսվում են, երբ հերթը հասնում է ժամադրվելուն կամ ինչ-որ հարցում ընտրվելուն:

Սեռական հարաբերությունների մասին պատկերացումները

Չի կարելի անտարբեր մնալ այն դեռահասի հոգեկան տանջանքներին ու ապրումների հանդեպ, որը տատանվում է սեռական հարաբերությունների մասին երկու պատկերացումների արանքում և չի համարձակվում որևէ մեկի հետ կիսվել այդ հարցում՝ վախենալով ծիծաղելի երևալուց: Չի կարելի հաշվի չնստել երիտասարդի զգացմունքների հետ, որի՝ հոմոսեքսուալ լինելու վախն արդյունք է սեռական հարաբերությունների մասին հիմնարար գիտելիքների պակասի:

Հագուստը

ԶԼՄ-ների և անչափահասների շրջանում հագուկապի ընդունված յուրատեսակության ազդեցության տակ դեռահասը գնահատում է այն հագուստի առավելություններն ու թերությունները, որն ինքը ստիպված է հագնել:

Ֆիզիկական անկարողությունը

Պատահում է, որ դեռահասը դժվարությամբ է գլուխ հանում ոչ միայն ֆիզիկական խնդիրներից, այլ նաև շրջապատի ոչ բարյալակամ նկատողություններից ու հայացքներից:

Անհաջողություններն ուսման մեջ

Հաճախ մեծ եղբոր կամ քրոջ «հանճարեղությունը» պատճառ է դառնում, որ ծնողներն ու շրջապատը մշտապես հիշատակեն դեռահասի հետ համեմատական, բայց ոչ նրա օգտին արված տարբերությունները (իհարկե, սա կարող է վերաբերել և հասակակիցներին ու համադասարանցիներին):

2.10. Ինչպես խուսափել դեռահասությանը բնորոշ վտանգներից

Դեռահաս տարիքի երեխա ունեցող ծնողներին մասնագետները խորհուրդ են տալիս՝ անկախ դեռահասի վարքից, բնավորությունից, իրավիճակից, դեռահասի համար ապահովել:

Սերը՝ առանց ծնողների սիրո դեռահասը չի կարող ձեռք բերել վստահության, սեփական արժանապատվության և ինքնավստահության զգացում: Սիրո պակասը դառնում է այն հիմնական պատճառը, որի հետևանքով դեռահասները դիմում են

անմտածված, անպատասխանատու քայլերի, վտանգավոր վարքագիծ են դրսևորում:

Տարածություն՝ դեռահասին անհրաժեշտ է իր սենյակն ունենալ, որտեղ նա կհասունանա, կմտածի, կսովորի, և սխալներ կգործի: Ծնողական գերխնամքն ու չափից ավելի ուշադրությունը դեռահասի մեջ չեն կարող դաստիարակել անկախության և վստահության զգացում, ինչը հնարավոր է ձեռք բերել միայն ինքնուրույն թռիչքի մեջ:

Կարող է թվալ՝ ինչ որ հակասություն կա նախորդի և երկրորդի միջև, սակայն պետք է հիշել, որ սերը ապրում է միայն ազատության և անկախության մեջ, իրական հարգանքի և ինքնուրույնության պայմաններում կարելի է իրական սիրել:

Ընկերներ՝ նրանք թեթևացնում են ծնողական տնից «դուրս գալու» ընթացքը, փոխարենն առաջարկելով հարմարավետություն, հուսալիություն և կարեկցանք: Պետք չէ մոռանալ, որ դեռահասությունը իսկապես նախորդում է հասուն կյանքին, և դեռահասը պիտի սովորի ապրել առանց ծնողական խնամքի և հսկողության: Դրան օգնում են ընկերները, միջավայրը, որում դեռահասը փորփրում է իր գիտելիքները և ինքնուրույն որոշումներ է կայացնում:

Ավանդույթներ՝ լինեն դրանք կրոնական թե էթնիկ կապեր, դպրոցական տոների կամ ընտանեկան հանդիսությունների անցկացման արարողություններ, ավանդույթները դեռահասին ամրացնում են իր արմատներին և տալիս են ներկան նշանակալի դարձնելու հնարավորություն: Ավանդույթը կարող է լինել ընտանեկան արարողություն, կիրակի օրը ընտանիքով միասին ճաշելը, կամ շաբաթվա ընթացքում մեկ օր միասին քաղաքից դուրս գնալը: Այդ օրերը հիշեցնում են մեզ մեր արմատների մասին և օգնում են թևերն ամրացնել՝ թռիչքի համար:

Սահմաններ՝ յուրաքանչյուր դեռահասին անհրաժեշտ է սահմանափակել՝ այդ ձևով նրան սովորեցնելով իրական աշխարհում իրեն պահել կարողանալուն: Կանոնները հիմք և անվտանգություն են ապահովում: Միայն պետք է հիշել, որ կանոնները դեռահասի անվտանգության համար են, ոչ ծնողների քմահաճույքները բավարարելու համար: Դրանք պիտի լինեն քիչ, տրամաբանական, դեռահասի համար հասկանալի և հնարավորինս ընդունելի:

Մեծահասակներ՝ ծնողներից և ուսուցիչներից, հասարակական և կրոնական առաջնորդներից և սիրելի հարազատներից բացի, դեռահասին երբեմն անհրաժեշտ է շփում իմաստուն և հասկանալու ընդունակ որևէ մեծահասակի հետ: Այս տարիքում դեռահասներին երբեմն դժվար է լինում հարազատների հետ անկեղծ և անկաշկանդ խոսել իրենց հուզող հարցերի շուրջ: Օտար, իրեն չքննադատող մեծահասակի հետ շփումն ու ընկերությունը կարող է շատ օգտակար լինել:

Մասնագետները համոզմունք են հայտնում նաև, որ դեռահասին անհրաժեշտ է սեփական գործն ունենալ, հետաքրքրությունը (սպորտ, խմբակ), ինքնաարտահայտման սեփական ձևը և տարեկիցների ուշադրությունը գրավելու միջոց:

Ստուգիչ հարցեր

1. Ինչպիսի առանձնահատկություններ ունի նորածնության և վաղ մանկության շրջանը:
2. Նշեք նախադպրոցական տարիքի ամենակարևոր առանձնահատկությունները:
3. Ինչպիսի նորագոյացություններ են ի հայտ գալիս կրտսեր դպրոցական տարիքում:
4. Ինչն է դեռահասության տարիքի դժվարությունների պատճառը:
5. Ինչ է անհրաժեշտ դեռահասին լիարժեք զարգացման համար:
6. Ինչն է հանդիսանում ինքնասպանության պատճառ դեռահասության տարիքում:
7. Որո՞նք են դեռահասության տարիքում թմրամոլության նշանները:
8. Ինչպիսի առանձնահատկություններ ունի պատանեկության տարիքը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

| Տարիքային փուլ | Ոստիկանի գործունեության համար կարևոր առանձնահատկություններ | Ոստիկանի աշխատանքում դժվարություն առաջացնող առանձնահատկություններ |
|--|--|---|
| 0-1 տարեկան՝ Նորածնություն և մանկիկություն | Չեն մասնակցում վարույթին | |
| 1-3 տարեկան՝ Վաղ մանկություն | Խաղը երեխայի իրականությունն է: Այս տարիքում դեռևս չի կարող ստել կամ երևակայել: | Խոսքը կարող է սխալ ընկալվել: Երեխան սխալ դատողություններ և եզրահանգումներ է կատարում: |
| 3-6 տարեկան՝ Նախադպրոցական տարիք | Նկարներն արդեն սկսում են ախտորոշիչ նշանակություն ունենալ: Կարելի է երեխայի նկարների վրա հիմնվելով տեղեկություններ ստանալ: Հուզական երանգավորումը շատ կարևոր է այս տարիքի երեխայի համար: Խաղը կարող է երևակայական տարրեր պարունակել, սակայն դեռևս ախտորոշիչ մեծ նշանակություն ունի: | Կարող է հնարել շատ իրական պատմություններ և հավատալ ինքն իր պատմածին: Չի կեղծում, այլ խաղում է: |
| 7-10 տարեկան՝ կրտսեր դպրոցական տարիք | Հակված է արդարացնել մեծի սպասելիքները: Ցանկանում է դուր գալ մեծին և արդարացնել սպասելիքները: | Ամաչում է և կարող է կեղծել տեղեկությունները վախից կամ հեղինակավոր անձից: |
| 11-14 տարեկան՝ դեռահասություն | Ունի դժվար և անկառավարելի վարք, ինչպես նաև պատասխանատվության ցածր մակարդակ: | Կարող է ուշադրություն գրավելու համար ստել և հնարել: |
| 15-17 տարեկան՝ պատանեկություն | Ունի մեծահասակին հատուկ մտածողություն և դատողություններ: | Դեռևս մեծահասակի հնարավորություններ չունի, բայց ցանկություններն ու մղումներն արդեն մեծահասակի են: |

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Ինչպես շփում հաստատել և վստահություն ձեռք բերել

1. Առաջին քայլը, որ պետք է անել երեխաների հետ ծանոթանալիս, սեփական անունն ասելն ու ներկայանալն է: Կթվա, թե շատ պարզ մի բան ենք ասում, որն անում են բոլորը: Բայց եկեք տեսնենք, որ մեծահասակների մեծ մասը երեխայի հետ ծանոթանալիս, ասում են. անունդ ինչպես է: Դա կարծես երեխային դնում է պատասխանողի և մշտապես ենթակայի դեպքում: Երեխան արդեն չի ուզում շփվել և համագործակցել այդ մեծահասակի հետ: Պետք է նախ և առաջ ներկայանալ, ասել ծանոթության նպատակի մասին, հարցնել, արդյոք հարմար է իրեն այս պահին զրուցել այդ մասին և այլն:
2. Հաջորդ քայլով պետք է մի փոքր պատմել սեփական գործունեության և աշխատանքի մասին: Նորից շատերը կասեն, որ երեխաները շատ լավ գիտեն, թե ինչ է անում ուստիկանը և ավելորդ ժամանակ կորցնել պետք չէ: Բայց իրականում դա այդպես չէ: Երեխաներից շատերն ունեն թյուր պատկերացումներ և ոչ հազվադեպ՝ նաև բացասական դիրքորոշումներ ուստիկանների նկատմամբ: Սա առիթ է՝ ստեղծելու սեփական մասնագիտության նկատմամբ ճիշտ մոտեցում և դիրքորոշում: Երեխային պատմելով մեր մասին, մենք ստեղծում ենք նրա մոտ նոր դիրքորոշում մեր մասնագիտության նկատմամբ: Այդ ընթացքում նաև կարելի է հարցնել, թե արդյոք երբևէ շփվել է ուստիկանների հետ և ինչ գիտի նրանց մասին: Սրանով էլ կպարզենք երեխայի՝ նախկինում ունեցած փորձի հիման վրա ստեղծված դիրքորոշումը:
3. Երեխաները վստահում են այն մարդկանց, ովքեր հարգանքով են վերաբերվում իրենց և իրենց զգացմունքներին: Դրա համար պետք է առաջին հերթին հարգալից լինել երեխայի անձնական ինֆորմացիայի նկատմամբ: Պետք է գաղտնապահ լինել: Դրա մասին պետք է տեղեկացնել երեխային հենց զրույցի սկզբում: Եթե գաղտնիությունը չի պահվելու, ապա այդ մասին ևս պետք է տեղեկացնել:
4. Պետք է առավելագույնս ազնիվ լինել և ասել այն ամենը, ինչ վերաբերում է երեխային և նա իրավունք ունի իմանալ: Դա տվյալ

գրույցին վերաբերող մանրամասներն են՝ նպատակը, տևողությունը, ովքեր կիմանան դրա մասին, որտեղ է օգտագործվելու այդ ինֆորմացիան և այլն:

5. Պետք չէ պատմել այլ երեխաների հետ կապված դեպքերի և իրավիճակների մասին, հատկապես եթե երեխան ճանաչում է այդ երեխաներին: Դա անմիջապես կհուշի երեխային, որ դուք իր մասին ևս կպատմեք մյուսներին:
6. Յանկացած վախեցնող արտահայտություն անմիջապես կկործանի ստեղծված վստահությունը: Իսկ եթե վստահություն դեռ չի ձևավորվել, ապա չի ձևավորվի:
7. Պետք չէ երեխայի խնդիրներով ավելորդ հետաքրքրվածություն և նրա խնդիրների լուծման համար ավելորդ շահագրգռվածություն ցուցաբերել: Դա նվազեցնում է առանց այդ էլ ցածր պատասխանատվության զգացումը, որ ունենում են երեխաներն ու հատկապես իրավախախտ երեխաները: Երեխան պիտի առավելագույնս տեղեկացված լինի իր քայլերի հետևանքների մասին և իմանա, որ դրանք ինքը ստիպված է լինելու տանել մենակ:
8. Երեխայի հետ զրույցի ժամանակ պետք է նրան հավաստիացնել, որ իր բոլոր քայերում ինքն ազատ է և ցանկացած որոշում կարող է կայացնել: Բայց նրան պետք է մանրամասն տեղեկացնել այդ որոշումներից յուրաքանչյուրի հետևանքների մասին: Ոչ ոք չի սիրում իրեն թակարդում զգալ և կախված լինել այլոց որոշումներից: Երբ մարդուն տալիս ենք ազատություն և որոշումներ կայացնելու իրավունք, նա ավելի հեշտությամբ է համաձայնվում իրեն առաջարկվող որոշման հետ:
9. Երեխան պիտի զգա, որ դուք արդարամիտ եք: Յանկացած խոսք և ցանկացած քայլ պիտի արդար լինի: Եթե երեխան տեղեկացված է, եթե երեխան հասկանում է ձեր պարտականությունները, եթե երեխան գիտի, թե ինչ է արել և ինչպիսին պիտի լինի ձեր հաջորդ քայլը, ապա նույնիսկ այն դեպքում, երբ դուք կատարում եք իր համար անցանկալի մի բան, նա կշարունակի հարգել ձեզ և վստահել, քանի որ դուք ազնիվ եք, գիտեք ձեր պարտականություններն ու սահմանները և դրանք չեք խախտում:
10. Պետք չէ խաբել երեխային և փորձել նրան կառավարել, ստիպել կամ դրդել որևէ գործողության, նույնիսկ եթե դա ավելի լավ է իր համար: Դա երեխաներն զգում են և դադարում են

վստահել, հասկանում են, որ դուք ուզում եք մանիպուլյացիայի ենթարկել իրենց: Պարտականությունների հստակ սահմանումը, քայլերի մանրակրկիտ վերլուծությունն ու դրանց մեկնաբանությունը, այդ քայլերի հետևանքների մասին տեղեկացումը բերում է փոխվստահության մթնոլորտի ստեղծման:

ԳԼՈՒԽ 3

ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ

Քանի որ կյանքը շփման անընդհատ գործընթաց է, միջանձնային հարաբերություններում հաճախ առաջանում է արտահայտված կամ թաքնված դժգոհություն՝ հիմնականում կապված որևէ չբավարարված պահանջմունքի հետ:

Հակասություններ և դժգոհություններ առաջանում են, երբ կարծեքների, բարոյական նորմերի, հայացքների, սկզբունքների անհամաձայնություն, ինչպես նաև սպասելիքների և դիրքորոշումների անհամապատասխանություն (սա հաճախ հանդիպում է տարբեր տարիքի, կենսափորձի, հետաքրքրությունների տեր մարդկանց շրջանում):

Կոնֆլիկտը կարծիքների, շահերի, նպատակների բախում է, որը կարող է առաջանալ ինչպես անհատների, այնպես և խմբերի միջև: Պայմանավորված կոնֆլիկտի կողմերով՝ առանձնացնում են դրա 3 տեսակ՝ ներանձնային, միջանձնային և միջխմբային:

Ներանձնային կոնֆլիկտներն առաջանում են բարդ երկընտրանքի առաջ կանգնելիս, մեղքի զգացում, խղճի խայթ զգալիս, տարաբնույթ ցանկություններ և հնարավորություններ ունենալիս և այլն: Շատ հաճախ ներանձնային կոնֆլիկտներ ունեցող անձինք ունենում են նաև կոնֆլիկտներ միջանձնային հարաբերություններում:

Միջանձնային կոնֆլիկտներն առաջանում են անձանց միջև համատեղ գործունեության կամ հարաբերությունների ընթացքում:

Միջխմբային կոնֆլիկտները առաջանում են տարբեր խմբերի միջև՝ կրոնական, ազգային, աշխատանքային, դպրոցական և այլն:

3.1. Կոնֆլիկտի կառուցվածքը

Հակամարտող կողմեր- միջանձնային կոնֆլիկտների համար բնականաբար պահանջվում է առնվազն երկու անձ, սակայն

կոնֆլիկտի մեջ կարող են ներգրավվել նաև այլ անձինք՝ հրահրողներ, խորհրդատուներ, այս կամ այն կողմի համակիրներ և այլն:

Կոնֆլիկտի սահմաններ- կոնֆլիկտ առաջանում է միայն այն դեպքում, երբ կա կոնֆլիկտի առարկա: Շատ հաճախ կոնֆլիկտի սահմանները կարող են ընդլայնվել կոնֆլիկտի ժամանակ և կրճատվել՝ կախված կոնֆլիկտի ընթացքից և զարգացումից:

Իրավիճակի մասին պատկերացումներ - կոնֆլիկտի մասնակիցներն ավելի հաճախ տարբեր կերպ են ընկալում իրավիճակը, որում ի հայտ է եկել կոնֆլիկտը: Ավելի հաճախ դա է դառնում կոնֆլիկտի իրական պատճառ:

Շարժառիթներ - Կոնֆլիկտի և բնականաբար իրավիճակի տարբեր ընկալումներն առաջանում են հակամարտող կողմերի տարբեր նպատակների, ձգտումների և շարժառիթների պատճառով: Ինչպես օրինակ՝ ծնող-երեխա փոխհարաբերություններում կարող է կոնֆլիկտ առաջանալ այն պատճառով, որ ծնողն ակնկալում է երեխայի հնազանդությունը, իսկ երեխան ազատություն է ուզում:

Գործողություններ - Ելնելով վերևում նշվածից, հակամարտող կողմերը դիմում են տարբեր գործողությունների, իսկ քանի որ կոնֆլիկտը պայքարի մի տեսակ է, ապա կողմերը ձեռնարկում են տարբեր քայլեր և գործողություններ՝ հակառակորդին պարտության մատնելու համար:

Կոնֆլիկտն ունի իր զարգացման **փուլերը**, որոնք պարտադիր չեն բոլոր կոնֆլիկտների համար, սակայն նշված փուլերը միշտ հաջորդում են իրար:

Նախակոնֆլիկտային իրավիճակ - այս իրավիճակը կարող է բավական երկար տևել և սովորաբար կրում է կուտակային բնույթ: Տարբեր փոքրիկ միջադեպեր՝ կուտակվելով, նախապատրաստում են կոնֆլիկտին:

Միջադեպ - Սա կողմերի առաջին բախումն է: Երբեմն թվում է, թե դա անսպասելի է լինում, սակայն իրականում դրան միշտ նախորդում է գործողությունների և քայլերի շարք, որոնցում միջադեպը «վերջին կաթիլ» ազդեցություն է ունենում:

Թեժացում - Սա անընդհատ կոնֆլիկտի թեժացման փուլն է, որը կարող է հասնել մինչև բռնության: Սա կոնֆլիկտի ամենալարված փուլն է:

Գագաթնակետ - Սա այն փուլն է, երբ կողմերից գոնե մեկը գիտակցում է, որ կոնֆլիկտը շարունակել այլևս չի կարելի և պետք է դադարեցնել պայքարը: Այս փուլում են փնտրում կոնֆլիկտից ելքեր և հաշտեցման ուղիներ:

Կոնֆլիկտային իրավիճակում մարդիկ կարող են դրսևորել վարքի տարբեր ձևեր՝

Մրցակցություն - սա համառ և ոչ համագործակցային գործընթաց է: Այստեղ անհատը պնդում է իր տեսակետը, պատրաստ չէ զիջումների: Այստեղ միակ նշանաբանը «հաղթանակն է»: Այս մոտեցումն ընդունելի է դժվար և հրատապ խնդիրների լուծման պարագայում, երբ ռիսկերը մեծ են:

Խուսափում - սա ոչ համառ և ոչ էլ մրցակցային գործընթաց է. այստեղ անհատը չի մտնում կոնֆլիկտի մեջ առհասարակ: Այս մոտեցումն ընդունելի է այն դեպքերում, երբ պայքարն անիմաստ է, կամ ուժերն՝ անհավասար:

Փոխզիջում - սա և՛ համառ, և՛ համագործակցային ոճ է: Այս ոճը նախընտրող մարդիկ փորձում են գտնել փոխզիջումային տարբերակներ՝ խնդիրների լուծման համար: Այս մոտեցումն օգտակար է այն դեպքերում, երբ կոնֆլիկտի լուծման առարկան շատ ավելի արժեքավոր է, քան կորուստները և իրար հետ հակամարտող կողմերն ունեն հավասար մակարդակներ:

Հարմարվողականություն - սա ոչ համառ և համագործակցային գործընթաց է, մրցակցության ճիշտ հակառակ ոճն է: Այս դեպքում անձն անտեսում է սեփական շահերը՝ հանուն մեկ ուրիշի շահերի: Այս մոտեցումն ընդունելի այն դեպքերում, երբ հարաբերություններն ավելի կարևոր են, քան հաղթանակը: Սակայն ընդհանուր առմամբ սա ոչ արդյունավետ մոտեցում է:

Համագործակցություն - և՛ համառ, և՛ համագործակցային գործընթաց է, խուսափման ճիշտ հակառակը, երբ մարդիկ փորձում են հաշվի առնել կոնֆլիկտում ներգրավված բոլոր անձանց կարիքներն ու շահերը: Խոշոր հաշվով այս ոճը նախընտրող մարդիկ կոնֆլիկտներ չեն ունենում, նրանք ունենում են խնդիրներ, որոնք լուծում են:

Կոնֆլիկտներից հնարավոր են մի քանի ելքեր և լուծումներ՝

- Պարտություն-պարտություն,
- Պարտություն-հաղթանակ,
- Հաղթանակ-հաղթանակ:

Միջանձնային կոնֆլիկտների ծագման օրինաչափությունների իմացությունն օգնում է վերացնել դրանք դեռ իրենց ծագման սկզբում: Կոնֆլիկտների 80%-ն առաջանում է կոնֆլիկտի մասնակիցների ցանկությունից անկախ: Դրանց պատճառները մեր հոգեկանի առանձնահատկություններն են, որոնք կամ չգիտենք, կամ նշանակություն չենք տալիս: Կոնֆլիկտների առաջացման մեջ կարևոր են **կոնֆլիկտաժինները**՝ այն բառերը, գործողությունները կամ նույնիսկ անգործությունը, որը բերում է կոնֆլիկտների: Կոնֆլիկտի հիմնական պատճառներից մեկը հոգեկանի այն առանձնահատկությունն է, որի պատճառով մենք առավել զգայուն ենք ուրիշների խոսքերի և վարքի նկատմամբ, քան մեր սեփականի: Այդ պատճառով, մենք սովորաբար հաշվի չենք առնում մեր քայլերն ու վարքը՝ շտապելով մեղադրել դիմացինին:

Առաջին կոնֆլիկտաժինը կարող է լինել մեր ցանկությունից անկախ իրավիճակը, մինչդեռ երկրորդն արդեն կախված է մեր վարքից:

Առանձնացնում են երեք խումբ կոնֆլիկտաժիններ.

- առավելության ձգտում,
- ազդեցիկության դրսևորում,
- եսամոլություն:

Առավելության ձգտման բացահայտ դրսևորման ձևերն են՝

- հրամայելը, սպառնալը, նկատողություն անելը, բացասական գնահատականը, մեղադրանքը, քննադատը, ծաղրը, սարկազմը, մարդկանց վերևից նայելը,
- գլուխ գովելը. մեծ ոգևորությամբ սեփական հաջողությունների մասին պատմելն առաջացնում է գլուխգովանին տեղը նստեցնելու ցանկություն,
- կատեգորիկությունը, ընդհանրացումներով խոսելը՝ տղամարդիկ սրիկա են, կանայք խաբեբա են, բոլորը գողանում են, քո ընկերը քեզ չի սազում և այլն,
- խորհուրդների պարտադրումը,

- խոսակցին ընդհատելը, ձայն բարձրացնելը, խոսակցին ուղղելը,
- տեղեկատվություն թաքցնելը. սա հաճախ առաջացնում է տազնապ,
- էթիկայի նորմերի խախտումը,
- խաբելը կամ դրա փորձը:

Երկրորդ խումբ կոնֆլիկտաժիններն են ագրեսիվ վարքի դրսևորումները: Առանձնացնում են երկու տիպի ագրեսիա. առաջինը՝ որպես անձնային որակ, երկրորդը՝ իրավիճակային (վատ ինքնազգացողություն, անձնական պրոբլեմներ, ֆրուստրացիա):

Երրորդ խմբում եսամոլությունն է:

Ոչ հազվադեպ կոնֆլիկտներ են առաջանում ծնող-երեխա փոխհարաբերություններում, որոնց պատճառները ընդհանուր առմամբ հետևյալներն են.

- ծնողների ակնկալիքները երեխայի վարքից կամ ձեռքբերումներից չեն համապատասխանում երեխայի իրական հնարավորություններին,
- երեխայի պահանջմունքները չեն բավարարվում,
- երեխայի տարիքային առանձնահատկությունները հաշվի չեն առնվում և այլն:

Տարբերում են կոնֆլիկտների լուծման երկու հիմնական եղանակներ.

- հարկադրական, բռնի եղանակ,
- խաղաղ լուծման եղանակ:

Այս երկու տարբերակների ընտրության համար նախ և առաջ ցանկություն և դիրքորոշում է անհրաժեշտ: Այսինքն, կողմերը պիտի ցանկանան խաղաղ լուծում: Առաջին տարբերակում շատ հաճախ կոնֆլիկտը չի լուծվում, այլ վերափոխվում է նախակոնֆլիկտային վիճակի և պարտվող կողմը սպասում է հարմար առիթի՝ «ռևանշի» համար:

Կոնֆլիկտների խաղաղ լուծումների համար անհրաժեշտ է, որ կոնֆլիկտում ներգրավված կողմերն ունենան.

- հույզերի կառավարման մեխանիզմներ,

- ակտիվ լսելու ունակություն,
- համագործակցային վարք,
- շփվելու հմտություններ,
- համագործակցային և ոչ կատեգորիկ վերաբերմունք,
- ներդաշնակ ներաշխարհ,
- բավարարված պահանջմունքներ,
- լիարժեք ինքնաճանաչում և այլն:

3.2. Դեռահասի շփումը և կոնֆլիկտները մեծահասակների հետ

Այս տարիքում ծնող-երեխա փոխհարաբերությունները փոխվում են: Դրանք դառնում են ակնհայտ կոնֆլիկտային: Այս կոնֆլիկտի պատճառն այն է, որ դեռահասային տարիքի փոփոխությունների հետ առաջին հերթին չեն ցանկանում համակերպվել հենց ծնողները: Նրանց դուր չի գալիս դեռահասի թվացյալ ինքնավստահությունը, համարձակությունն ու հանդգնությունը:

Մեծահասակների հետ հարաբերությունները, առաջին հերթին ծնողների հետ հարաբերությունները դեռահասի կյանքի կարևոր ոլորտն է: Ծնողների ազդեցությունն արդեն սահմանափակ է և չի տարածվում այդքան շատ ոլորտների վրա, ինչպես նախկինում էր: Բայց ծնողների հետ հարաբերությունների դերն այս ընթացքում թերագնահատել չի կարելի: Սովորաբար այս տարիքում հասակակիցների կարծիքը հագուստի, ընկերական հարաբերությունների, աղջիկների և տղաների հետ հարաբերությունների, ժամանակակից երաժշտության և ժամանցի վերաբերյալ ավելի կարևոր է դառնում, քան ծնողներինը: Բայց դեռահասի արժեքային կողմնորոշումները, սոցիալական խնդիրների իր հասկացումը, իրողությունների, արարքների բարոյական գնահատականները հիմնականում կախված են ծնողների դիրքորոշումներից և հայացքներից:

Միևնույն ժամանակ, դեռահասին հատուկ է ծնողներից էմանսիպացիայի՝ անջատման ձգտումը: Ծնողների, նրանց սիրո, խնամքի, տեսակետների և կարծիքների կարիքը զգալով հանդերձ, դեռահասները մեծ ցանկություն ունեն նրանցից առանձնանալու, ինքնուրույն լինելու, հավասար իրավունքներ ունենալու:

Այն թե ինչպես կդասավորվեն այս շրջանում դեռահասի և ծնողների միջև փոխհարաբերությունները՝ կախված է դաստիարակության ոճից, որն ընդունված է տվյալ ընտանիքում, ինչպես նաև հարմարվելու, երեխայի հասունությունը ընդունելու ծնողների կարողությունից: Հիմնական խնդիրներն ու կոնֆլիկտներն այս տարիքում ծագում են ծնողների կողմից երեխայի կյանքը կառավարելու, դասերն ու ընկերների ընտրությունը վերահսկելու ցանկությունից: Ծայրահեղ և դեռահասի համար ամենաանբարենպաստ դաստիարակության ոճերը լիակատար վերահսկումն է ավտորիտար դաստիարակության ոճի դեպքում, և ծայրաստիճան բարձրիթողիությունը, երբ դեռահասը ինքն է իր գլխի տերը: Այս երկու ծայրահեղ մոտեցումների և վերաբերմունքների միջև կան շատ միջանկյալ տարբերակներ:

Ընտանեկան հարաբերություններում, բացի վերահսկումից շատ կարևոր են նաև ծնողների սպասելիքները, խնամքը երեխայի նկատմամբ, երեխայի առջև դրվող պահանջների հետևողականությունը կամ անհետևողականությունը, և իհարկե այդ հարաբերությունների հուզական հիմքը, սերը երեխայի նկատմամբ, երեխայի ընդունումը ծնողների կողմից:

Շրջապատի հետ փոխհարաբերությունները դեռահասի կյանքի առավել կարևոր ոլորտներից է: Եթե հասակակիցների և նշանակալի մեծահասակների հետ լիարժեք շփման և փոխհարաբերությունների պահանջը չի բավարարվում, դեռահասների մոտ շատ ծանր ապրումներ են առաջ գալիս: Այս բացերը կարելի է լրացնել: Օրինակ՝ լավագույն ընկերոջ հետ հարաբերությունների խզումը կարելի է լրացնել ծնողների հետ սերտ հուզական շփման միջոցով, լավագույն ուսուցչի հետ մտերմության և շփման միջոցով, ընտանիքում հասկացվածության զգացման բացակայությունը դեռահասը լրացնում է տարբեր խմբերում ընդգրկվելով, հասակակիցների հետ հուզական շփման միջոցով:

3.3. Ծնողավարումը՝ որպես կոնֆլիկտի պատճառ

Այստեղ կանգ առնենք դեռահասի անձնային աճը և նրա ծնողների հետ հարաբերությունները որոշող ընտանեկան դաստիարակության առավել տարածված ոճերի վրա:

Ավտորիտար ծնողները դեռահասից պահանջում են իրենց հրամանների և հրահանգների անհապաղ կատարում, առանց մտահոգվելու դրանց պատճառների վերաբերյալ բացատրություններ տալու մասին: Նրանք խիստ վերահսկում են դեռահասի կյանքի բոլոր ոլորտները, նույնիսկ կարող են դա անել ոչ այնքան նրբանկատ ձևով: Նման ընտանքիներում երեխաները հիմնականում մեկուսանում են և իրենց շփումը ծնողների հետ խախտվում է: Երեխաների մի մասն էլ նման ընտանքիներում գնում է կոնֆլիկտի՝ ակտիվորեն պահանջելով իր իրավունքների ճանաչում: Բայց ավելի հաճախ ավտորիտար դաստիարակության ոճ նախընտրող ծնողների երեխաները համակերպվում են ստեղծված իրավիճակի հետ, դառնում են անինքնավստահ, ավելի քիչ ինքնուրույն, և բարոյապես ավելի քիչ հասուն, քան իրենց այն հասակակաիցները, որոնք օգտվում են իրենց տարիքի համար բնական ինքնուրույնությունից և ազատություններից:

Իրավիճակը բարդանում է, երբ բարձր վերահսկողությունը զուգակցվում է երեխայի հանդեպ հուզականորեն սառը, նրան մերժող վերաբերմունքի հետ: Նման դաստիարակությունն ու փոխհարաբերությունները անվանում են նաև «Դաստիարակության Մոխրոտիկի տարբերակ»: Այս տեսակ հարաբերությունների դեպքում շփման կորուստն անխուսափելի է: Ավելի ծայրահեղ է անտարբեր և դաժան ծնողների տարբերակը: Նման ընտանքիների երեխաները հազվադեպ են մարդկանց վստահությամբ վերաբերվում, դժվարություններ են ունենում շփման մեջ, , հաճախ իրենք էլ դաժան են լինում, չնայած միշտ սիրո խիստ պահանջ են ունենում: Գոյություն ունեցող տվյալների հիման վրա կարելի է ասել, որ մանկահասակ հանցագործների, թափառաշրջիկ երեխաների, կանոնավոր կերպով տանից փախչող երեխաների մեծ մասը դաժան վերաբերմունքի են արժանացել ընտանիքում:

Ծնողների անտարբեր վերաբերմունքի և վերահսկողության բացակայության համադրմամբ (հիպոխնամք) դաստիարակությունը ևս շատ անբարենպաստ է լինում դեռահասի զարգացման համար: Դեռահասին թույլ է տրվում անել այն ամենն, ինչ նա ցանկանում է, և նրա խնամքով ոչ ոք չի զբաղվում: Նման ամենաթողությունը կարծես հանում է պատասխանատվությունը ծնողների վրայից դեռահասի բոլոր քայլերի համար: Իսկ դեռահասերը,

որքան էլ ժամանակ առ ժամանակ խռովեն, կամ ըմբոստանան, միևնույն է՝ ծնողների խնամքի, սիրո և հոգատարության կարիքն են զգում: Նրանք պիտի կարողանան հենվել ծնողների վրա, հիմնվել նրանց պահվածքի և քայլերի վրա, որպես օրինակ և մոդել օգտագործել նրանց վարքը: Ինչ վերաբերում է երեխաների անկառավարելի վարքին, ապա այն այդպիսին է դառնում անկանխատեսելի միջավայրի և ընտանեկան փոխհարաբերությունների արդյունքում:

Ծնողական սերը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է երեխաների լիարժեք զարգացման համար: Գերխնամքը (հիպերխնամքը), երեխայի վարքի և կյանքի չափից դուրս վերահսկումն է, չափազանց խնամման է երեխայի հանդեպ, հիմնված երեխայի հետ հուզական շատ սերտ կապի վրա: Այս տեսակ հարաբերությունները բերում են դեռահասի մոտ պասիվության, անինքնուրույնության ձևավորման, հասակակիցների հետ շփումներում դժվարությունների: Գերխնամքին ավելի հակված են իրենց երեխային միայնակ մեծացնող մայրերը, որոնք իրենց կյանքի միակ իմաստը երեխայի մեջ են տեսնում: «Երեխայի համար ապրելու» սկզբունքով դասավորված հարաբերությունները արգելակող ազդեցություն են ունենում և՛ երեխայի, և՛ մոր անձնային աճի վրա:

Այլ տիպի դժվարություններ են առաջանում ծնողների բարձրացված սպասելիքների առկայության դեպքում, սպասելիքներ, որոնք դեռահասը արդարացնել չի կարող: Տիպիկ օրինակներ են՝ երբ ծնողները ակնկալում են երեխայից բարձր առաջադիմություն դպրոցում, կամ տաղանդավոր դրսևորումներ ինչ-որ ոլորտում, կամ միայնակ ծնողի երեխայից՝ որ նա, ինչպես իր ծնողը, փոխադարձաբար իրեն նվիրվի, կամ անհաջողակ հոր տղայից ակնկալվում է հաջողություններ հենց այն ոլորտում, որտեղ ծնողը չի հաջողել և այլն: Չափազանցված, անհամապատասխան սպասելիքներ ունեցող ծնողների հետ հոգեկան մտերմությունը սովորաբար կորչում է դեռահասության տարիքում: Դեռահասը ցանկանում է ինքը որոշել, ինչ է իրեն պետք, և նրա համար օտար են այդ սպասելիքներն ու պահանջները: Եթե այդ ընթացքում նրա վզին փաթաթվում է նաև բարոյական պատասխանատվություն, ապա կարող է նևրոզ զարգանալ:

Դեռահասի հետ փոխհարաբերությունները կարող են վատանալ նաև այն դեպքերում, երբ նրան վերաբերվում են ինչպես երեխայի և ակնկալում են երեխային հատուկ արձագանքներ, կամ այդ ակնկալիքների մեջ շատ անհետևողական են լինում, այսինքն մի անգամ ակնկալում են մեծին հատուկ արձագանք, հաջորդ պահին զայրանում երեխայի մեծավարի քայլերից: Առհասարակ դաստիարակության մեջ անհետևողականությունը շատ բացասաբար է անդրադառնում երեխաների անձի զարգացման, ինչպես նաև ընտանեկան փոխհարաբերությունների վրա:

Դեմոկրատ ծնողները դեռահասի վարքում գնահատում են և՛ ինքուրույնությունը, և՛ կարգապահությունը: Նրանք հենց իրենք են երեխային հնարավորություն տալիս ինքնուրույն լինել կյանքի որոշ ոլորտներում: Չճնշելով դեռահասի իրավունքները՝ ծնողները միևնույն ժամանակ պահանջում են պարտականությունների ժամանակին կատարում: Վերահսկում են երեխային՝ հենվելով ջերմ զգացմունքների և տրամաբանական խնամքի վրա: Նման ընտանիքների դեռահասները հաճախ լսում են ծնողների խորհուրդներն ու բացատրությունները, թե ինչու չի կարելի վարվել այս կամ այն կերպ: Նման հարաբերությունների դեպքում դեռահասի հասունության զգացումն ու ինքնուրույնությունը ձևավորվում է ավելի արագ և առանց ցավոտ բախումների:

3.4. Դեռահասի շփումը և կոնֆլիկտները հասակակիցների հետ

Դեռահասների մոտ կարծես չափազանցված և ծնողների համար անհիմն, աննպատակ, հաճախ անիմաստ շփման պահանջ է դրսևորվում: Սակայն երեխաների, ինչպես նաև դեռահասների վարքում չկա որևէ դրսևորում, որը անիմաստ և աննպատակ լինի: Նույնիսկ այն դեպքերում, երբ այդ վարքը զայրացնող է և անընդունելի, միևնույն է՝ այն ունի իր իմաստը և մարդու զարգացման տվյալ փուլում՝ իր դերը: Դեռահասների համար շփումը կենսականոթեն կարևոր է, անփոխարինելի և նրանց չի կարելի զրկել այդ հնարավորությունից:

Հասակակիցների հետ շփումը դեռահասների մոտ նույնքան հուզական է, որքան նրանց հետաքրքրությունները:

Շփումը լցնում է դեռահասների ամբողջ կյանքը, իր հետքը թողնելով և՛ ուսուցման, և՛ ոչ ուսումնական զբաղմունքների վրա, և՛ ծնողների հետ հարաբերությունների վրա: Այս շրջանում հասակակիցների հետ ինտիմ-հուզական շփումը դառնում է առաջատար գործունեություն: Շատ ավելի բովանդակային և խորն են լինում նրանց ընկերական հարաբերությունները: Դեռահասային ընկերությունը բարդ և հաճախ հակասական երևույթ է: Դեռահասը ձգտում է մտերիմ և հոգեհարազատ մարդ գտնել, արդյունքում տարերայնորեն փոխում է ընկերներին: Սովորաբար ուրիշի մեջ նրանք փնտրում են դիրքորոշումների, տեսակետների և հայացքների նմանություն, սեփական ապրումների և զգացմունքների ընդունում, հասկացում: Ընկերը պիտի կարողանա լսել և կարեկցել, իսկ նման կարողություններ ունենում են սովորաբար նմանատիպ խնդիրներ ունեցող երեխաները, և ընկերությունը դեռահասի համար դառնում է ինքնատիպ մի թերապիա: Ընկերը կարող է ոչ միայն լսել, կարեկցել և հասկանալ, օգնել ինքն իրեն ավելի լավ հասկանալ, այլև հաղթահարել սեփական թերաթժեքության զգացումը, անվստահությունը սեփական ուժերի մեջ, զգալ սեփական անձի նշանակալիությունը, ինքն իրեն անձ զգալ: Եթե դեռահասի ընկերը սխալ հասկանա իրեն, կամ զբաղված լինի սեփական խնդիրներով և չկարողանա բավարար չափով ուշադրություն հատկացնել իր ընկերոջը, շատ հնարավոր է հարաբերությունների խզում: Դեռահասների ընկերության և հարաբերությունների հիմնական պայմանն ու կարևոր պահանջմունքը հասկացված լինելու պահանջմունքն է, և եթե ընկերությունը չի բավարարում այդ պահանջմունքը, ապա այդ հարաբերությունները խզվում են:

Դեռահասի համար կարևոր է գտնել իր ռեֆերենտային խումբը, որի արժեքներն ընդունելի են իր համար, որի վարքի ձևերին և գնահատականներին կարող է հետևել ինքը: Անկախ դեռահասների շփման մեծ ցանկությունից, այնուամենայնիվ գտնվում են այնպիսի դեռահասներ, որոնք չեն ընդգրկվում նման խմբերում, նրանք մեկուսանում և առանձնանում են: Դրանք հիմնականում չափից դուրս ինքնամիտ, անինքնավստահ, նյարդային, չափազանց ագրեսիվ դեռահասներն են, կամ նրանք, ովքեր անտարբեր են ընդհանուր գործերի և զբաղմունքների հանդեպ, կամ իրենց հանդեպ շատ ուշադրություն են պահանջում:

Բնականաբար, եթե դեռահասը այսքան կախված է հասակակիցների հետ շփումից, հետևաբար այդտեղ ունեցած անհաջողություններն ու կոնֆլիկտները կարող են լուրջ հետևանքներ ունենալ նրա հոգեկան անդորրի և վարքի վրա:

Ստուգիչ հարցեր

1. Ի՞նչ է կոնֆլիկտը և ինչպիսի՞ կառուցվածք ունի:
2. Ինչպիսի՞ն կարող են լինել դրա լուծման ճանապարհները:
3. Որո՞նք են կոնֆլիկտի հիմնական պատճառները մեծահասակների և դեռահասների հարաբերություններում:
4. Ծնողավարման ո՞ր ոճն է առավել կոնֆլիկտածին, ինչո՞ւ:
5. Ծնողավարման ո՞ր ոճն է առավել կոնֆլիկտախույս, ինչո՞ւ:
6. Որո՞նք են դեռահասի և հասակակիցների հետ հարաբերությունների առանձնահատկությունները:

ԳԼՈՒԽ 4

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Անչափահասների հանցավորության պատճառականության հոգեբանական որոշ առանձնահատկություններ

Անձի ձևավորման գործընթացն ընդունված է համարել նրա սոցիալիզացիան, այսինքն, անձի օժտվածությունը սոցիալական առանձնահատկություններով, սոցիալական կապերի հաստատումով, կենսակերպի ընտրությամբ, ինքնագիտակցության ձևավորմամբ, սոցիալական տարբեր խմբերի մեջ ներգրավմամբ, սոցիալական որոշակի դիրքերի և դերերի յուրացմամբ:

Որպես կանոն, մեծ տեղ է հատկացվում առաջնային սոցիալիզացիային, երբ երեխան անգիտակցաբար յուրացնում է ծնողների վարքի տարբեր ձևերը, մեծահասակների վերաբերմունքն այս կամ այն պրոբլեմային իրավիճակին և այլն: Ինչպես ցույց են տալիս հոգեբանական ուսումնասիրությունները՝ մեծ տարիքում հանցագործները հաճախ դրսևորում են վարքի այն ձևը, որը «տպավորվել», «դաջվել» է նրանց հոգեկանում մանկահասակ/դեռահասության տարիքում: Կարելի է ասել, որ հանցագործ վարքի պատճառականության առյուծի բաժինը, որոշակի առումով, առաջնային սոցիալիզացիայի անարդյունավետության հետևանքներից է և շարունակությունը՝ միայն դրսևորման այլ ձևերով:

Բազում գիտնականներ (Վ.Լ. Վասիլև, Ա.Ֆ. Կոնի, Մ.Ի. Ենիկեն, Յու.Մ. Անտոնյան և այլք) են շատ խոսել հանցագործության կատարման մեջ ոչ լրիվ, անբարենպաստ ընտանիքների ունեցած դերի մասին, ներառյալ այն ընտանիքների, որտեղ ծնողները կատարում կամ կատարել են հակահասարակական կամ անբարո արարքներ: Սակայն բաց է մնում այն հարցը, թե ինչու նման ընտանիքներում դաստիարակված շատ անձինք երբեք չեն դրսևորում հանցագործ վարք: Այս հարցին պատասխաններ փնտրելիս պետք է նկատի ունենալ, որ անբարենպաստության իմաստով նշանակալի դեր են խաղում ոչ միայն ընտանիքի կազմը, ծնողների նախկին դատվածություններն ու «քրեականացված» լինելը,

այլև նրանց հուզական վերաբերմունքը երեխաների նկատմամբ, վերջիններին ընդունելը կամ մերժելը:

Կարելի է առանձնացնել այնպիսի ընտանիքներ, որտեղ ծնողները ցուցաբերում են հակաիրավական կամ հակաբարոյական վարք, բայց հուզական կապը երեխայի հետ բնութագրվում է ջերմությամբ և հոգատարությամբ: Ահա թե ինչու բոլոր հիմքերը կան մտածելու, որ այս հուզական կապերի բացակայությունն է ձևավորում դեռահասի, պատանու հետագա հանցագործ վարքը և անձն ընդհանրապես:

Երեխայի հոգեբանական օտարացումը ծնողներից միակ ներընտանեկան պատճառը չէ, որ նպաստում է հանցագործ անձի ձևավորմանը: Հաճախ այդ ձևավորումն իրականանում է այլ ճանապարհով: Օրինակ, երբ երեխաներն ունեն ծնողների հետ դրական հուզական կապեր, սակայն հենց վերջիններս են հրահրում նրանց կատարել բազում հակահասարակական արարքներ: Այս ամենին նպաստում են նաև ծնողների կողմից ավրոհողի, տարբեր տիպի թմրանյութերի պարբերաբար չարաշահումը, և, քանի որ հուզական կապերն ամուր են, երեխան անմիջապես յուրացնում է այն, ինչ տեսնում է, և իր հետագա հակահասարակական վարքը պայմանավորվում է հենց այս գործոններով:

Այսպիսի հարաբերությունները բացահայտելը շատ բարդ է, քանի որ այս ամենի մասին լուրն են թե՛ ծնողները, թե՛ երեխաները: Պետք է նշել, որ այս երևույթը կատարվում է ոչ կամային կերպով, ենթագիտակցաբար: Չէ՞ որ նույնիսկ մեծահասակ մարդու համար դժվար է խոստովանել, որ ծնողները չեն սիրել իրեն, որ ինքը նրանց համար եղել է լոկ ավելորդ «բեռ» և այլն:

«Հոգեբանական բազում ուսումնասիրությունները ցույց են տվել, որ անբարենպաստ ընտանիքները հատկապես կործանարար ազդեցություն են ունենում աղջիկների վրա» (Աղուզումյան Ռ, Գասպարյան Ա, Մելքոնյան Վ., Իրավաբանական հոգեբանություն. ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան 2003):

Առաջին հերթին, այն աղջիկները, որոնք մերժված են ընտանիքների կողմից, շատ վաղ են սկսում սեռական կյանքը, դառնում են հեշտությամբ հասանելի «որս» մեծահասակ տղաների համար:

Երկրորդ հերթին, մեկուսանալով ընտանիքի անդամներից, դպրոցից, հասարակական հարաբերություններից, աղջիկների

համար դժվար և հաճախ նաև անհնար է լինում սովորական կենսակերպ վարել և վայելել շրջապատի հարգանքը: Կանանց նկատմամբ սոցիալական պիտակավորումը (ստիգմատիզացիա) գրեթե բոլոր հասարակություններում և Հայաստանում նույնպես առավել կայուն է և խորը, քան տղամարդկանց նկատմամբ:

Չափազանց կարևոր է նշել, որ ծնողների կողմից երեխաների մերժումը նրանց մոտ անգիտակցական մակարդակում ձևավորում է տազնապայնություն, անհանգստություն, իրենց «ես»-ը կորցնելու վախ և այլն: Սա հանցագործ անձի ձևավորման կարևոր պատճառականություններից մեկն է: Ծնողական սիրո, քնքշանքի և հոգատարության բացակայության արդյունքում այս հատկությունները կարող են աստիճանաբար սրվել դպրոցում, բակում, ընկերների հետ շփման ընթացքում և այլ սոցիալական միջավայրերում:

Թվարկված բոլոր դրսևորումները կարելի է կոչել տազնապայնություն՝ դրա տակ հասկանալով գոյություն չունենալու, «չապրելու» նկատմամբ վախի զգացողությունը: Այս վախը կարող է ունենալ երկու մակարդակ՝ վախ մահանալու նկատմամբ (բարձր մակարդակ) և մշտական անհանգստություն ու անվստահություն (ցածրագույն մակարդակ):

Բացի ընտանիքի անբարենպաստությունից և այդ պատճառով տազնապայնության դրսևորումներից, հանցագործ անձի ձևավորման մեջ մեծ տեղ են զբաղեցնում նաև այլ գործոններ:

Ծնողների կողմից մերժված անձը գրեթե միշտ ընկնում է հասակակիցների հակահասարակական խմբավորումների ազդեցության տակ: Այսպիսի խմբերի ազդեցության տակ ընկնելուց հետո ձևավորվում է անձի արժեքային համակարգը և դիրքորոշումների ամբողջությունը, որոնք իրենց մեջ ներառում են կենցաղային իրավիճակների և խնդիրների լուծման տարբեր եղանակներ ու միջոցներ: Սա չափազանց կարևոր հանգամանք է, քանի որ միշտ չէ, որ դրդապատճառներն ու նպատակները հակաիրավական են: Այդպիսիք են հաճախ նպատակներին հասնելու եղանակները, օրինակ՝ հակաիրավական է ոչ թե հարստանալու նպատակը, այլ այն եղանակը, որի միջոցով կուտակվում է այդ հարստությունը:

Խմբի դերը շատ նշանակալի է, քանի որ տվյալ անձը գնահատում է իր մասնակցությունը այդ խմբի կենսագործունեության

մեջ: Խմբում գերիշխող մտքերը, կարծիքներն ու ամբողջ տրամադրությունը անպայման փոխանցվում է նրա անդամներին:

Այս ամենի հետ զուգընթաց, հետագա հանցավոր վարքագծի համար նախադրյալների շարքում կարևորագույն տեղ են զբաղեցնում իրավախախտ վարքի տարբեր ձևերը, որոնք անչափահասը որդեգրում և դրսևորում է տևական ժամանակահատվածում: Վարքի այդ ձևերը տարբեր գիտնականների կողմից տարբեր կերպ են ներկայացվել, սակայն դրանք բոլորն արտահայտվում են վարքի դեֆինիցիաներով: Այս վարքը հաճախ անվանում են «շեղվող» վարք, որի մասին առավել մանրամասն կներկայացվի ստորև:

4.2. Դեֆիանտ (շեղվող) վարքի բնորոշումը, տարատեսակներն ու հոգեբանական առանձնահատկությունները

Դեֆիանտ վարքը (լատիներեն devianto — շեղում, սխալ, ոչ սովորական բառից) սոցիալական նորմերին և կանոններին հակասող վարքային մոդելների ամբողջություն է: Դա ներառում է այնպիսի արարք, որը չի համապատասխանում տվյալ հասարակությունում փաստացի ձևավորված նորմերին¹⁸, ինչպես նաև սոցիալական երևույթ, որը դրսևորվում է մարդկային գործունեության մասսայական այնպիսի ձևերում, որոնք հակասում են սոցիումի ընդունված կանոններին: Մեկ այլ դեպքում, խոսքը կարող է վերաբերել սոցիալական դեֆինիցիային, երբ դեֆիանտ վարք դրսևորում են հասարակության լայն շերտերը կամ խմբերը¹⁹:

Դեֆիանտ վարքի հոգեբանության ուսումնասիրության օբյեկտը շեղվող վարք ունեցող, սոցախտահարվող²⁰ անձն է, որը հանցա-

¹⁸ Պատմական զարգացման ընթացքում տարբեր հասարակություններ կարող են ձեռք բերել կամ ունենալ ընդունելի ու անընդունելի նորմեր: Ավելին, հասարակության տարբեր անդամներ կարող են ընդունել կամ ընդվզել ընդունված կամ չընդունված նորմերի դեմ: Թյուրնկալումից խուսափելու նպատակով, սույն վերնագրի կոնտեքստում «հասարակության կողմից ձևավորված նորմեր» կամ «հասարակության կողմից ընդունելի/անընդունելի նորմեր» հասկացությունները դիտարկվում են զուտ հանցագործությունները մերժելու, չընդունելու տեսակետից:

¹⁹ Майсак Н.В. Матрица социальных девиаций: классификация типов и видов девиантного поведения // Современные проблемы науки и образования. – 2010. – № 4 – էջ. 78-86

²⁰ Արզումանյան Ս. Զ. Դեռահասների հանցածին վարքագծի դիրքորոշումների կազմավորման գենետիկ հոգեբանական նախադրյալները. Հոգեբանությունը և կյանքը. 2000 N 1. էջ 29-36:

գործ դառնալու և որակվելու նախաշեմին է և հոգեբանորեն պատրաստ և պատրաստակամ է անօրինական արարք կատարել, այսինքն, մեծանում է ապագայում հանցանք գործելու հավանականությունը (ռիսկը):

Այսպիսով, դեհանտ վարքն արարքների համախումբ է, որը հակասում է հասարակության ընդունած նորմերին և հանդես է գալիս հոգեկան պրոցեսների, ադապտացիոն մեխանիզմների ապակառուցողականության (դեստրուկտիվության) և սեփական վարքը վերահսկելու անընդունակության ձևով: Ընդ որում, շեղվող արարքները կարող են հանդես գալ թե՛ որպես նպատակին հասնելու միջոցներ, թե՛ որպես հոգեկան լարվածության պարպում՝ պայմանավորված չբավարարված պահանջմունքներով, և թե՛ որպես ինքնիրացման և ինքնահաստատման պահանջմունքի բավարարում:

Դեհանտ վարքագիծն ունի տարբեր պատճառականություններ, որոնց անդրադարձել են կենսաբանական, սոցիալական, պոզիտիվիստների, հումանիստական և այլ դպրոցների ներկայացուցիչներ: Տեսության և պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ դեհանտ վարքը (ապագայում նաև հանցագործությունը) դրսևորվում է անձնային գործոնների և կոնկրետ իրավիճակի համապատասխանության արդյունքում: Այս իմաստով, հատկապես դեռահասների դեպքերում դեհանտ կամ շեղվող վարքի հիմնական նախադրյալներից է հանդիսանում անձի սոցիալականցման թերացումը կամ ոչ լիարժեք սոցիալականացումը: Սոցիալական հոգեբանության մեջ հայտնի են սոցիալականացման երեք հիմնական մակարդակներ:

Սոցիալականացման առաջին մակարդակ, որը հիմնականում իրագործվում է ծնողների և ընտանիքի միջոցով: Սա ամենակարևոր փուլն է, քանի որ կրում է անձի հետագա զարգացման ողջ պատասխանատվությունը: Այս փուլի թերությունները հաճախ տանում են շեղվող վարքի տարբեր ձևերի առաջացման: **Երկրորդային սոցիալականացում կամ սոցիալականացման երկրորդ մակարդակ**, որը հասակակիցների, դպրոցի, հեռուստատեսության և արտաքին աշխարհի այլ գործոններով պայմանավորված սոցիալականացման գործընթացն է: Այս փուլում սոցիալականացումը հիմնականում իրականանում է ոչ միայն մասնակցային

խմբերում, այլև ռեֆերենտային խմբերում, որոնց մեջ հաճախ ծնողները չեն մտնում: **Երրորդային սոցիալականացում** տեղի է ունենում ըստ գործունեության կամ մասնագիտական որոշակի սոցիալական խմբերին պատկանելու միջոցով: Այս փուլը բավականաչափ երկարատև է, քանի որ կապված է մասնագիտական գործունեության հետ:

Դեիանտ վարքի տարատեսակներն ու դրանց դրսևորումները տարբեր են՝ չարամտորեն դասերից խուսափելուց մինչև հանցավոր ակտիվություն (գործունեություն): Սակայն համամասնության համատեքստում, կարելի է տարբերակել հաճախ հանդիպող շեղվող վարքի հետևյալ տեսակները՝

Դելիկվենտ վարք

Սա շեղվող վարք է ակնհայտ հակահասարակական ուղղվածությամբ, որն իր ծայրահեղ դրսևորումներում կարող է վերաճել հանցագործության: Դեռահասության տարիքում դելիկվենտ վարքի առաջին նախանշանները սկսվում են դասերից պարբերաբար փախչելուց, դպրոց չհաճախելուց, հաճախակի ծեծկոտուքների կազմակերպումից, ուրիշին պատկանող, թեկուզև, աննշան իրերի գողությունից (հափշտակությունից):

Ադոլիսկոպ վարք

Շեղվող վարք է՝ «իրականությունից կտրվելու, հեռանալու» պատրանքային ցանկությամբ՝ հոգեներգործուն միջոցներ (ալկոհոլ, թմրանյութեր և այլն) ընդունելու միջոցով: Եթե ալկոհոլի չափավոր օգտագործումն ընդհանրապես հեշտացնում է մարդկանց միջև շփումը, ապա դեռահասության տարիքում այս երևույթը կարող է կրել և սովորաբար կրում է քայքայիչ բնույթ ու հաճախ նպաստում հանցագործությունների կատարմանը: Չունենալով բավարար քանակությամբ կենսափորձ՝ որոշ անչափահասներ փորձում են ալկոհոլի միջոցով ձեռք բերել «քաջություն», ինքնավստահություն և այլն:

Ասոցիալ վարք

Շեղվող վարք է՝ պայմանավորված դաստիարակության թերություններով: Անբարենպաստ ընտանիքներում ծնողները մեծ մասամբ դրական ծնողավարման հմտությունների չեն

տիրապետում և թերանում են իրենց երեխաների դաստիարակության գործում, որն էլ հաճախ հանգեցնում է երեխաների ասոցիալ վարքի ձևավորմանը:

Սակայն ոչ մի դեպքում չի կարելի մտածել անգամ, որ «վատ» ծնողից ծնվում են «վատ» երեխաներ: Հաճախ հարբեցող ծնողների երեխաները նույնիսկ մոտ չեն գալիս խմիչքին:

Դեռահասը, որպես կանոն, ուղղակիորեն չի յուրացնում և ընկալում արտաքին անբարենպաստ ազդեցությունները: Նա կարող է դրանք չընդունել, մերժել, ինչպես նաև պայքարել նրանց դեմ: Այս պայքարի ժամանակ են հաճախ ձևավորվում նաև մարդու անձնային դրական որակները:

Պսիխոպաթ վարք

Սա շեղվող վարք է՝ պայմանավորված բնավորության շեշտվածություններով և սահմանային իրավիճակներով:

Հիպերընդունակությունների վրա հիմնված վարք

Շեղվող վարքի տեսակ է, որն ուղեկցվում է կենցաղային դևիացիաներով, օժտվածության և նույնիսկ հանճարեղության դրսևորումներով գործունեության այլ ոլորտներում²¹:

Աուտոագրեսիվ վարք

Շեղվող վարք է, որն արտահայտվում է սուիցիդալ մտքերով, ապրումներով, միտումներով և գործողություններով:

Հետերոագրեսիվ վարք

Շեղվող վարք է՝ ուղղված շրջապատողներին և արտահայտվում է ագրեսիվ արտահայտությունների, վնասներ հասցնելու, ֆիզիկական բռնությունների, ձեռքի տակ եղած առարկաները շարտելու, կոտրելու և այլ եղանակներով:²²

²¹ Խոսքը վերաբերում է ոչ միայն և ոչ այնքան «հանճարեղությամբ» հանցանք գործելուն (որն իրավաբանական գրականության մեջ հայտնի է որպես «հանցանքը որպես արհեստ օգտագործելը» եզրույթով), այլ հասարակական/կենցաղային տարբեր ոլորտներում հանճարեղության հասնող հատուկ ընդունակություններ դրևորելուն (մտքով քառանիշ, հնգանիշ թվերի բազմապատկում, երաժշտության կամ արվեստի այլ ոլորտում հանճարեղ ինքնադրսևորում՝ դեռ մանուկ հասակից և այլն):

²² Иванов В. Н. Девиантное поведение: причины и масштабы // Социально-политический журнал. 1995. № 2, էջ47-57

ԳԼՈՒԽ 5

ԲՈՆՈՒԹՅՈՒՆ

5.1. Ֆիզիկական բռնություն

Ֆիզիկական բռնությունը երեխայի դեմ գիտակցաբար կատարված այն ֆիզիկական գործողությունն է, որը պատճառում է կամ կարող է վնաս պատճառել երեխայի առողջությանը, գոյությանը, զարգացմանը և արժանապատվությանը, ներառյալ՝ ծեծը, ոտքով հարվածելը, ցնցելը, կծելը, խեղդելը, այրելը, կանխամտածված թունավորելը և շնչահեղձ անելը կամ ֆիզիկական վնաս պատճառելու անհաջող փորձը: Սա վատ վերաբերմունքի այն տեսակն է, երբ երեխային դնում են ֆիզիկական և հոգեբանական անհարմարության վիճակում և միտումնավոր մարմնական վնասվածքներ պատճառում կամ չեն փորձում դրանցից խուսափել:

Երբեմն երեխաներին դաստիարակելու նպատակով խրախուսվում է ֆիզիկական պատիժը, և այն դեռևս լայնորեն տարածված է բոլոր մշակույթներում՝ ներառելով բոլոր տարիքի երեխաներին: Չնայած կա տարբերություն ֆիզիկական պատժի և ֆիզիկական բռնության միջև, սակայն դրանց միջև սերտ կապը ևս ակնհայտ է:

Երեխայի՝ ինքն իրեն պաշտպանելու անկարողության պատճառով երեխայի նկատմամբ ամենալուրջ ֆիզիկական չարաչափումները տեղի են ունենում վաղ մանկության տարիներին:

Ստորև ներկայացված են երեխայի հոգեկան վիճակի և վարքի այնպիսի առանձնահատկություններ, որոնք թույլ են տալիս կասկածել երեխայի նկատմամբ կիրառված ֆիզիկական բռնության մասին:

Ֆիզիկական նշաններ

- Մարմնի վրա չպատճառաբանված կամ չբացատրված արյունազեղումներ (լավացման տարբեր աստիճանների), ատամների հետքեր, լավացած վերքերի հետքեր, սպիներ,
- ծխախոտի մնացորդից առաջացած այրվածքներ,
- անբացատրելի քերծվածքներ, պատռվածքներ և այլն,

- քայլվածքի և շարժումների անփութություն, նկատելի է, որ ցավեր ունի,
- կոտորվածքներ,
- կապտուկներ,
- մաշկի վրա մատների կամ ինչ-որ առարկայի թողած հետքեր:

Վարքային նշաններ

- Համակերպում եղածի հետ, դիմադրության բացակայություն,
- պասիվ արձագանք ցավի նկատմամբ,
- հիվանդագին վերաբերմունք դիտողություններին, քննադատությանը, խոնարհ վարքագիծ,
- չափազանց զիջողականություն,
- կեղծ հասուն վարքագիծ, արտաքինապես կրկնօրինակում է մեծերի վարքը,
- նեգատիվիզմ, ագրեսիվություն,
- ստախոսություն, գողություն,
- կենդանիների նկատմամբ դաժանություն, հրդեհելու հակում:
- ինքն իրեն վնասելու հակում,
- վնասվածքների պատճառները թաքցնելու հակվածություն, եղանակին չհամապատասխանող փակ հագուստ,
- միայնակություն, ընկերների բացակայություն,
- դասերից հետո տուն գնալու վախ,
- փախուստներ տնից,
- ինքնասպանության փորձեր,
- հակասոցիալական կամ իրավախախտ վարքագիծ,
- թմրամիջոցների կամ ալկոհոլի չարաշահում:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Ստորև ներկայացված են ծնողների և խնամակալների վարքագծի այնպիսի առանձնահատկություններ, որ թույլ են տալիս կռահել երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքի մասին:

- Երեխայի վնասվածքների պատճառների մասին տալիս են հակասական, մշուշոտ բացատրություններ և իրավիճակում պարզություն մտցնելու ցանկություն չունեն:
- Բժշկական օգնության դիմում են ուշացումով կամ դիմելու նախաձեռնությունը լինում է կողմնակի անձանց կողմից,
- Վնասվածքների համար մեղադրում են հենց երեխային:
- Վնասվածքի ծանրության նկատմամբ ծնողները ոչ ադեկվատ վերաբերմունք են դրսևորում և հակված են կամ չափազանցնել, կամ մեղմացնել իրավիճակի ծանրությունը:
- Երեխայի ճակատագրով հետարքրքրված չեն, անտարբեր են, քնքշանքը և հուզական աջակցությունը բացակայում է երեխայի հետ շփման մեջ:
- Մտահոգված են սեփական խնդիրներով, որոնք կապ չունեն երեխայի վնասվածքների հետ:
- Պատմություններ են պատմում այն մասին, թե ինչպես էին իրենց պատժում մանուկ ժամանակ:
- Վարքում հոգեկան խանգարումների դրսևորումներ կան կամ դրսևորվում են պաթոլոգիկ բնավորության գծեր՝ ագրեսիվություն, գրգռվածություն, անադեկվատություն և այլն:

5.2. Սեռական բռնություն

Սեռական բռնությունը երեխային սեռական գործողության կամ հարաբերության մեջ ներգրավելն է: Սեռական բռնության գոհերից շատերն ունենում են անօգնականության և հուսահատության զգացում, որը նրանց հետ է պահում դեպքը հայտնելուց:

Հաճախ երեխան նպաստում է սեռական չարաշահման երևույթի քողարկմանը: Հասկանալի է, որ նա վախեցած է և շփոթված: Մինչ դեռահասություն, նույնիսկ նախադպրոցական

տարիքում սեռական բռնության զոհ դարձած շատ երեխաներ գիտակցում են, որ տեղի ունեցածը վատ է կամ անթույլատրելի: Տեղի ունեցածը, բացի վախից, երբեմն նաև հաճույքի զգացում է առաջացնում երեխայի մոտ, և նա շփոթվում է խառնիխուռն տպավորություններից: Որոշ երեխաների ուղեկցում է մեղքի զգացումը: Հաճախ մեղավորը զոհին համոզում է, որ նա նույնչափ պատասխանատու է կատարվածի համար: Սեռական բռնության և չարաշահման ենթարկված որոշ երեխաներ հաղորդում են, որ իրենք ամոթ էին զգում և կարծում էին, թե ընկերներն իրենց տեսնելով՝ կարող էին կռահել, թե ինչ է պատահել, և խուսափում էին ընկերներից:

Ստորև ներկայացված են երեխայի վարքի, արտաքինի, վնասվածքների և հիվանդությունների այնպիսի առանձնահատկություններ, որոնք թույլ են տալիս կասկածել երեխայի հանդեպ կատարված սեռական բռնության մասին:

Ֆիզիկական նշաններ

- պատռված կամ արյունոտ ներքնազգեստ,
- ցավ կամ քոր սեռական օրգանների շրջանում,
- դժվարություն քայլելիս կամ նստելիս,
- արյունազեղումներ կամ արյունահոսություն արտաքին սեռական օրգաններից,
- սեռավարակներ,
- հղիություն,
- միզասեռական օրգանների հաճախակի վարակներ, գիշերային ակամամիզություն:

Վարքային նշաններ

- ցածր առաջադիմություն,
- ինքնամիոփություն, մեկուսանալու հակում,
- դերային վարքի փոփոխություն (իր վրա ծնողի դերն է վերցնում),
- հասակակիցների հետ հարաբերությունների վատթարացում,
- տարիքին անհամապատասխան սեքսուալ երանգավորված վարքագիծ,

- իրեն առաջարկող, գայթակղող վարքագիծ,
- անբարո վարքագիծ կամ անկանոն սեռական կապեր,
- տարիքին չհամապատասխանող տեղեկացվածություն սեքսուալ ոլորտի մասին,
- մարմինն ամբողջությամբ հագուստով ծածկելու ցանկություն, նույնիսկ, երբ դրա կարիքը չկա:
- դեպրեսիա,
- փախուստներ տնից,
- ցածր ինքնագնահատական,
- ինքնասպանության սպառնալիքներ կամ փորձեր,
- թմրամիջոցների կամ ալկոհոլի չարաշահում,
- բողոքներ փորի հատվածի ցավերից:

5.3. Հուզական և հոգեբանական բռնություն

Հուզական և հոգեբանական բռնությունը ծնողի կամ նրանց փոխարինող անձանց կամ այլ մեծահասակների կողմից հոգեբանական և հուզական բացասական ազդեցությունն է, որը հանգեցնում է երեխայի ֆիզիկական, հոգեկան կամ մտավոր զարգացման պաթոլոգիական դրսևորումների, բնավորության պաթոլոգիական որակների ձևավորման: Այս կարգի բռնությունը ներառում է շարժումների սահմանափակում՝ նվաստացնելու նպատակով, մեղադրանքներ, ահաբեկում, ծաղր, խտրականություն և մերժման կամ վերաբերմունքի ոչ ֆիզիկական այլ ձևեր, որոնք վնաս պատճառելու նպատակ ունեն և վնասում են երեխայի ֆիզիկական, մտավոր, հոգեկան, բարոյական կամ սոցիալական զարգացմանը:

Երեխայի հոգեբանական չարաշահումը կարող է դրսևորվել՝ վերջինիս շարունակաբար նվաստացնելով, ասելով, որ նա անցանկալի ծնունդ է, արժևորված և սիրված չէ, ինչպես նաև նրա տարիքին և զարգացմանը ոչ համապատասխան ակնկալիքներով, որոնք պարտադրվում են նրան: Կարող է դրսևորվել նաև վախի կամ վտանգի զգացում ներշնչելով, շանտաժով, ծնողից բաժանման ահաբեկումներով, ինչպես նաև ուսուցիչների նվաստացումներով ու վիրավորանքներով՝ ուղղված դպրոցահասակ

երեխաներին: Հոգեբանական չարաշահումը մեծ ազդեցություն կարող է ունենալ զարգացող երեխայի հոգեկան առողջության, վարքի և ինքնագնահատականի վրա: Այն հատկապես վտանգավոր է վաղ մանկության տարիքում: Չարաշահման այս տեսակը նույնքան վնասակար է, որքան մյուսները:

Ստորև ներկայացված են երեխաների հոգեկան և ֆիզիկական վիճակի այնպիսի առանձնահատկություններ, որոնք հոգեբանական կամ հուզական բռնության կասկած են առաջացնում:

Ֆիզիկական նշաններ

- Խոսքի խանգարումներ,
- ուշացած ֆիզիկական զարգացում,
- առողջական վիճակի վատթարացում,
- մտավոր զարգացման հապաղում,
- գիշերային ակամամիզություն,
- նյարդային տիկեր,
- դեմքի տխուր արտահայտություն,
- տարբեր մարմնական հիվանդություններ՝ ճարպակալում, մարմնի զանգվածի կտրուկ կորուստ, ստամոքսի խոց, մաշկային հիվանդություններ,
- ավերգիկ պաթոլոգիաներ և այլն:

Վարքային նշաններ

- Քնի խանգարումներ,
- երկար պահպանվող ընկճված վիճակ,
- ագրեսիվություն,
- մեկուսանալու ցանկություն,
- չափից մեծ զիջողականություն և խոնարհ, բոլորի սպասելիքներն արդարացնող վարքագիծ,
- ինքնասպանության սպառնալիք կամ փորձեր,
- հասակակիցների և այլ մարդկանց հետ հարաբերություններ ստեղծելու անկարողություն,
- ցածր առաջադիմություն, ցածր ինքնագնահատական:

ՀԱՎԵԼՎԱԾ 4

Ստորև ներկայացված են ծնողների կամ խնամակալների վարքագծի այնպիսի առանձնահատկություններ, որոնք թույլ են տալիս կասկածել երեխայի նկատմամբ հոգեբանական բռնության մասին.

- սփոփանքի կարիք ունեցող երեխային սփոփելու և խաղաղեցնելու ցանկության բացակայություն,
- վիրավորանք, կոպիտ արտահայտություններ, մեղադրանքներ, հրապարակավ երեխայի ստորացում,
- անդադար գերքննադատական վերաբերմունք երեխայի նկատմամբ,
- երեխայի բացասական բնութագրում,
- ատելի կամ տհաճ բարեկամի հետ երեխայի նույնացում,
- սեփական անհաջողությունների համար երեխայի վրա պատասխանատվության բարդում,
- երեխայի նկատմամբ ատելության կամ նրան չսիրելու բաց արտահայտում:

5.4. Բարոյական բռնություն կամ անտեսում

Բարոյական բռնությունը կամ երեխայի առաջնային կարիքների անտեսումը ծնողի կամ նրան փոխարինող անձանց կողմից երեխայի տարրական կարիքների անտեսումն է և հոգատարության ծայրահեղ բացակայությունը, ինչպես նաև մշտական կամ ժամանակ առ ժամանակ երեխային տարբեր վտանգներից զերծ չպահելու, նրան չպաշտպանելու վերաբերմունքը: Անտեսումը կարող է կապված լինել առողջության, կրթության, հուզական զարգացման, սնուցման, կացարանի, ապահով կենսապայմանների հետ: Բարոյական բռնության հետևանք է մանկավարժական բարձրիթողությունը, որի հետևանքով երեխաները կարող են զուրկ մնալ կրթությունից, թափառաշրջիկ դառնալ, մուրացկանություն անել: Բռնության այս տեսակը շատ յուրահատուկ է և ունի իր ուրույն հետևանքներն անձի ձևավորման վրա: Այս տեսակի բռնության ենթարկված երեխաները փոխում են իրենց աշխարհընկալումը: Նրանց կյանքի ընթացքում չեն ձևավորվում առողջ

զարգացման համար անհրաժեշտ հուզական կապերն ու կապվածությունը:

Բռնության այս տեսակը չպետք է շփոթել հուզական բռնության հետ: Հուզական և հոգեբանական բռնության պարագայում հուզական կապը կարող է պահպանված լինել, և դրա շնորհիվ իրականացվեն երեխայի նկատմամբ չարաշահումն ու բռնությունը, նվաստացումը: Այս բռնության տեսակը կիրառվում է կապվածության իսպառ բացակայության և անտեսման միջոցով: Երեխան կարծես գոյություն չունի ծնողի կամ այլ մեծահասակի համար:

Ստորև ներկայացված են արտաքին տեսքի, կլինիկական ախտանշաններ, որոշակի հոգեբանական վիճակներ կամ վարքի առանձնահատկություններ, որոնք կասկած են առաջացնում, որ երեխան ենթարկվում է բարոյական բռնության:

Ֆիզիկական նշաններ

- անընդհատ հոգնածություն,
- քնկոտություն, քնկոտ տեսք,
- ուռած կոպեր,
- սանիտարահիգիենիկ բարձիթողություն,
- տարիքին չհամապատասխանող մարմնի զանգված, որը լրացվում է բավարար սննդի և խնամքի արդյունքում, օրինակ՝ հիվանդանոցում սնվելիս, դպրոցում, երբ որևէ հյուրասիրություն է լինում և այլն,
- աճի կամ ընդհանուր ֆիզիկական զարգացման հապաղում,
- խոսքային կամ շարժունակության զարգացման հապաղում, որը վերանում է երեխայի նկատմամբ բավարար ուշադրության և խնամքի պարագայում,
- ջրագրկում,
- հաճախակի քրոնիկական ինֆեկցիոն հիվանդություններով հիվանդանալու հակում,
- հաճախակի հոսպիտալացում շտապօգնության բաժանմունքներում,
- անփութության հետևանքով առաջացած կրկնակի վնասվածքներ կամ թունավորումներ:

Հոգեկան և վարքային նշաններ

- անընդհատ սովի կամ ծարավի զգացում,
- սննդի գողություն,
- ամեն գնով իր նկատմամբ մեծերի ուշադրությունը գրավելու ձգտում, նույնիսկ ինքն իրեն վնասելու միջոցով,
- սիրո և քնքշանքի պահանջ,
- ցածր, ճնշված տրամադրություն,
- ապատիա, պասիվություն,
- հակասոցիալական կամ իրավախախտ վարքագիծ՝ ընդհուպ մինչև վանդալիզմ,
- մարդկանց հետ շփվելու կամ ընկերություն անելու անկարողություն,
- ոչ ընտրողական ընկերասիրություն,
- հետադիմական (ռեգրեսիվ) վարքագիծ,
- ուսման դժվարություններ, ցածր առաջադիմություն, գիտելիքների անբավարարություն,
- ցածր ինքնագնահատական:

5.5. Բռնության հետևանքները

Ցանկացած տիպի բռնություն լուրջ հոգեբանական տրավմա է երեխայի համար, որի հետևանքով նրանք ունենում են հետևյալ ապրումները:

- **Պատասխանատվության զգացում բռնության համար**
Երեխան կարծում է, թե ինքը կարող էր խուսափել բռնությունից, եթե իրեն լավ պահեր:
- **Մեղքի զգացում**
Մշտապես բռնության ենթարկվելու արդյունքում երեխան հավատում է, որ ինքն արժանի է դրան:
- **Մշտապես դյուրագրգիռ վիճակ**
Անգամ հանգիստ պայմաններում երեխայից կարելի է սպասել ագրեսիվ արձագանք:
- **Կորստի և ափսոսանքի զգացում**
Այս երեխաներն ունենում են կորցրած երջանկության, տխուր մանկության, լավ ծնողներ չունենալու, կորցրած հարաբերությունների համար ափսոսանքի զգացում:

- **Լքված լինելու վախ**

Ծնողներից մեկից հեռու ապրող երեխան բռնության ակտի արդյունքում կարող է խորը վախ ունենալ, որ երկրորդ ծնողը ևս կարող է լքել իրեն կամ մահանալ: Այդ պատճառով շատ հաճախ երեխան հրաժարվում է անգամ կարճ ժամանակով երկրորդ ծնողից բաժանվելուց:

- **Չափազանց շատ ուշադրության պահանջ**

Բռնության ենթարկված երեխան կարող է չափազանց շատ ուշադրության պահանջը երբեմն բավարարել նույնիսկ բացասական վարքագիծ դրսևորելով, որի արդյունքում կարող է նորից արժանանալ բռնության:

- **Վախ մարմնական վնասվածքներից**

Բռնության զոհ դարձած երեխաների զգալի մասը վախենում է, որ բռնություն գործադրող անձը կամ նույնիսկ այլ մեծահասակներ նորից կցավեցնեն կամ կվնասեն իրեն, կամ բարկությունը կպարպեն իր վրա:

- **Ամոթ**

Բռնության զոհ դարձած ավելի մեծ տարիքի երեխաներն ամոթ են զգում իրենց հանդեպ կիրառված բռնության հետ կապված: Նրանց ամոթալի է թվում զոհի կարգավիճակը:

- **Անհանգստություն ապագայի համար**

Բռնության ենթարկված երեխան կորցնում է հավատը կյանքի նկատմամբ, այլևս չի վստահում մարդկանց, նրա ամենօրյա անհանգստությունն ու տագնապը նրան ներշնչում են, որ ապագան ևս լի կլինի բռնություններով:

- **Վախեր**

Այն երեխաները, ում ընտանիքներում կա բռնություն, օրինաչափորեն ունենում են վախեր: Այդ վախերը կարող են ամենատարբեր ձևերով արտահայտվել՝ զգուշավոր և ինքնամոլոր դառնալուց մինչև նույնատիպ բռնի վարքի պաշտպանական դրսևորումները:

5.6. Բռնության կիրառման ռիսկի գործոններն ընտանիքում

Անկայուն հարաբերություններն այլ սթրեսորների հետ կարող են նպաստել բռնության ի հայտ գալուն: Երեխայի նկատմամբ բռնություն հանդիպում է հասարակության բոլոր սոցիալական շերտերում, քանի որ յուրաքանչյուր ընտանիք այս կամ այն չափով ենթարկվում է անկայուն տնտեսական համակարգի ազդեցությանը: Սակայն աղքատ պայմաններում ապրող ընտանիքներում դա տեղի է ունենում երկու անգամ ավելի հաճախ, քան բարեկեցիկ ընտանիքներում: Ստորև ներկայացված են մի շարք գործոններ, որոնք ավելացնում են ընտանիքում բռնության հավանականությունը:

Սոցիալ-տնտեսական գործոնով պայմանավորված ռիսկեր

Ցածր եկամուտները և մշտապես գումարի անբավարարությունն առաջացնում են լարվածություն, որը կապված է ընտանիքի անդամների հիմնական պահանջների բավարարված չլինելու հետ: Գործազրկությունը կամ ժամանակավոր աշխատանքը, ինչպես նաև ցածր աշխատանքային կարգավիճակը, հատկապես հայրերի պարագայում, առաջացնում է խորը անբավարարվածության զգացում կյանքից:

Երիտասարդ ծնողներ

Եթե առաջին երեխայի ծնունդը տեղի է ունենում այն ժամանակ, երբ ծնողները դեռ հասուն չեն, կրթության ցածր մակարդակ ունեն և մասնագիտական պատրաստվածություն չունեն, ավելանում են ընտանիքի սոցիալ-տնտեսական ռիսկերը, հետևաբար նաև բռնության հավանականությունը:

Ոչ լիարժեք ընտանիք

Միայն մի ծնողի առկայությունը միանգամայն վատացնում է ֆինանսական դրությունը: Ոչ լիարժեք ընտանիքի եկամուտը երկու անգամ ավելի քիչ է, քան լիարժեք ընտանիքինը:

Որևէ փոքրամասնության պատկանելը

Կրոնական փոքրամասնության պատկանելը, մարդկանց նեղ շրջանում ապրելը՝ գյուղում, փոքրիկ քաղաքում՝ գործազրկության և կրթության ցածր մակարդակին զուգահեռ, բերում են սոցիալական մեկուսացվածության:

Վատ բնակարանային պայմաններ

Անբարենպաստ պայմաններով գերբնակեցված տարածքները հանգեցնում են լրացուցիչ լարվածության, որը կարող է բռնություն հրահրել:

Քրոնիկ սթրեսային իրավիճակներ

Սրանք ծնողի մոտ առաջացնում են հուսահատության և անօգնականության զգացում՝ ազդելով ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա: Քանի որ երեխան կախված է ծնողից, նրա համար քավության նոխազ դառնալու ռիսկը մեծանում է:

Միջտերնդային փոխանցում

Մանկության ժամանակ բռնության ենթարկված մարդիկ հետագայում իրենց երեխաների հետ շփման ժամանակ ևս հակված են բռնություն կիրառելու: Նման ծնողները յուրացրել են վարքի այս մոդելը: Նրանց համար ագրեսիվ վարքը սովորական միջոց է առօրյա սոցիալական կոնֆլիկտների լուծման համար: Նման ծնողներն ունենում են ցածր ինքնագնահատական, սոցիալական մեկուսացվածություն և դժվարություն՝ իրենց երեխաների հետ շփում հաստատելու հարցում:

Ավելի հաճախ բռնության զոհ են դառնում

- անցանկալի, չսիրված, ատելի հարազատին նմանություն ունեցող երեխաները,
- ֆիզիկական կամ մտավոր թերություններ ունեցող երեխաները,
- անհաս կամ մարմնի թերի քաշ, բնածին արատ ունեցող երեխաները,
- վարքի խանգարումներ ունեցող՝ հիպերակտիվ, «դժվար երեխաները»,
- օժտված կամ տաղանդավոր երեխաները:

Ստուգիչ հարցեր

1. Ո՞րն է համարվում ֆիզիկական բռնություն, ինչպիսին են դրա նշանները:
2. Ո՞րն է համարվում սեռական բռնություն և որոնք են դրա նշանները:
3. Ո՞րն է համարվում հուզական կամ հոգեբանական բռնություն և ինչպիսին են դրա նշանները:
4. Ո՞րն է համարվում բարոյական բռնություն կամ անտեսում, և որոնք են դրա նշանները:
5. Ինչպիսին են բռնության ընդհանուր հետևանքները:
6. Բռնությանը նպաստող ինչպիսի՞ ընտանեկան գործոններ կան:

ԳԼՈՒԽ 6

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՒՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

6.1. Ընտանեկան բռնության հատկանիշները, առանձնահատկությունները, ընտանեկան բռնության գենդերային ասպեկտը, գենդերային խտրականությունը

Ընտանեկան բռնությանը բնորոշ են հետևյալ հատկանիշները՝

- այն կատարվում է միտումնավոր և հետապնդում է որոշակի նպատակ,
- բռնության արդյունքում ոտնահարվում են անձի իրավունքներն ու ազատությունները,
- ընտանեկան բռնության դեպքում թիրախը չի կարող պաշտպանվել, քանի որ ուժերն անհամաչափ են. բռնարարն ունի ֆիզիկական կամ նյութական, կամ ինտելեկտուալ (ծնողերեխա հարաբերություններում), կամ էմոցիոնալ առավելություն,
- երեխայի նկատմամբ բռնությունը, իր վերապրած էմոցիոնալ տրավման կարելի է ապացուցել վերը նշված ցուցիչների միջոցով, այն է՝ միտումնավոր գործողություն, բռնարարի առավելություն, երեխայի անձնական իրավունքների և ազատությունների ոտնահարում: Այդ ցուցիչների առկայությունը, ըստ էության, հաստատում է անձի նկատմամբ տեղի ունենցած բռնի գործողությունների փաստը:

Ընտանեկան բռնության առանձնահատկությունները՝

- բռնությունը միանգամյա գործողություն չէ, այն շարունակական, մի քանի ցիկլերից բաղկացած, գործընթաց է,
- որպես կրկնվող գործողություն, բռնությունն ունի թափ առնելու միտում,

- բռնությունը կատարվում է փոխադարձ կախվածության մեջ գտնվող անձանց միջև, և սովորաբար նրանք չեն խոսում կատարվածի մասին:

Բռնարարի տեսակետից ընտանեկան բռնությունը արդյունավետ, նպատակին արագ հասնելու միջոց է:

Աղջիկների և տղաների միջև տարբերություններն արտահայտվում են ծննդյան առաջին իսկ օրվանից, նախ, հագուստի միջոցով, հետո՝ միջանձնյա հարաբերությունների և յուրաքանչյուր սեռի համար տվյալ հասարակությունում մշակութային առանձնահատկություններով պայմանավորված վարքային կանոնների միջոցով, և, ըստ էության, կանխորոշում են նրանց հետագա կյանքը: Սկիզբ առնելով ընտանիքում, տղաների և աղջիկների վարքագծի ձևավորումը շարունակվում է շրջապատում՝ մանկապարտեզում, դպրոցում, այլ հաստատություններում: Ի վերջո, հաստատվում են կանանց և տղամարդկանց կարծրատիպային դերեր, որոնք ընկալվում են թե՛ այդ դերերը կրողների և թե՛ հասարակության կողմից, որպես երկու սեռերի համար ծննդյան փաստով պայմանավորված և այդ սեռերը բնութագրող դերեր: Իրականում, ծննդյան փաստով ժառանգվում են միայն կենսաբանական սեռը և դրանով պայմանավորված անատոմիական և ֆիզիոլոգիական տարբերությունները: Դրանից բացի գոյություն ունի **սոցիալական սեռ** հասկացությունը, որը վերաբերում է կյանքի ընթացքում ձեռք բերված որոշակի վարքային նորմերին, որոնք բնութագրում են մարդուն որպես կին կամ որպես տղամարդ և թելադրվում են՝ վաղ տարիքում հագուստի և խաղալիքների միջոցով, հետո՝ յուրաքանչյուր սեռին բնորոշ ընդունակությունների զարգացման, որոշակի հոգեբանության ձևավորման, մասնագիտություններ ընտրելու միջոցով: Արդյունքում առաջանում է տղամարդկանց և կանանց ավանդական **գենդերային դերակատարումներ** հասկացությունը, որը ձևավորվում է շրջապատի սոցիալական սպասումների ազդեցության տակ և որի համաձայն տղամարդն ուժեղ է, կինը՝ թույլ, տարիքով մեծն իրավունք ունի, փոքրը՝ ոչ, տղան խելացի է, աղջիկը՝ «ուրիշ»: Առաջնորդվելով նման մոտեցումներով, ավելին՝ կիրառելով սեփական «ուժի» իրավունքը,

մենք ոտնահարում ենք դիմացինի իրավունքները՝ մանկության, ազատության, առողջության, ապրելու, զարգանալու, սովորելու, աշխատելու և այլն:

Իրականում, մարդու բնավորության մեջ չկան այնպիսի գծեր, որոնք առանձնահատուկ և մենաշնորհային են սեռերից մեկի համար: Միևնույն ժամանակ, խոսելով Հայաստանում գենդերային կարծրատիպերի մասին, մենք նպատակ ունենք ուշադրություն դարձնել գենդերային հիմքով ընտանիքում կատարվող բռնության, այդ բռնության ձևերի և դրա դեմ պայքարի միջոցների վրա, ծանոթացնել Հայաստանում առկա զոհերի պաշտպանության և նրանց աջակցության տրամադրման հնարավորություններին:

Գենդերային բռնության հիմնական ձևերն են՝

- Ֆիզիկական բռնությունը (ներառյալ ծեծը, բռնաբարությունը),
- Հոգեբանական բռնությունը (ներառյալ ազատությունից զրկելը, բռնի ամուսնությունը, սեռական ոտնձգությունները),
- Ֆիզիկական և հոգեբանական բարեկեցության համար անհրաժեշտ ռեսուրսներից զրկումը (ներառյալ բուժասարկում, սնունդ, կրթություն, գոյատևման համար նյութական միջոցներ),
- Երեխայի ընկալումը որպես սեփականություն, ապրանք:

Չնայած նրան, որ բռնությունը կարող է կատարվել և՛ ընտանիքում, և՛ ընտանիքից դուրս՝ ծանոթների, հարազատների կամ օտարների կողմից, դեպքերի հաճախականության առումով ընտանիքն առաջին տեղում է: Այստեղ են հիմնականում կատարվում ֆիզիկական, սեռական (այդ թվում, ինցեստ), բազմազան դրսևորումներով հոգեբանական բռնությունները: Սպառնալիքները, ազատության սահմանափակումը, տարբեր արգելքները, սեքսուալ բնույթի գործողությունները այն գործիքներն են, որ պահում են անձին հնազանդության մեջ, թույլ են տալիս իշխել և վերահսկել նրան: Հետևաբար, անկախ դրդապատճառներից, բռնության հիմքում ընկած է անձերի անհավասարությունը

և հասարակությունում զբաղեցրած դիմացինի համեմատ ավելի ցածր դիրքը: Այդ առումով ամենաթույլ, ամենաանպաշտպան, չդիմադրող օղակը կանայք և երեխաներն են:

6.2. Վիճակագրական տվյալներ, բռնության հիմնական պատճառներ

Աշխարհում յուրաքանչյուր 4-րդ երեխան ընտանիքում ենթարկվում է բռնության որևէ ձևի: Համաձայն առանձին հետազոտությունների, Հայաստանի Հանրապետությունում նույնպես այդ երևույթը առկա է, և ամենատարածված ձևերը մարմնական վնասվածքներն են, ծեծը, սեռական բռնությունը և շահագործումը, իսկ առանձնապես խոցելի են սոցիալապես անապահով ընտանիքների, առանց ծնողական խնամքի մնացած, միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաները: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ լիարժեք վիճակագրություն չկա, քանի որ ընտանիքները, սովորաբար, աշխատում են կոծկել պատերից ներս տեղի ունեցածը, ինչը սահմանափակում է տեղեկատվություն ստանալու հնարավորությունը, իսկ սակավաթիվ աղբյուրներից մեկը դառնում է խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունը, որտեղ երեխայի հայտնվելու դեպքում միայն տեղեկատվությունը դառնում է վիճակագրություն:

Այսպես, օրինակ՝ Երևանի երեխաների ընդունման և կողմնորոշման կենտրոնի շահառուները հիմնականում ընտանիքներում անտեսված (75-%) և ֆիզիկական բռնության ենթարկված (53%) երեխաներն են, 8%-ը կազմում է սեռական բռնության դեպքերը:²³

«Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում, մանկատներում և համայնքային ցերեկային 2 կենտրոնում խնամվող երեխաների շուրջ մեկ երրորդը ընտանիքում ենթարկվել է բռնության՝ ֆիզիկական՝ 15.4%, հոգեբանական՝ 33%, սեռական՝ 15%-ը: Քիչ չեն հաստատություններում հայտնված անչափահասների շրջանում հարազատների կողմից անտեսված երեխաները:

²³ Երեխայի հանդեպ բռնության դեմ պայքարի հայեցակարգ, «Կառավարության 04.12.2014թ. նիստի N51 արձանագրային որոշում:

ՀՀ քննչական կոմիտեի 2015 թվականի վերլուծությունը՝ վարույթում գտնվող սեռական հանցագործությունների դեպքերով քրեական գործերի վերաբերյալ, ցույց է տալիս, որ միայն անչափահասների սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի առթիվ 2015 թ. քննվել է 71 քրեական գործ, որից 6-ը հարուցվել են 2014թ. և տեղափոխվել են 2015թ.:²⁴

Թրաֆիքինգի և շահագործման դեպքերի վերաբերյալ տվյալները փաստում են, որ անչափահասները ոչ միայն խոցելի են և այդ հանցագործության թիրախ են, այլ և հաճախ դառնում են թրաֆիքինգի զոհ իրենց հարազատների պատճառով, որոնք չեն ընդունում կամ չեն գիտակցում երեխայի շահագործման փաստը: Այսպես, համաձայն 2009-2016 թվականների ընթացքում հավաքագրած տեղեկատվության՝ թրաֆիքինգի և շահագործման ենթարկվել են 12-ից մինչև 18 տարեկան շուրջ 23 անչափահասներ՝ աղջիկներ և տղաներ:²⁵ Հատկանշական է, որ երեխաների մի մասը եղել են հատուկ դպրոցի սաներ, մի քանիսն ընդհանրապես չեն հաճախել դպրոց, և բոլորը եղել են աղքատ, անբարեկեցիկ ընտանիքների երեխաներ: Տղաները ներգրավվել են մուրացկանության մեջ, ընդ որում՝ տղաներից մեկը նաև մանկապղծության զոհ է դարձել: Աղջիկները հիմնականում ենթարկվել են սեռական շահագործման, հինգ երեխա՝ հարկադիր աշխատանքի զոհեր են:

Երեխայի նկատմամբ բռնության մասին կարելի է խոսել ևս մեկ երևույթի՝ երեխայի վատթարագույն աշխատանքի ձևերի համատեքստում, որի նախադեպերը ՀՀ-ում արդեն գրանցվել են: Համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության 2015 թվաքանի հետազոտության արդյունքների, երեխայի համար արգելված համարվող աշխատանքում (երեխաների զբաղվածությունը բոլոր այն աշխատանքներում, որոնք ֆիզիկապես, սոցիալապես կամ բարոյապես համարվում են վնասակար կամ վտանգավոր) ներգրավված են եղել հարցված 5-17 տարեկան երեխաների 9%-ը կամ 39.3 հազար երեխա (նշենք, որ այս դեպքում նույնպես երեխան

²⁴ ՀՀ քննչական կոմիտեի վարույթում 2015 թվականին սեռական բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով նախաքննության ընթացքում անչափահաս տուժողների իրավունքների պաշտպանության վիճակի ամփոփում: Երևան, 2016:

²⁵ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

աշխատում է ծնողի իմացությամբ և համաձայնությամբ): Խոսքն այստեղ գնում է այնպիսի աշխատանքի տեսակների մասին, ինչպիսին է բարձրության վրա, գյուղատնտեսական տեխնիկայի (վտանգավոր գործիքի, տրակտորի) օգտագործմամբ, փոշու, այլ պայմաններում աշխատանքը: Որպես կանոն, այս երեխաները զրկված են նաև կրթություն ստանալու հնարավորությունից:

Ինդրի առնչությամբ վերջին հետազոտությունն իրականացվել է 2014թ., որի նպատակն էր վերլուծել ՀՀ-ում երեխաների նկատմամբ կիրառվող բռնության տարածվածության աստիճանը, տեսակները, դրանց պատճառներն ու հետևանքները: Հետազոտությունն անց էր կացվել բոլոր մարզերում: Արդյունքները ցույց տվեցին, որ հարցվածների 44%-ը համարում է, որ երեխաների նկատմամբ բռնությունը հրատապ լուծում պահանջող խնդիր է, 59%-ի կարծքով ընտանիքներում առավել տարածված է ֆիզիկական բռնությունը և/կամ ֆիզիկական պատիժը, 43%-ը նշել է հոգեբանական բռնությունը, 30%-ը՝ անտեսումը, 4%-ը՝ սեռական բռնությունը: Հարցվածների միայն 11%-ն էլ ասել, որ ոչ մի բռնության տեսակ էլ տարածված չէ: Հետազոտության մասնակիցները որպես բռնություն նշել են երեխային ծեծելը, տարբեր առարկաներով հարվածելը (83%), մուօ սենյակում փակելը (73%), քաղցած թողնելը կամ չկերակրելը (71%), սպառնալը կամ ահաբեկելը (64%), անտեսելը (առանց ուշադրության և խնամքի թողնելը) և աշխատել ստիպելը (59%), մյուս ծնողի հետ երեխայի շփումը արգելելը (58%), նրան ծաղրելը և/կամ վիրավորելը (56%), ապտակելը, հրմշտելը (43%), հարազատի կամ ընկերների հետ շփումն արգելելը (45%), երեխայի արտաքին տեսքը, պահվածքը, մտավոր ունակությունները անընդհատ քննադատելը (46%): Հարցվածների 36%-ը փաստել են նաև, որ իրենց երեխաներն ընտանիքում երբեմն ենթարկվում են բռնության, հիմնականում՝ ֆիզիկական բռնության և/կամ ֆիզիկական պատիժի (59%), հոգեբանական բռնության (58%), անտեսման (6%): Ի դեպ, 82 %-ը մոր կողմից, 50%-ը՝ հոր կողմից:

Որպես բռնության **հիմնական պատճառներ** հարցվողները առաջին հերթին նշել են ընտանիքում վատ սովորույթների առկայությունը (հարբեցողություն, թմրամոլություն, խաղամոլություն) (84%), ընտանիքում ճգնաժամային իրավիճակի առկայությունը

(ծնողների ամուսնալուծություն, մարդկային կորուստ, ընտանիքում մշտապես կոնֆլիկտային մթնոլորտի առկայություն) (50%), բռնություն կիրառողի հոգեկան կամ մտավոր հիվանդությունների առկայությունը (48%): 16%-ը որպես պատճառ կարևորել են ՁԼՄ-ների կամ համացանցի միջոցով ներկայացվող (բռնության տեսարաններ պարունակող) նյութերը: Բացի այդ, ըստ հետազոտության, երեխաների շրջապատում նույնպես առկա է բռնություն: Այսպես՝ երեխաների 27%-ը շրջապատի կողմից ենթարկվել է բռնության, որոնցից 68%-ը՝ ֆիզիկական բնույթի, 48%-ը՝ հոգեբանական: Ընտանիքից դուրս երեխաները բռնության են ենթարկվել հիմնականում հասակակիցների կողմից (82%), ուսուցիչների (17%), դայակների և դաստիարակների կողմից (15%):

6.3. Ոլորտի օրենսդրություն, կառուցակարգային հենքեր

1993 թվականին ՀՀ-ն վավերացրեց Երեխայի իրավունքների պաշտպանության մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, ստանձնելով որոշակի պարտավորություններ, ուղղված բռնության ենթարկված երեխայի պաշտպանությանը, նրա նկատմամբ չարաշահումների կանխարգելմանը և համապատասխան սոցիալական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը: Կոնվենցիայի վավերացմանը հաջորդեց երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտին վերաբերող այլ միջազգային փաստաթղթերի ընդունումը և միջազգային նորմերին համապատասխան ազգային օրենսդրության ձևավորումը:

Առաջին քայլը այդ ուղղությամբ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքն էր, որն ընդունվեց 1996 թվականին: Հետագա զարգացումները ցույց տվեցին, որ երևոյթն ընկալվում է որպես լուրջ սոցիալական խնդիր, և նրան անհրաժեշտ է տալ համալիր լուծումներ, ապահովելով միաժամանակ երևոյթի կանխումը, կանխարգելումը և երեխայի պաշտպանությունը պետական իշխանության բոլոր մակարդակներում:

Երեխայի սոցիալական պաշտպանությանն ուղղված ներկայիս օրենսդրությունը բաղկացած է երկու մասից՝ միջազգային և ազգային: Ազգային մակարդակում երեխայի իրավունքների

պաշտպանության հետ կապված հարաբերությունները կանոնակարգվում են հետևյալ իրավական ակտերով.

1. ՀՀ Սահմանադրություն
2. ՀՀ ընտանեկան օրենսգիրք
3. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
4. Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքը, 1996թ.
5. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին ՀՀ օրենք, 2005թ.
6. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին ՀՀ օրենք, 2014թ.
7. Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենքը, 2014թ.
8. Երեխայի հանդեպ բռնության դեմ պայքարի հայեցակարգ, 2014թ.
9. Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգ, ՀՀ կառավարության 10.09.2015թ. N1044-Ն
10. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհերին, զոհերին, հատուկ կատեգորիայի զոհերին և նրանց օրինական ներկայացուցիչներին «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պաշտպանության տրամադրման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության 29.10.2015թ. N1356-Ն որոշում
11. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի և հատուկ կատեգորիայի զոհերի անվտանգ վերադարձի կազմակերպման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության 6.04.2016թ. N353-Ն որոշում
12. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհերին, զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված աջակցության տրամադրման կարգը և չափերը սահմանելու մասին ՀՀ կառավարության 05.05.2015թ. N492-Ն որոշում

13. Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրություն, ՀՀ կառավարության 02.06.2016թ. N631-Ն որոշում
14. Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատելու և ՀՀ վարչապետի 2005 թվականի հոկտեմբերի 28-ի N835-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ վարչապետի 28.12.2012թ. N1295-Ն որոշում
15. ՀՀ մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 11.12.2015թ. N1292-Ն և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 12.11.2015թ. N158-Ն համատեղ հրաման:

Ցանկը կարելի է շարունակել, սակայն սա էլ բավարար է ոլորտում իրականացվող քաղաքականությանը՝ օրենսդրական, ինստիտուցիոնալ և ծրագրային մասերով ծանոթանալու համար: Այնուամենայնիվ, առաջին անգամ խնդրին **նպատակային** անդրադարձ եղավ Երեխայի հանդեպ բռնության դեմ պայքարի հայեցակարգում, որտեղ հստակ սահմանվեցին երեխայի հանդեպ «բռնություն» հասկացությունը և բռնության տեսակները, շեշտադրվեց, որ երեխան կարող է լինել բռնության թիրախ թե՛ ընտանիքում, թե՛ ընտանիքից դուրս:²⁶

Հայեցակարգում սահմանվեցին հետևյալ հիմնական հասկացությունները.

- **Երեխայի հանդեպ բռնություն.** Երեխայի իրավունքների և ազատությունների սահմանափակում, անվտանգության խախտում և անձի արժանապատվության ոտնահարում, ցանկացած վարքագիծ, որի կիրառումը կարող է վնաս հասցնել երեխայի ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը և զարգացմանը:

²⁶ Երեխայի հանդեպ բռնության դեմ պայքարի հայեցակարգ, ՀՀ կառավարության 04.12.2014թ. նիստի N51 արձանագրային որոշում:

- **Երեխայի հանդեպ սեռական բռնություն.** հանցագործությունն երեխայի սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ:
- **Երեխայի հանդեպ ֆիզիկական բռնություն.** երեխային ծեծելը, կամ այլ բռնի գործողություններ կատարելը, խոշտանգելը, մարմնական վնասվածք հասցնելը կամ մարմնական պատժի ենթարկելը:
- **Երեխայի հանդեպ հոգեբանական բռնություն.** երեխայի հանդեպ հուզական և հոգեբանական դիտավորյալ ներգործություն, իր զարգացման համար անհրաժեշտ կապվածությունից և հուզական կապերից զրկում, որը կարող է խոչընդոտել կամ խաթարել երեխայի հոգեկան, մտավոր և վարքային զարգացմանը:
- **Երեխայի անտեսում՝** երեխայի կենսապահովման համար նրա հիմնական պահանջմունքներից դիտավորությամբ կամ անփութությամբ զրկում, որի հետևանքով երեխան հայտնվում է կյանքի և զարգացման համար վտանգավոր ու անպաշտպան իրավիճակում:

Հիմք ընդունելով մի շարք սկզբունքներ, մասնավորապես՝ երեխայի պաշտպանության հարցում բոլոր շահագրգիռ կողմերի միասնական մոտեցման և փոխհամագործակցության ապահովման սկզբունքները, հայեցակարգի հեղինակները օրենսդրության կատարելագործումը, համագործակցության կառուցակարգերի ստեղծումը/հզորացումը, սոցիալական աջակցության համակարգի ներդրումը սահմանեցին որպես պայքարի հիմնական ուղղություններ:

Այսօր Հայաստանում գործում է երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգ՝ համայնքային, մարզային և ազգային մակարդակներում, որտեղ, բացի գործադիրից, մասնակից կողմեր են՝

- անչափահասների գործերով ՀՀ ոստիկանության բաժինները
- դատախազությունը, դատարանները.
- սոցիալական ծառայության տարածքային գործակալությունները.

- առողջապահական հիմնարկները.
- կրթական հաստատությունները,
- ՀՀ օրենսդրությամբ լիազորված այլ մարմինները, որոնք իրենց գործունեության մեջ առաջնորդվում են երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության սկզբունքներով:

Իրենց լիազորությունների շրջանակում բոլոր այս կառույցներն ապահովում են երեխայի պաշտպանությունը բռնությունից, դաժան վերաբերմունքից և շահագործումից, հայտնաբերում են սոցիալապես վտանգավոր վիճակում գտնվող երեխաներին, ցուցաբերում նրանց անհրաժեշտ օժանդակություն: Արդյունքում ստեղծվում են երեխայի անվտանգության և վերականգնման, ընտանիքում բռնության պատճառների վերացման հիմքերը, կազմակերպվում է երեխայի խնամքը՝ ընտանիքում կամ հաստատությունում, իրականացվում են կանխիչ և կանխարգելիչ միջոցառումներ:

Առաջին՝ համայնքային մակարդակում երեխայի պաշտպանության իրավաքաղաքացիական մեխանիզմում շղթայի ամենաստորին, սակայն ամենակարևոր օղակը **խնամակալության և հոգաբարձության մարմիններն են և կից գործող հանձնաժողովները:**

Հորիզոնական մակարդակում հանձնաժողովները համագործակցում են իրենց համայնքի բոլոր կառույցների հետ, ապահովելով երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը նրանց ծնողների մահվան, ծնողական իրավունքներից զրկելու, ծնողական իրավունքները սահմանափակելու, ծնողներին անգործունակ ճանաչելու, երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից ծնողների խուսափելու (այդ թվում՝ դաստիարակչական, բժշկական, սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից իրենց երեխաներին վերցնելուց ծնողների հրաժարվելու դեպքերում), ինչպես նաև ծնողական խնամքի բացակայության այլ դեպքերում: Խոսքը գնում է բուժհաստատությունների, կրթական հաստատությունների, ինտեգրված սոցիալական ծառայությունների, ոստիկանության բաժանմունքների մասին: Սա

այն կառույցներն են, որոնք առաջինն են ստանում ահազանգը, գնահատում են վտանգի աստիճանը և այն դեպքերում, երբ երեխայի կյանքին և առողջությանը վտանգ է սպառնում, նրա իրավունքներն ու շահերը խախտվում են, իսկ ծնողը կամ օրինական ներկայացուցիչը ինչ-ինչ պատճառով չի ապահովում երեխայի պաշտպանությունը, տեղեկատվությունը փոխանցում են խնամակալության և հոգաբարձության մարմիններին և կից գործող հանձնաժողովներին²⁷ երեխայի շահերի պաշտպանությանն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու համար: Միջոցը որոշվում է իրավիճակի գնահատման հիման վրա:

Մարզերում խնամակալության և հոգաբարձության մարմինները համայնքների ղեկավարներն են, իսկ Երևանում՝ վարչական շրջանների ղեկավարները: Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կազմը ձևավորվում է համայնքային մասնագետներից: Հանձնաժողովում կարող են ընդգրկվել մարզպետարանների (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների, սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) աշխատողներ, համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներ, բուժաշխատողներ, համայնքի մանկավարժներ, հոգեբաններ, սոցիալական աշխատանքի մասնագետներ և իրավաբաններ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ (համաձայնությամբ): Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել նաև ոստիկանության ներկայացուցիչները, իսկ անդամների ընդհանուր թիվը կարող է կազմել երեքից մինչև ինը անձ. Խնամակալության և հոգաբարձության մարմինները ազատ են իրենց ընտրության (անդամների թվի և մասնագիտական կազմի առումով) մեջ:

Խնամակալության և հոգաբարձության մարմինները՝

- բացահայտում են երեխաների նկատմամբ դաժան վերաբերմունքի, այդ թվում՝ շահագործման դեպքերը.
- հայտնաբերում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին և ապահովում են տեղեկատվության փոխանակում.

²⁷ ՀՀ ընտանեկան օրենսգիրք, հոդված 134:

- օրինական ներկայացուցիչ չունեցող անչափահաս տուժողի համար հանդես են գալիս որպես օրինական ներկայացուցիչ և մասնակցում դատարանում գործերի քննությանը և քրեական վարույթում.
- պարբերաբար մշտադիտարկում են համայնքում տիրող իրավիճակը,
- համագործակցում են իրավապահ մարմինների հետ:

Ընդհանուր առմամբ, փոխգործակցությունը թվարկված մարմինների միջև իրականացվում է երկու եղանակով՝ երեխայի/դեպքի մասին տեղեկատվության փոխանակման և երեխայի ուղղորդման: Օրինակ՝ եթե ընտանիքում երեխայի կյանքին կամ առողջությանը վտանգ է սպառնում, դեպքը բացահայտող անձը/կառույցը փոխանցում է տեղեկատվությունը գործընթացի համապատասխան մասնակիցներին՝ ոստիկանությանը և/կամ խնամակալության և հոգաբարձության մարմնին և/կամ սոցիալական ծառայությանը և/կամ միջգերատեսչական համագործակցության այլ կողմերից մեկին: **Ոստիկանությունը** հարուցում է գործը և հավաքում ապացույցներ՝ երեխային տուժող ճանաչելու, **խնամակալության և հոգաբարձության մարմինը** կարգավորում է երեխայի և ծնողի իրավահարաբերությունները. եթե անհրաժեշտ է, ապահովում է նրա ժամանակավոր տեղավորումը և 7-օրյա ժամկետում դիմում դատարան՝ ծնողներին ծնողական իրավունքից զրկելու կամ ծնողական իրավունքները սահմանափակելու հայցով, իսկ եթե նման խիստ միջոցների կարիք չկա, խնդիրը լուծվում է տեղում՝ կողմերի փոխգործակցության միջոցով: Համագործակցող կողմ այս պարագայում կարող են լինել **սոցիալական ինտեգրված ծառայությունները** (դեպքի վարում), **ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության մարզային բաժինները** (մասնագիտական խորհրդատվություն, կազմակերպչական հարցեր), **հասարակական կազմակերպությունները** (առաջնային աջակցություն), **խնամքի հաստատություններ**: Միևնույն ժամանակ, թե՛ բռնության ենթարկված երեխայի բացահայտման, թե՛ հայտնաբերման, թե՛ տեղեկատվության փոխանակման, թե՛ օրինական ներկայացուցչի հետ հաղորդակցման դեպքում ոստիկանությունն ունի ուղղակի մասնակցություն,

նպաստելով երեխայի անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությամբ թելադրված որոշումների կայացմանը:

Երեխայի հետագա ճակատագրի ճիշտ լուծման առումով չափազանց կարևոր է ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների դերը և վերջինի համագործակցությունը խնամակալության և հոգաբարձության մարմինների հետ: Մարզային բաժինները կազմում են երեխայի իրավունքների պաշտպանության երկրորդ՝ մարզային մակարդակը: Բաժինները կազմված են բազմամասնագիտական խմբերից, որոնց կազմում լինում է բժիշկ, մանկավարժ, հոգեբան, սոցիալական աշխատող, իրավաբան: Ի սկզբանե նախատեսվել է, որ բաժինների մասնագետները կարող են և պետք է մասնակցեն բռնության ենթարկված երեխաների պաշտպանությանն ուղղված գործողություններին, այդ թվում անչափահասի մասնակցությամբ վարույթում: Այս առումով մարզային բաժինների և խնամակալության և հոգաբարձության մարմինների գործառույթները համահունչ են և փոխլրացնում են միմյանց: Դրանից բացի, բաժինների գործընկերներն են սոցիալական աջակցության տարածքային գործակալությունները, ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով զբաղվող ծառայությունները, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկները, բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովները, ուսումնական հաստատությունները, առողջապահական հիմնարկները, հասարակական կազմակերպությունները, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունները, ՀՀ կառավարության 10.09.2015թ. N 1044-Ն որոշմամբ հաստատված միջգերատեսչական սոցիալական համագործակցության այլ կողմերը: Բաժնի կարևորագույն խնդիրներից է մարզում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների պաշտպանությունն ու նման իրավիճակների կանխարգելումը, և, դրանով պայմանավորված, բաժինների գործառույթներն ուղղված են՝

- կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների
- կենսապայմանների ուսումնասիրությանը,
- այդ երեխաների մասին տեղեկատվության փոխանակմանը,

- երեխայի կյանքին և առողջությանը սպառնացող
- իրավիճակների մասին տեղեկատվություն ստանալու
- դեպքում՝ իրենց իրավասությունների շրջանակում անհրաժեշտ միջոցների ձեռնարկմանը:

Ինչպես տեսնում ենք, այստեղ նույնպես՝ սկսած տեղեկատվության փոխանցման պահից, գործընթացի մասնակից է դառնում ուստիկանը, որը իր միջամտությամբ սկիզբ է դնում ընտանիքում հետագա անցանկալի զարգացումների կանխմանը և բռնությունից տուժած երեխայի իրավական պաշտպանությանը: Մյուս կողմից, հաշվի առնելով տուժող երեխաների մասնակցությամբ իրականացվող վարույթում մասնագետների (մանկավարժ, սոցիալական աշխատող, հոգեբան) ներգրավման անհրաժեշտությունը, այստեղ նույնպես շեշտը դրվում է միմյանց ռեսուրսների օգտագործման վրա: Սա առավել ևս կարևոր է, քանի որ բաժինները ոչ միայն կարող են մասնակցել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների այն նիստերին, որտեղ քննարկվում են երեխայի հետ կապված հատուկ դեպքերը և պաշտպանվում են նրանց իրավունքներն ու շահերը, այլ և ուստիկանության համապատասխան ծառայությունների հետ համատեղ լիազորված են քննարկել մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ և հանցագործություն կատարած անչափահասների կողմնորոշման խնդիրները, և, հարկ լինելու դեպքում, կազմակերպել երեխայի ուղղորդումը խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություն: Հետաքրքիր է, որ բաժիններն ունեն մի կանոնադրական նորմ, որն, ըստ էության, անտեսված է, և վերաբերում է այդ կառույցների համապատասխան մասնագետների իրավասությանը՝ մասնակցել այն դատական նիստերին, որտեղ քննարկվում են երեխայի իրավունքներն ու շահերը:²⁸ Այսպիսով, ունենք երկու նորմ, ըստ որի համայնքի և մարզի երկու կարևորագույն կառույց լիազորված են մասնակցելու անչափահասների գործերով իրականացվող վարույթում և, համագործակցելով ուստիկա-

²⁸ ՀՀ մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 11.12.2015թ. N1292-Ն և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 12.11.2015թ. N158-Ն համատեղ հրաման, III բաժին, կետ 15:

նության հետ, նպաստել դեպքի բազմակողմանի քննությանը և արագ արձագանքման մեխանիզմների կատարելագործմանը:

Ուղղահայացի ամենաբարձր՝ ազգային մակարդակում, գործում է Երեխայի իրավունքների պաշտպանության Ազգային հանձնաժողովը, որի աշխատանքները համակարգվում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից, իսկ հանձնաժողովի նախագահը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարն է: Հանձնաժողովի կազմում ընդգրկված են բոլոր այն պետական մարմիններն ու կազմակերպությունները, որոնք ունեն իրավասություններ երեխայի պաշտպանության և աջակցության հարցում: Բացի աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից, այդ ցանկում են ՀՀ կրթության և գիտության, ՀՀ մշակույթի, ՀՀ առողջապահության, ՀՀ արդարադատության, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման, ՀՀ ֆինանսների նախարարությունները, ՀՀ ոստիկանությունը: Հանձնաժողովի նպատակն է՝ նպաստել երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանը, աջակցել ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտի պատասխանատու մարմինների գործունեության համակարգմանը:²⁹ Ըստ էության բոլոր այն դեպքերում, երբ հորիզոնական կապերը համայնքում և/կամ մարզում, ինչպես նաև ուղղահայաց կապը համայնքի և մարզի միջև խախտվում է կամ բավարար չէ առաջացած խնդիրների լուծման համար, խնդիրը տեղափոխվում է վերին ատյան, որտեղ ընդունվում են ոչ թե ընթացակարգային, այլ քաղաքականության իրականացման հետ կապված որոշումներ:

Այսպիսով, երեխայի իրավունքների պաշտպանության համակարգում գործող հիմնարկների և մարմինների գործունեությունը ընդհանուր առմամբ ուղղված է գործող օրենսդրության իրավակիրառելիության բարձրացմանը, անչափահասի անվտանգության ապահովմանը, բռնության պատճառների և հետևանքների վերացմանը՝ նոր մեխանիզմների մշակման, ընտանիքին օժանդակելու, անչափահասին վերականգնելու, նրա խնամքը՝

²⁹ «Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատելու և ՀՀ վարչապետի 2005 թվականի հոկտեմբերի 28-ի N835-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ վարչապետի 28.12.2012թ. N1295-Ն որոշում:

ընտանիքում կամ հաստատությունում կազմակերպելու, անչափահասի նկատմամբ հանցագործությունների կատարումը կանխելու և կանխարգելելու միջոցով:

Ոլորտի աշխատանքներն իրականացվում են վերը նշված կառույցների կանոնադրական խնդիրների համաձայն և համապատասխան ծրագրերի շրջանակներում՝ ապահովելով միջգերատեսչական սոցիալական համագործակցությունը:³⁰

Համագործակցությունը լուծում է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված բազմաթիվ խնդիրները:

Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման անչափահաս զոհերի հայտնաբերման դեպքում գործում է առանձին ընթացակարգ, որը սահմանված է «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքով և օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտերով, որոնք կարգավորում են այդ խմբի նույնացման, աջակցության և պաշտպանության հետ կապված հարաբերությունները: Օրենքում օգտագործվում է նոր՝ **«հատուկ կատեգորիայի զոհ»** հասկացություն, որը վերաբերում է *«երեխաներին և հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձանց»*: Ըստ էության, այս «հավասարեցումը»՝ երեխայի և հոգեկան խանգարում ունեցող անձի, լրացուցիչ շեշտում է անչափահասի կախվածությունը մեծահասակից, նրա անօգնական և անպաշտպան լինելը տարիքով ավելի մեծերի քմահաճույքից: Հայտնաբերման պահից հատուկ կատեգորիայի զոհերը հայտնվում են իրավասու մարմինների ուշադրության կենտրոնում և հետագա բոլոր գործողությունները, կապված նույնացման, աջակցության և պաշտպանության հետ, իրականացվում են այդ մարմինների համաձայնեցված աշխատանքի միջոցով: Համաձայն օրենքի, իրավասու մարմիններ են համարվում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ իր կառուցվածքային և առանձնացված

³⁰ Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 10.09.2015թ. N1044 որոշում:

ստորաբաժանումներով, ՀՀ ոստիկանությունը՝ իր տարածքային բաժանմունքներով և գործընկեր հասարակական կազմակերպությունները:³¹ Հատկանշական է, որ այդ չորս կողմերն ընդգրկված են ՀՀ վարչապետի 2015 թվականի սեպտեմբերի 15-ի N835-Ա որոշմամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում ստեղծված մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման հանձնաժողովի կազմում, որը իր որոշումներով տալիս է թրաֆիքինգի զոհերին օգնություն ստանալու իրավունք կամ մերժում է այդ իրավունքը: Օգնության իրավունքը զոհերն իրացնում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ԱՄԲՈՐ կազմակերպության աջակցությամբ:

6.4. Միջգերատեսչական համագործակցություն.

6.4.1. Տեղեկատվության փոխանակում, բռնության ենթարկված երեխայի ուղղորդում

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների և շահերի արդյունավետ պաշտպանության լավագույն միջոցը այդ երեխաների վաղ հայտնաբերումն է: Այս նորմը ամրագրված է ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 110-րդ հոդվածում, որի համաձայն «հիմնարկների (նախադպրոցական կրթական, հանրակրթական, բժշկական կամ նմանատիպ այլ կազմակերպությունների) պաշտոնատար անձինք, որոնք տեղեկություններ ունեն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով նշված երեխաների մասին³², պարտավոր են այդ մասին հաղորդել խնամակալության

³¹ Գործընկեր հասարակական կազմակերպությունների ընտրության կարգը, մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ընտրության կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության 30.07.2015թ. N 851-Ն որոշում:

³² ՀՀ Ընտանեկան օրենսգրքը, 2005թ., հոդ.109. «...ծնողների մահվան, նրանց ծնողական իրավունքներից զրկելու, ծնողական իրավունքները սահմանափակելու, ծնողներին անգործունակ ճանաչելու, երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից ծնողների խուսափելու (այդ թվում՝ դաստիարակչական, բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից իրենց երեխաներին վերցնելուց ծնողների հրաժարվելու դեպքերում), ինչպես նաև ծնողական խնամքի բացակայության այլ դեպքերում...»:

և հոգաբարձության մարմիններին՝ ըստ երեխաների փաստացի գտնվելու վայրի»։ Հիշատակված նորմի իրականացման մեխանիզմն ամրագրված է մի շարք ենթաօրենսդրական ակտերում, այդ թվում՝ ՀՀ կառավարության 10.09.2015թ. N1044-Ն որոշման մեջ, որը կարգավորում է սոցիալական աջակցության տրամադրման գործընթացում միջգերատեսչական համագործակցության ձևերի ու կարգի, համագործակցող կողմերի միջև փոխանակվող տեղեկությունների ծավալի, խնդրահարույց այն դեպքերի, որոնք կարող են նախանշել անձի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված լինելը կամ հայտնվելու հնարավորությունը, մշտադիտարկման և գնահատման ընթացակարգի հետ կապված հարաբերությունները:

Միջգերատեսչական համագործակցության հիմնական խնդիրը համալիր գործողությունների իրականացումն է և նպատակաուղղված է՝

- հանցագործությունից տուժած երեխայի իրավունքների պաշտպանությանն ու վերականգնմանը,
- երեխային սոցիալ-հոգեբանական և իրավական աջակցությանը,
- երեխայի օգնության և պաշտպանության համար բավարար ռեսուրս ունեցող ծնողի (օրինական ներկայացուցչի), այլ հարազատի մոտ մոտիվացիայի ձևավորմանը՝ պաշտպանող կամ աջակցող կազմակերպություն երեխայի հետ ուղղորդվելու անհրաժեշտության մասին նրան տեղեկացնելը,
- երեխայի անվտանգությունն ապահովելու նպատակով համատեղ գործողություններ սահմանող կանոնակարգերի մշակմանը/սահմանմանը,
- օգնություն ցուցաբերող կազմակերպությունների մասին տեղեկատվության մատչելիության ապահովմանը:

Անչափահասներին օգնության հասնող միջգերատեսչական համագործակցության կողմերն են.

- բնակչության սոցիալական պաշտպանության տարածքային գործակալությունները և խնամքի հաստատությունները,

այն է՝ երեխայի սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոնները, ժամանակավոր կացարանները, մանկատները և գիշերօթիկ հաստատությունները (տեղեկատվության կարգով նշենք, որ ներկայում նախարարությունում մեկնարկել է համակարգում գործող մանկատների և գիշերօթիկների վերակազմակերպման գործընթացը, որի արդյունքում նախատեսվում է ստեղծել երեխայի խնամքի առավել արդյունավետ համակարգ),

- անչափահասների գործերով հանձնաժողովները,
- խնամակալության և հոգաբարձության մարմինները,
- մարզային բաժինները
- ոստիկանության ստորաբաժանումները:

Դրանք բացահայտում են բռնության դեպքերը և հաշվառում, բացահայտում են անօգնական կամ կյանքի և առողջության համար վտանգավոր վիճակում գտնվող երեխաներին, կազմակերպում են տուժողի իրավական պաշտպանությունը, ապահովում են տեղեկատվության փոխանակումը դեպքի և տուժողի մասին, տուժողի ուղղորդումը, մասնակցում են (յուրաքանչյուրն իր իրավասությունների շրջանակում)՝

- երեխայի սոցիալական հարմարեցման գործընթացում (անց են կացնում կանխարգելիչ զրույցներ, բացատրում են երեխային իր իրավունքներն ու պարտականությունները),
- սոցիալական վերականգնման գործընթացում (երեխային ուղղորդում են դեպի համապատասխան ծառայություններ, ընդունում են որոշումներ, կապված ծնողական իրավունքների հետ),
- կրթության իրավունքի ապահովման հարցում,
- ներգրավում են մասնագետներին (հոգեբան, մանկավարժ, բժիշկ, սոցաշխատող):

Համագործակցության շրջանակում **ինտեգրված սոցիալական ծառայությունները** վարում են դեպքերը, տարանջատելով մեկը մյուսից՝ ըստ վտանգի աստիճանի և գնահատելով դրանցից յուրաքանչյուրը որպես՝

- քիչ վտանգավոր, եթե այն չի կրում պարբերական բնույթ, իսկ հետևանքները շատ ծանր չեն,
- միջին չափի վտանգավոր, եթե կա սպառնալիք երեխայի առողջությանը, կյանքին, զարգացմանը, հետագայում արտահայտվող հետևանքներով,
- կրիտիկական աստիճանի վտանգավոր, եթե պահանջվում է շտապ, օպերատիվ արձագանք՝ լուրջ հետևանքներից, ընդհուպ մինչև երեխայի մահը, խուսափելու համար: Արդյունքում, ծառայությունները ոչ միայն բացահայտում և գնահատում են բռնությունը, այլև աշխատում են բռնության պատճառներն ու պայմանները վերացնելու ուղղությամբ, իրականացնում են կանխարգելիչ աշխատանքներ, օժանդակում են ընտանիքին, իրականացնում են սոցիալական սպասարկումը, հարկ եղած դեպքում համագործակցում են խնամակալության և հոգաբարձության մարմինների հետ:

Առողջապահական հիմնարկները գնահատում են երեխային հասցված ֆիզիկական վնասը, դրա հնարավոր հետևանքները, նշանակում են բուժում, փոխանցում են տեղեկատվությունը պատասխանատու այլ մարմիններին, առաջարկություն անում երեխայի խնամքը կազմակերպելու վերաբերյալ:

Կրթական հաստատությունները և կրթության մարմինները բացահայտում են երեխային և գնահատում իրավիճակը, հաշվառում են սոցիալապես վտանգավոր վիճակում գտնվող երեխաներին և վերահսկում իրավիճակը, խորհրդատվական օգնություն են ցուցաբերում տուժողի ծնողներին:

Խնամակալության և հոգաբարձության մարմինները բացահայտում են պետության հոգածության կարիք ունեցող երեխաներին, ում ծնողների/օրինական ներկայացուցիչների գործողությունները կամ անգործությունը վտանգում է երեխայի կյանքն ու առողջությունը և բացասական ազդում նրա դաստիարակության վրա, իրականացնում են նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունը, մասնակցում են կանխարգելիչ աշխատանքներին, դատական նիստերին, մինչև խնամակալ նշանակելն իրականացնում են խնամակալի պարտականությունները³³,

³³ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 37:

իսկ եթե անչափահաս տուժողը չունի օրինական ներկայացուցիչ, խնամակալության և հոգաբարձության մարմինը անչափահաս տուժողի մասնակցությամբ քրեական վարույթում հանդես է գալիս որպես **փուժողի օրինական ներկայացուցիչ**:

ՀՀ ոստիկանությունը, որին փոխանցվում են բոլոր տեղեկությունները, օգտագործում է նաև վերը նշված մարմինների և կազմակերպությունների ռեսուրսները՝ անհրաժեշտ հիմնավոր փաստերը/ապացույցները կուտակելու, մասնագետների հետ հաղորդակցվելու և երեխայի պաշտպանության եղանակը որոշելու համար:

6.5. Երեխայի խնամքի և պաշտպանության հաստատությունների տեսակներ

Երեխայի խնամքը ընտանիքից դուրս կարող է լինել շուրջօրյա, ցերեկային կամ ժամանակավոր և կազմակերպվել մանկատներում (այդ թվում՝ մասնագիտացված), գիշերօթիկ հաստատություններում, ցերեկային հոգաձության կենտրոններում, կացարաններում, սոցիալ-հոգեբանական վերականգնողական կենտրոններում: Այդ հաստատությունները, ապահովելով երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնումը, օգնելով ընտանիքին հաղթահարել ճգնաժամային վիճակը, ապահովելով առանց ծնողական խնամքի մնացած և/կամ սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքների երեխաների խնամքը, կանխարգելում են կյանքի դժվարին իրավիճակները, օգնում են երեխային (ընտանիքին) վերադառնալ բնականոն կյանքի:

Հանրապետությունում գործում են երեխայի խնամքի, պաշտպանության և սոցիալ-հոգեբանական վերականգնողական հետևյալ հաստատությունները.

ա) ցերեկային կենտրոններ. Երևանում՝ «Ձատիկ աջակցության կենտրոն», Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգաձության կենտրոն, Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգաձության կենտրոն: Կենտրոններն, ուր գալիս են սոցիալապես անապահով, անբարենպաստ ընտանիքների երեխաները, կազմակերպում են երեխաների ժամանցը, ապահովում են սննդով, պաշտպանում են փողոցից, ինչպես նաև

վերահսկում են նմանատիպ ընտանիքները: Կենտրոնները քաջատեղյակ են իրենց այցելուների ընտանիքներից և հարկ լինելու դեպքում կարող են նաև տրամադրել կարևոր տեղեկատվություն ընտանիքում անցանկալի զարգացումների կանխման ուղղությամբ:

բ) երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն. այն սպասարկում է Երևանի երեք վարչական շրջանների ընտանիքներին՝ Նուբարաշեն, Էրեբունի, Շենգավիթ վ/շ:

գ) մանկատներ. կազմակերպում են 0 – 18 տարեկան երեխաների շուրջօրյա խնամքը. Երևանում՝ 0 – 5 տարեկան երեխաների համար, Վանաձորում և Գավառում՝ 0 – 18 տարեկան երեխաների համար;

դ) գիշերօթիկ հաստատություններ. Նույնպես ապահովում են շուրջօրյա խնամք, սակայն հանգստյան օրերին երեխան կարող է վերադառնալ ընտանիք: Երևանում գործում են թիվ 1 և թիվ 2 գիշերօթիկ հաստատությունները: Գիշերօթիկներ կան նաև Կապանում, Վանաձորում, Դիլիջանում, Բյուրեղավանում, Գյումրիում;

ե) ժամանակավոր կացարաններ. հանրապետությունում ժամանակավոր կացարանների թիվը մեծ չէ: Մի կացարան ունի ԱՄՔՈՐ կազմակերպությունը: Նա ծառայություններ է մատուցում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման, ինչպես նաև սեռական բռնության զոհերին, այդ թվում՝ անչափահաս զոհերին: Կանանց աջակցման կենտրոնի ապաստարանը սպասարկում է բռնության ենթարկված կանանց և աղջիկներին: Նույն գործառույթն իրականացնում է «Լայթ Հաուզ» կազմակերպությունը, որը ժամանակավոր կացարան է տրամադրում կանանց և աղջիկներին: Երեքի ծածկույթն էլ ողջ հանրապետությունն է:

զ) Հայ օգնության ֆոնդի Երեխաների աջակցության կենտրոն հիմնադրամը գործում է Երևանում: ՀՕՖ-ը զբաղվում է մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ երեխաներով, տրամադրում է ժամանակավոր կացարան, կանխարգելում է երեխաների այդ վիճակում հայտնվելու վտանգը, կազմակերպում է նրանց սոցիալ-հոգեբանական վերականգնումը: Կենտրոնն ընդունում է 3 – 18 տարեկան երեխաներին, ովքեր ինքնակամ լքել են ընտանիքը, չեն հաճախում դպրոց, ենթարկվել են բռնության:

ՀԱՎԵԼՎԱԾ 5

1. Հարցաշար-անկետաներ

Ընտանիքում հոգեբանական մթնոլորտը բացահայտելու և երեխայի համար ընտանիքում ապրելու վտանգի աստիճանը նախնական գնահատելու համար

| ԱՆԿԵՏԱ #1 | ԱՆԿԵՏԱ #2 |
|--|---|
| Հարցաշար ծնողների համար. ընտանիքում երեխաների հանդեպ բռնության դեպքերի բացահայտում | Հարցաշար երեխաների համար. ընտանիքում երեխաների հանդեպ բռնության դեպքերի բացա- հայտում |
| 1. Ձեր երեխան երբևէ փախել է. Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> Ծնողների հետ վեճի պատճառով | Երբևէ փախել ես տնից. Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> Վիճել եմ ծնողներիս հետ |
| 2. Դուք կիրառում եք ֆիզիկական պատիժ. Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> Երբեմն <input type="checkbox"/> | 2. Դու ենթարկվել ես ֆիզիկական բռնության (քեզ ծեծել են). Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> Երբեմն <input type="checkbox"/> Հաճախ <input type="checkbox"/> |
| 3. Ձեր կարծիքով, ֆիզիկական պատիժը կարելի է համարել դաժան վերաբերմունք. Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> Չզիտեմ <input type="checkbox"/> | 3. Ինչ ես կարծում, ֆիզիկական բռնությունը կարելի է համարել դաժան վերաբերմունք. Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> Ինձ համար դա սովորական է: |
| 4. Ո՞րն է Ձեր երեխային պատժելու հիմնական պատճառը. <ul style="list-style-type: none"> • Ընդհանրապես չեմ պատժում: • Վատ վարքը: • Ուղղակի պատժում եմ, Դա իմ մեթոդն է: • Երբ կոպիտ բառեր է օգտագործում: • Երբ հագուստը կեղտոտում է: | 4. Ինչի համար են քեզ սովորաբար պատժում. <ul style="list-style-type: none"> • Ինձ ընդհանրապես չեն պատժում: • Վատ թվանշանների համար: • Տուն ուշ վերադառնալու համար: • Ծոկության և խաբելու համար: • Ծխելու համար: |
| 5. Կարծում եք միշտ արդարացի եք. <ul style="list-style-type: none"> • Միշտ արդարացի • Ավելի հաճախ արդարացի • Ավելի հաճախ անարդարացի • Միշտ անարդարացի: | 5. Որտե՞ղ է հիմնականում տեղի ունենում բռնարարքը. <ul style="list-style-type: none"> • Դպրոցում • Փողոցում • Տանը |

| | |
|---|--|
| <p>6. Ի՞նչ է պատիժը.</p> <ul style="list-style-type: none"> • Դաժան վերաբերմունք երեխայի նկատմամբ • Անհրաժեշտ դաստիարակչական միջոց: | <p>6. Ո՞վ է քեզ նվաստացնում.</p> <ul style="list-style-type: none"> • Տղաները/աղջիկները • Ծնողները • Ուսուցիչները |
| <p>7. Ի՞նչ եք զգում երեխային պատժելիս.</p> <ul style="list-style-type: none"> • Նեղություն երեխայի համար • Բարկություն • Հարվածելու ցանկություն • Անտարբերություն • Վախ • Ատելություն • Ստորացում: | <p>7. Ի՞նչ ես զգում, երբ քեզ վիրավորում են, բղավում են, ստորացնում են.</p> <ul style="list-style-type: none"> • Վիրավորանք • Ջղայնություն • Անհայտանալու ցանկություն • Անտարբերություն • Վախ • Ատելություն • Պատասխանելու ցանկություն |
| <p>8. Եթե փողոցում նկատեք դաժան վերաբերմունք երեխայի նկատմամբ, դուք՝</p> <ul style="list-style-type: none"> • Անպայման կմիջամտեք • Արագ կհեռանաք • Ուշադրություն չեք դարձնի • Միջոցներ կձեռնարկեք (օր.՝ կդիմեք ոստիկանություն): | <p>8. Դու որևէ մեկին պատմե՞լ ես քեզ հետ կատարվածի մասին. Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/></p> |

Ստուգիչ հարցեր

1. Ո՞վ և ի՞նչ ծառայություններ կարող է մատուցել բռնության ենթարկված երեխային:
2. Ի՞նչ ծառայություններ կան ձեր մարզում (Երևանում):
3. Ո՞ւմ հետ կարող է համագործակցել ոստիկանը՝ բռնության ենթարկված երեխայի սոցիալական պաշտպանությունն ապահովելու համար:
4. Ո՞րն է երեխայի պաշտպանությունն իրականացնող կողմերի՝ միմյանց մասին տեղեկացված լինելու նպատակը:
5. Որո՞նք են ընտանեկան բռնության դեմ պայքարում ներգրավված մարմինները, ծառայություններն ու կազմակերպությունները:
6. Ստորև ներկայացված մարմինների, ծառայությունների, կազմակերպությունների, հիմնարկությունների

ցանկից ընտրեք սոցիալական ոլորտի այն գործընկեր-
կառույցը, ում կարիքն առավել հաճախ է առաջանում ձեր
աշխատանքում.

- հասարակական կազմակերպություններ,
- ՀՀ քննչական կոմիտե,
- խնամքի հաստատություններ,
- կրթական հաստատություններ,
- առողջապահական հիմնարկներ,
- խնամակալության և հոգաբարձության մարմիններ,
- ինտեգրված սոցիալական ծառայություններ:

7. Նկարագրեք համագործակցության ձևերը:

ՕՐԻՆԱԿՆԵՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ/ԿԱՄ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Առաջադրանք 1

Մեկնաբանեք դեպքերը՝ ըստ իրավախախտման ձևի / հանցագործություն՝ քրեական, վարչական, կենցաղային, հանցագործություն չէ, ընտանեկան բռնություն, խուլիգանություն:

| | |
|--|---|
| 17 տարեկան պատանին հարձակվել է 10 տարեկան երեխայի վրա, որը հեծանիվ էր քշում, ծեծել նրան և տարել (գողացել) հեծանիվը: | Բակում երեխաները քաշքշել են իրար, որի արդյունքում մեկը մյուսին հարվածել և մարմնական վնասվածք է հասցրել: |
| Հայրը պարբերաբար պատժում է երեխային, առանց որևէ լուրջ պատճառի ապտակում է, բղավում է, ահաբեկում է: | Ծնողը դաժան ծեծել է երեխային, հարևանները ստիպված են եղել միջամտել, որից հետո զանգել են ոստիկանություն: |
| Հարևաններից մեկը ջղայնացել է բակում աղմկող երեխաների վրա, վերցրել գնդակը և դանակով ճղել: Քաշքշոցի արդյունքում երեխաներից մեկի ձեռքերին առաջացել են կապտուկներ: | Ծնողը բոլորի ներկայությամբ՝ հարևանների, բարեկամների, ծանոթների մոտ հաճախակի ծաղրում է երեխային: |
| Ծնողները զբաղվում են հարբեցողությամբ, ստիպում են երեխային մուրացկանությամբ դրամ հավաքել և ապահովել խմիչքը: | |

Առաջադրանք 2

Ծանոթացեք պատմությանը և քննարկեք դեպքը՝

ա/ նույնացրեք տուժողին որպես ֆիզիկական, կամ սեռական, կամ հոգեբանական բռնության, կամ անտեսման, կամ դաժան վերաբերմունքի զոհ,

բ/ գնահատեք վտանգի աստիճանը,

գ/որոշեք միջամտող կողմերին, պատասխանեք այլ հարցերի

5 տարեկան երեխան ապրում է մոր և տատիկի հետ: Տատիկն աշխատում է և դրա շնորհիվ փոքրիկը որևէ բանի կարիք չունի. հաճախում է մանկապարտեզ, լավ սնվում է, ապահովված է հագուստով, քանի որ տատիկը մասնավոր դայակ է և իր խնամվող երեխաների ծնողները նրան տալիս են նաև իրենց մեծացած երեխաների որակյալ հագուստը: Մայրը երեխային պահում է մաքուր, սակայն վերաբերմունքը երեխայի նկատմամբ անհանգստացնում է տատիկին և հարևաններին: Նա չափից ավելի խիստ և կոպիտ է վարվում երեխայի հետ, օրինակ՝ երեխային քնեցնելիս, զգուշացնում, որ ինչ դիրքով պառկեցրել է, այդ դիրքում էլ մնա մինչև լույս:

Հարևանները հաճախ են լսում երեխայի լացը և բղավոցը և համոզված են, որ մայրը ծեծում է նրան (թեև հետքեր չկան):

Երեխան վախենում է մեծերից, չի խոսում, հարցերին չի պատասխանում, հաճախ լացում է, փորձ է կատարել փախչել տանից:

ա/ Նշեք բռնության հիմնական հատկանիշները, որոշեք բռնության տեսակը (եթե համարում եք, որ տեղի ունեցողը բռնություն չէ, բացատրեք՝ ինչո՞ւ):

բ/ Արդյո՞ք երեխան ունի օգնության կարիք, թե՞ ծնողն ընդամենը դաստիարակում է նրան և խստապահանջ է:

գ/ Ի՞նչ դերակատարում ունի, Ձեր կարծիքով, տատիկը: Ի՞նչ կարող են անել հարևանները: Ո՞րն է առաջին քայլը:

դ/ Արդյո՞ք խախտվել են երեխայի սահմանադրական իրավունքները:

ե/ Ո՞ր օրենքներով է պաշտպանվում երեխան այս դեպքում:

Առաջադրանք 3

Թվարկված բռնության պատճառներից ընտրեք Ձեր կարծիքով առավել կարևոր 3 պատճառները.

- ցածր կենսամակարդակ, աղքատություն,
- ակոհոլիզմ,
- մարգինալիզացված ընտանիքներ, ցածր կրթական ցենզով ընտանիքներ,
- կինոյի, հեռուստահաղորդումների, ՁԼՄ-ների կողմից ագրեսիայի քարոզչություն,
- ընտանիքի անդամների կարծրատիպային դերեր,
- գործազրկություն, աշխատանքը կորցնելու վախ,
- հասարակության կողմից անտարբերություն/ պատժի գաղափարի չընդունում,
- բնակարանային ծանր պայմաններ,
- սոցիալական ցման հետ կապված խնդիրներ:

ՀԱՎԵԼՎԱԾ 6

ԵՐԵՒԱՅԻ ԽՆԱՄՔ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության մարզային բաժիններ

| | Մարզը | Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության մարզային բաժիններ | հեռախոսի համարները |
|-----------|--------------------------|--|---|
| 1. | Երևանի քաղաքապետարան | Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության մարզային բաժին | 011 514 228 /091/ 48 35 35 |
| 2. | Արագածոտնի մարզպետարան | Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության մարզային բաժին | 0232 3 13 30 /093/ 59 08 35 |
| 3. | Լոռու մարզպետարան | Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության մարզային բաժին | 0322 2 22 91 099 003 308 095 77 33 11 |
| 4. | Տավուշի մարզպետարան | Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության մարզային բաժին | 0263 3 18 08 094 09 99 60 |
| 5. | Կոտայքի մարզպետարան | Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության մարզային բաժին | 0223 2 05 37 /093/ 26 50 90 |
| 6. | Վայոց Ձորի մարզպետարան | Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության մարզային բաժին | 0281 2 06 10 093 55 00 02 |
| 7. | Արմավիրի մարզպետարան | Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության մարզային բաժինների | 095 23 22 40, 093 23 22 49 |
| 8. | Արարատի մարզպետարան | Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության մարզային բաժին | /093/ 37 56 87 |
| 9. | Գեղարքունիքի մարզպետարան | Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության մարզային բաժինների | /091/ 50 02 95 0264 2 24 20 |

| | | | |
|-----|-----------------------|--|------------------------------|
| 10. | Շիրակի մարզ-պետարան | Ընտանիքի, կանանց և երեխա-ների իրավունքների պաշտպա-նության մարզային բաժինների | 077 44 00 20 |
| 11. | Սյունիքի մարզ-պետարան | Ընտանիքի, կանանց և երեխա-ների իրավունքների պաշտպա-նության մարզային բաժինների | 0285 2 81 91 094 61 00 48 |

2. Երեխաների մանկատներ

| h/h | Մանկատան անվանում | Հասցե | Հեռախոս |
|-----|---------------------------------|---|--------------------------|
| 1 | Երևանի մանկան տուն | ք. Երևան, Արմենակ Արմենակյանի 119 | 65 12 91 095 77 77 09 |
| 2 | Վանաձորի մանկատուն | ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տարոն 2 թաղամաս ԲՇՀ-4 | 095 380 305 |
| 3 | Գավառի մանկատուն | ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Օգոստոսի 23-ի փողոց 106 | 28 39 19 11 70 |
| 4. | Մարի Իզմիր-յանի անվան մանկատուն | ք. Երևան, Յաղոբյան/Նախկին Արմեն Տիգրանյանի փողոց 13/ | 20 15 86 091 32 62 01 |

3. Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ

| h/h | Հաստատության անվանում | Հասցե | Հեռախոս |
|-----|--|--|--------------------------------|
| 1. | Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստա-տություն | ք. Երևան, Քանաքեռի շրջանցիկ թունել | 28 54 04 093 222 770 |
| 2 | Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստա-տություն | ք. Երևան, Նուբարաշեն, Չնքուշի 14 | 47 60 60 /093/ 55 23 00 |
| 3. | Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն | ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան, Բաղաբերդ 27 | /093/ 76 83 06 |
| 4. | Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստա-տություն | ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տարոն 4, Մեքենաշի-նության թաղամաս | 0322 6 17 09 /093/ 93 99 89 |

| | | | |
|----|---|---|----------------------------------|
| 5. | Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն | ՀՀ Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Կամոյի 137 | 093/ 85 85 45 |
| 6. | Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն | ՀՀ Կոտայքի մարզ, ք. Բյուրեղավան, | /093/56 72 19 |
| 7. | Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն | ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, 58 թաղամաս, Ե.Չարենցի 4 | /094/05 80 90 |
| 8. | Գյումրու Ֆ.Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն | ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Շիրակացու փողոց 10 | /077/ 03 04 14 /0312/ 3 27 83 |

4.Սոցիալական հոգածության ցերեկային խնամքի հաստատություններ

| h/h | Հաստատության անվանումը | Հասցեն | Հեռախոսը |
|-----|---|---------------------------------------|--|
| 1. | Աջափնյակ վ/2 երեխաների սոցիալական հոգածության կենտրոն | Ք. Երևան, Մարգարյան | /093/ 41 87 87 |
| 2. | «Չատիկ աջակցության կենտրոն» | ք. Երևան, Չաքարիա Սարկավազի փողոց 5 բ | 28 37 30 28 34 91 /093/ 79 32 42 |
| 3. | Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն | Ք. Գյումրի, Տերյան 6գ | /055/ 66 07 70 /095/ 11 25 24 |

ԳԼՈՒԽ 7

ՀԱՄԱՅՆՔԱՀԵՆ ՄՈՏԵՑՈՒՄ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

7.1. Համայնքային ռեսուրսներ և ծառայություններ. ընդհանուր պատկերացում համայնքային նստիկանության վերաբերյալ

Ընդհանուր առմամբ, արդի հասարակություններում բարեկեցության, ընտանիքների և երեխաների աջակցության բազում մոդելների շրջանակում առավել արդյունավետ են համայնքահեն մոդելները: Ավելին, նույնիսկ իրավապահ համակարգերի և արդարադատության մարմինների գործունեությունը առավել արդյունավետ է դառնում համայնքահեն ծառայությունների հետ համատեղ աշխատանքի, նրանց մի բաղկացուցիչ մասը դառնալու և համատեղ աշխատելու շնորհիվ: Համայնքահեն մոտեցման առավելությունը կայանում է նրանում, որ այս մոտեցմամբ գործող տարբեր կառույցները ավելի հասանելի են բնակիչներին, համայնքային տարբեր դերակատարներ իրազեկ են համայնքում առկա ծառայություններին, ռեսուրսների օգտագործումը առավել նպատակային է և արդյունավետ:

Ընդհանուր առմամբ, համայնքային ռեսուրսների և ծառայությունների շրջանակը համայնքում գործող պետական, համայնքային, հասարակական կազմակերպությունների կողմից տրամադրվող ծառայությունների համալիրն է, որն ուղղված է համայնքում բնակիչների տարբեր կարիքների բավարարմանը և նրանց կենսագործունեության բարելավմանը: Եթե փորձենք դասակարգել, ապա դրանք ներառում են սննդի, հանգստի, առողջության պահպանման, անվտանգության, կրթության, խնամքի և այլ բնույթի ծառայություններ: Դրանք կարող են տրամադրվել ինչպես անվճար, այնպես էլ վճարովի՝ կախված կառույցի և ծառայության կազմակերպաիրավական կարգավիճակից: Կարևոր են նաև քաղաքացու վճարունակությունը և պետության կողմից սահմանված չափորոշիչները, որ առկա են տարբեր ոլորտներում. օրինակ՝

պետության կողմից անվճար բուժօգնության կազմակերպումը առավել կարիքավոր խմբերին նման մոտեցման արդյունք է:

Ծառայությունների մատչելիության և արդյունավետ օգտագործման խնդիրը շատ կարևոր է քաղաքացուն ժամանակին, որակյալ և հասցեական աջակցություն ցուցաբերելու համար, որը և պահանջում է տարբեր մարմինների փոխգործակցություն: Սոցիալական և առողջապահական մարմինների համար սա շատ ընդունված է և կիրառելի, այնուամենայնիվ, վերջին տասնամյակների զարգացումները ցույց են տվել, որ ոստիկանությունը ևս քաղաքացուն մոտ և քաղաքացու հետ աշխատող կառույց է և համայնքային գործընկերության մի մասն է:

Համայնքային ոստիկանության մոտեցումը արդեն ամրագրված է նաև շատ պետությունների իրավական կարգավորումներով: Ըստ էության, համայնքային մոտեցումը ոչ թե ոստիկանության մեկ ծառայության գործառույթ է, այլ ժամանակակից ոստիկանության հիմքն է արդի ժողովրդավարական պետություններում: Համայնքային ոստիկանությունը բնորոշվում է որպես ոստիկանական գործունեության յուրահատուկ ուղղություն, որը հիմնված է ոստիկանության և համայնքի սերտ համագործակցության վրա և նպատակ ունի արդյունավետ լուծել համայնքի խնդիրները և նրան մատուցել որակյալ ոստիկանական ծառայություն:³⁴ Համայնքային ոստիկանության գործելաոճը էականորեն տարբերվում է ավանդական ոստիկանության գործելաոճից, քանի որ պրոակտիվ է, խնդրակենտրոն և համագործակցային, որտեղ առանցքային նշանակություն ունի համայնքի խնդիրներին համակարգային մոտեցումը, համայնքի ռեսուրսի ներգրավումը այդ խնդիրների համատեղ լուծմանը:

Համայնքային ռեսուրսների և ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը և այդ կառույցների հետ համագործակցությունը առանցքային կարևորություն ունի, հատկապես անչափահասների գործերով մասնագիտացված ոստիկանության ստորաբաժանումների գործունեության շրջանակում: Դա պայմանավորված է մի քանի հանգամանքներով.

³⁴ Ուղեցույց համայնքային ոստիկանության ոլորտում ներգրավված ոստիկանության աշխատակիցների համար, ԵԱՀԿ, Երևան, 2012

- երեխաներն ունեն առանձնահատուկ կարիքներ՝ իրենց տարիքային զարգացմանն ու հասունացմանը համապատասխան, որոնք նախատեսված չեն իրավապահ համակարգերի ընթացակարգերի մեջ,
- երեխաները ունեն պաշտպանության և խնամքի կարիք. նրանք ինքնուրույն չեն կարող հոգալ իրենց կենսագործունեության համար անհրաժեշտ պայմանները,
- երեխայի հետ աշխատանքում առաջնային է նրա լավագույն շահը, որը պետք է լինի նրան կյանքին առնչվող լիազոր մարմինների որոշումների կայացման հիմքում,
- երեխաների հետ ոստիկանության աշխատանքը պահանջում է համագործակցություն՝ ելնելով նրանց համալիր կարիքներից, նրանց զարգացման, խնամքի և դաստիարակության ապահովման խնդիրներից:

Այսպիսով, երեխաների հետ աշխատանքում առանցքային կարևորություն ունի համայնքի տարբեր ծառայությունների հետ համագործակցությունը, որը պահանջում է տեղեկատվություն, այն արդյունավետ կիրառելու, առկա ծառայությունները արդյունավետ օգտագործելու հմտություններ՝ ուղղված երեխաների հետ աշխատանքի կազմակերպմանը: Դրա համար շատ կարևոր է հենց քարտեզագրումը:

7.2. Ծառայությունների և գործընկեր կառույցների քարտեզագրում

Ընդհանուր առմամբ, քարտեզագրումը մեթոդ է և մոտեցում՝ միավորելու համայնքային ռեսուրսները կազմակերպության նպատակի, տեսլական արդյունքի և գործունեության հետ: Քարտեզագրումը պարզապես տեղեկատվության հավաքման, ցուցակագրման և միասնական մի շտեմարանի մեջ տպագրության գործընթաց չէ. այն այդ ռեսուրսը միասնական կիրառելու, համայնքային համագործակցային աշխատանք ձևավորելու գործընթաց և փոխհարաբերություն է:

Գոյություն ունեն քարտեզագրման մի քանի հիմնական մոտեցումներ.

- Առկա ռեսուրսների շրջանակում նոր ծառայություն ստեղծելու փոխարեն գտնել ռեսուրսն ունեցող կառույցներ: Օրինակ՝ ոստիկանության համակարգում հոգեբանին ներգրավելու գործընթացը կազմակերպելու համար առավել նպատակահարմար է քարտեզագրել համայնքային հոգեբանական ծառայությունները, փորձել գտնել առավելագույնս հարմար գործընկեր կառույցներ, միասին մշակել աշխատանքի ուղղություններ, քան առաջարկ ներկայացնել առանձին համակարգի ներսում նոր ծառայություն ստեղծելու մասին:
- Քարտեզագրումը փոխհարաբերություն է: Այն համատեղ աշխատանք է ընդհանուր հետաքրքրություն ունեցող կառույցների միջև:
- Քարտեզագրումը հիմնվում է տարբեր ոլորտային խաչմերուկների, դրանց սահմանները միավորելու վրա:

Այսպիսով, քարտեզագրման ընդհանուր էությունը համայնքում առկա ակտիվի (հասկացությունը կիրառվում է տնտեսագիտությունից) առավել արդյունավետ փոխկապակցված օգտագործումն է՝ ի շահ ընդհանուր նպատակների և բարեկեցության:

Քարտեզագրումը որոշակի գործընթաց է, որն ընդհանուր առմամբ կարելի է բաժանել փուլերի: Առաջինը՝ մինչ քարտեզագրման փուլն է կամ նախնական փուլը: Այս փուլում ձևավորվում կամ հստակեցվում են խնդիրները, որոնք պահանջում են համայնքային ծառայությունների հետ համագործակցություն: Երեխաների հետ աշխատանքի պարագայում անհրաժեշտ է հասկանալ նրանց բնորոշ կարիքների շրջանակը, որոնց հասցեագրումը էականորեն կբարձրացնի ոստիկանության ջանքերի արդյունավետությունը՝ ուղղված անչափահասների իրավախախտումների նվազեցմանը: Կարիքների վեր հանումը ելակետային է հնարավոր համագործակից կառույցների ընդհանուր շրջանակը կառուցելու համար: Այս փուլում շատ կարևոր է, որ կառույցի բոլոր ներկայացուցիչները իրազեկ լինեն և կիսեն այն ընդհանուր նպատակը, թե ինչու է կարևոր քարտեզագրումը և ինչ է դա տալու իրենց

աշխատանքում: Ընդհանուր նպատակի ձևավորումը և հաղորդակցությունը հենց ծառայության ներսում շատ կարևոր են այս փուլում կարիքների հստակ գիտակցման, դրանց ձևավորման և առաջադրման համար, որի շուրջ էլ պետք է ձևավորվեն համագործակից կառույցները:

Հաջորդ փուլը բուն քարտեզագրման փուլն է: Այս փուլում կարևոր է բացահայտել անհրաժեշտ ծառայությունները և կառույցները, որոնք պետք են արդեն վերը նշված նպատակի և կարիքների համար: Քարտեզագրման և անհրաժեշտ կառույցների բացահայտման համար կիրառվում են տեղեկատվության հավաքման տարբեր մեթոդներ: Ամենապարզ և գործածելի ձևերից է առկա շտեմարանների օգտագործումը և դրանցից որոշակի տեղեկատվության վերհանումը: Առկա շտեմարաններն օգտագործելը արդյունավետ է ընդհանուր տեղեկատվության ստացման առումով, օրինակ՝ եթե անհրաժեշտ է երեխաների հետ աշխատող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվություն՝ ցանկ, կազմ, գտնվելու վայր, ծառայություններ: Սա կարող է լինել տեղեկատվության հավաքման առաջին մասը: Ընդ որում կարելի է կիրառել տպագրական ռեսուրսներ՝ համայնքի քարտեզագրման վերաբերյալ տեղեկատվական գրքեր, ձեռնարկներ և այլն: Բացի տպագրված ձեռնարկներից, անհրաժեշտ է նաև համացանցում առկա ռեսուրսի վերհանումը: Հաճախ նյութերը առկա են տարբեր կազմակերպությունների կայքերում, և դրանք կարող են ունենալ կարևոր տեղեկատվություն արդեն իսկ կատարված քարտեզագրման աշխատանքների վերաբերյալ:

Ներկայումս ՀՀ-ում շատ կառույցներ իրականացրել են քարտեզագրման աշխատանքներ, որոնք կարող են օգտագործվել իրավապահ մարմինների կողմից: Անշուշտ, ժամանակի ընթացքում որոշակի փոփոխություններ են լինում, այնուամենայնիվ, գործող շտեմարանները և դրանցում առկա տեղեկատվությունը դեռևս շատ օգտակար են և կօգնեն իրավապահներին համայնքներում առկա ծառայություններին իրազեկ լինելու, ըստ անհրաժեշտության կապեր հաստատելու և համատեղ աշխատելու առումով:

Մասնավորապես, ներկայացվում է ՀՀ-ի տարածքում իրականացված և էլեկտրոնային գործող շտեմարանների վերաբերյալ տեղեկատվության էլեկտրոնային կայք:

[http://www.osce.org/hy/yerevan/157271?download=true:](http://www.osce.org/hy/yerevan/157271?download=true)

Ընդհանուր շտեմարանից կամ քարտեզագրված ցանկից՝ ըստ վերոգրյալ չափորոշիչների ընտրվում են ամենանպատակային կառույցերը՝ որպես հիմնական գործընկերային նպատակային կառույցներ կամ գործին աջակցող քարտեզագրման արդյունք:

Քարտեզագրման երրորդ փուլը գործողությունների ծրագրումն է: Գործողությունների ծրագիրը առկա ռեսուրսները օգտագործելու քայլերի ամբողջությունն է: Այստեղ կարևոր է առաջնորդությունը և գործընկերների հետ աշխատելու վարքագծի խրախուսումը:

Օրինակ՝ յուրաքանչյուր համայնք կարող է կազմել և իր ձեռքի տակ ունենալ նման համայնքի իր հիմնական գործընկերների տեղեկատվության շտեմարան: Այն կարող է օգտակար լինել ինչպես անհատական դեպքերի քննարկման, ուղղորդման, այնպես էլ համայնքային խնդիրների լուծման համար, որի կարևոր մասն է ոստիկանությունը:

Այսպիսով, համայնքահեն մոտեցումը ոստիկանության և համայնքի այլ մարմինների կայուն համագործակցության հիմքն է, որն իրականացվում է համայնքի ներուժի միավորմամբ և նպատակային կիրառմամբ:

Համագործակցություն գործի վարման շրջանակում

Ոստիկանության և համայնքային ծառայությունների միջև համագործակցության ձևերը կարող են լինել շատ տարբեր: Գործընկերության նախնական փուլում դրանք կարող են լինել ըստ անհատական գործի՝ հիմնված մեկանգամյա համաձայնության վրա, փորձնական/պիլոտային՝ ուղղված համատեղ աշխատանքում առկա խնդիրների վերհանմանը և բարելավմանը: Համագործակցությունը կանոնակարգվում է պետության կողմից սահմանված գործընկերության, տեղեկատվության փոխանակման և գործի վարման չափորոշիչներով: Մասնավորապես, ՀՀ-ում սոցիալական համագործակցության ընդհանուր կանոնակարգումն ապահովում է ՀՀ կառավարության 10.09.2015թ. թիվ 1044-Ն որոշումը միջգերատեսչական սոցիալական համագործակցության

կանոնակարգը հասատելու մասին: Սույն կանոնակարգը սահմանում է համագործակցության ընդհանուր կանոնները, պայմանները, որոնք կարող են կիրառվել սահմանված լիազոր կառույցների կողմից: Բացի սույն կանոնակարգից, բավականին առաջատար փորձ է նաև համագործակցությունը տարբեր կառույցների հետ համաձայնագրի, հուշագրի հիման վրա: Դա ապահովում է կոնկրետ կառույցի հետ շարունակական աշխատանք, ընդհանուր կանոններից բացի կոնկրետ խնդիրների վերաբերյալ կոնկրետ քայլեր և պայմաններ: Հասարակական կազմակերպությունների հետ աշխատանքը, որպես կանոն, արդյունավետ է, եթե իրականացվում է հուշագրի, համագործակցության հիմք ունեցող որևէ փաստաթղթի հիման վրա:

Կոնկրետ գործի վարման շրջանակում այլ մարմինների հետ աշխատանք և հանրային կառույցների ներգրավման անհրաժեշտություն կարող է ծագել տարբեր խնդիրների հետ կապված՝ ելնելով գործում մասնակից երեխայի կարիքներից: Գործի վարման շրջանակում համագործակցությունը ոստիկանության և այլ կառույցների միջև պետք է իրականացվի՝ հիմնվելով կառույցների հիմնական նպատակների, գործունեության պայմանների, փոխադարձ հարգանքի վրա՝ առավելագույնս ուղղված լինելով երեխայի շահերի պաշտպանությանը: Ոստիկանության հիմնական գործընկերներն են՝ իրավապահ մարմինները, արդարադատության մարմինները, սոցիալական, առողջապահական մարմինները, կրթական հաստատությունները, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները, համայնքային մակարդակում խնամակալության և հոգաբարձության մարմինները, համայնքային կենտրոնները, հոգեբանական ծառայությունները և այլն: Բացի հիմնական գործընկերներից, յուրաքանչյուր դեպքով կարող են լինել նաև այլ գործընկերներ:

Շատ կարևոր է, որ յուրաքանչյուր համագործակցություն առավելագույնս նպաստի երեխայի շահերին, ինչպես նաև ապահովի հետադարձ կապ:

Ստորև ներկայացվում են կոնկրետ գործի շրջանակում համագործակցության և համատեղ ջանքերի հիմնական սկզբունքները՝

- անձնական տվյալների պաշտպանություն. երեխայի անձնական տվյալների գաղտնիության ապահովում և դրա

պահպանման պահանջն ու պայմանը գործընկեր կառույցներից,

- երեխայի և նրա օրինական ներկայացուցչի կարծիքը հաշվի առնելը՝ նրանց որևէ այլ ծառայություն ուղղորդելիս (խոսքը աջակցության գործառույթին է վերաբերում),
- ուղղորդման հիմքերի ապահովում՝ դիմում, արձանագրություն, հաշվառում, զեկուցագիր և այլն,
- անվտանգության ապահովումը ողջ գործընթացի ընթացքում, եթե առկա է դրա անհրաժեշտությունը,
- հետադարձ կապ և հաշվետվողականություն:

Համագործակցության և ուղղորդման հիմնական ձևը գրավոր նամակն է գործընկեր կազմակերպությանը կամ կառույցին՝ անկախ նրանից՝ այն պետական, համայնքային թե հասարակական կազմակերպություն է: Նամակում պետք է նշվի հակիրճ տեղեկատվություն դեպքի վերաբերյալ և ուղղորդման նպատակը (օրինակ բուժօժանայությանն ուղղված դիմումի մեջ՝ խնդրում եմ իրականացնել հետազոտությունները և արդյունքները ներկայացնել ոստիկանություն): Այն դեպքերում, երբ գործընկեր կառույցները հասարակական կազմակերպություններ են, ոստիկանը կարող է բանավոր, օրինակ՝ հեռախոսային խոսակցության միջոցով պարզել, թե արդյոք տվյալ կազմակերպությունը կարող է ծառայություն մատուցել և ապա նաև դիմել գրավոր: Բանավոր բանակցություններն ու աշխատանքային ուղղորդումները նաև իրականացվում են շատ անհետաձգելի դեպքերում, երբ առաջնային աջակցությունը ուղղակի անհետաձգելի է և կարող է երեխայի կյանքի և առողջության համար էական նշանակություն ունենալ. Նման դեպքերում ոստիկանը անմիջապես ուղղորդում և միասին այցելում է անհրաժեշտ վայրեր: Ընդհանուր առմամբ, բոլոր այն դեպքերում, երբ առկա է երեխայի անվտանգության և պաշտպանության խնդիր, ոստիկանը պարտավոր է նաև ֆիզիկապես ուղեկցել երեխային դեպի տվյալ ծառայություն:

Համագործակցության և երեխաների գործի համատեղ վարման հարթակները և մեխանիզմները տարբեր պետություններում տարբեր կերպ են գործում՝ կախված երեխաների պաշտպանության ոլորտում տվյալ պետությունում առկա միջգերատեսչական իրավակարգավորումներից:

1. Այն դեպքում, երբ ունենք համայնքային մարմին, խորհուրդ, ապա յուրաքանչյուր երեխայի խնդիր քննարկվում և համատեղ լուծում է ստանում: Նման փորձ ունի Մեծ Բրիտանիան, որտեղ յուրաքանչյուր համայնք ունի անչափահաս իրավախախտների հարցով մասնագիտացված թիմ: Թիմի անդամներն են ոստիկանության, սոցիալական ծառայությունների, պրոբացիայի, քաղաքապետարանի աշխատակիցները: ՀՀ-ում նման խորհուրդի գործունեության փորձ իրականացվել է համայնքային վերականգնողական կենտրոնների շրջանակներում, որտեղ գործել են վերականգնողական խորհուրդները: ԱԾԽՄ երեխաների դեպքում այդ գործառույթն իրականացնում է Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը:
2. Եթե չկա համակարգող մարմին, ապա անչափահասների գործերով ստորաբաժանումները կարող են ըստ իրենց գնահատման՝ կատարել դեպքի ուղղորդում:

Վերը նկարագրված մոդելի դեպքում կարող է գործել երկու տարբերակ.

ոստիկանություն → ԽՀՀ → ՄԾՏԳ, առողջապահություն, կրթություն և այլ կառույցներ

ոստիկանություն → ՄԾՏԳ, ՀԿ, զբաղվածություն, առողջապահություն, կրթություն և այլ կառույցներ:


Ընդհանուր առմամբ երեխային առնչվող և ոստիկանության մասնակցությունը պահանջող յուրաքանչյուր դեպքի պարագայում համագործակցության ծավալը և ոստիկանության դերակատարության հարցը կախված է անհատական հանգամանքներից, սակայն կարևոր է, որ երեխայի անվտանգության, զարգացման, կրթության, խնամքի և զարգացման հարցերը համալիր լուծում ստանան բոլոր մարմինների ռեսուրսների միավորմամբ:

Ստուգիչ հարցեր

1. Որո՞նք են համայնքային ոստիկանության հիմնական առանձնահատկությունները:
2. Որո՞նք են քարտեզագրման փուլերը և ի՞նչ նպատակներով կարող են օգտագործվել քարտեզագրման արդյունքները:
3. Որո՞նք են անհատական գործի շրջանակում համագործակցության հիմնական սկզբունքները:

ՀԱՎԵԼՎԱԾ 7

**ԵՐԵՒԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐՈՎ
ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ, ՈՒՂՂՈՐԴՈՒՄ**



ԳԼՈՒԽ 8

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

8.1. Հանցավորության դեմ պայքարի արդի հայեցակարգերը

Հանցավորության կանխարգելումը հասարակական կյանքի գոյության պահպանման կարևորագույն պայմաններից է, որն ապահովում է հասարակության՝ որպես ամբողջական միավորի վերարտադրությունը և զարգացումը: Հանցավորության դեմ արդի հայեցակարգերի կիրառումը և դրանց զարգացման ուղղությունը անհրաժեշտ է դիտարկել սոցիալական վերահսկողության համակարգի պատմական զարգացման ընթացքի մեջ՝ հաշվի առնելով դրա էվոլյուցիոն ճանապարհը: Նախնադարյան արխայիկ հասարակություններում այն շատ պարզ էր. ավանդույթը սահմանում էր վարքագծի ձևեր, և ցեղախմբի անդամները խրախուսվում կամ պատժվում էին գործող ավանդույթային նորմերին համապատասխան: Որպես այդպիսին, չէր գործում կանխարգելում կան կանխում, սակայն գործում էին սանկցիաներ, որոնք հիմնականում մարմնական պատիժներ էին ավանդույթը խախտողների նկատմամբ: Միջնադարյան հասարակությունում հանցավորության կանխարգելման գործում էական նշանակություն ունեին կրոնական և բարոյական նորմերը: Դրանք կիրառվում էին որպես զգուշացումներ և ընդհանուր նախականիսչ ազդեցություն ունեին: Լուսավորչականության ժամանակներից սկսած, ժամանակակից քրեական իրավունքի նախահիմքերի ձևավորմանը զուգահեռ, առաջնային նշանակություն ստացան իրավունքի նորմերը, և պոզիտիվիստական մոտեցումների զարգացման արդյունքում մեծ ուշադրություն դարձվեց հանցագործությունների կանխմանը: Սույն մոտեցումից բխող բոլոր տեսական և գործնական զարգացումները միավորված էին այն հիմնարար դրույթով, որ հանցագործության դեմ կարելի է պայքարել ոչ միայն և ոչ այնքան հանցագործներին պատժելով, որքան դրա առաջացմանը նպաստող

գործոնները նվազեցնելով: 1950-ականներից սկսած, ԱՄՆ և Եվրոպայի հանցավորության խնդիրների վերլուծությունը տեսաբաններին և պրակտիկներին ուղղորդեց դեպի կանխարգելման և այլընտրանքային արդարադատության նոր մոտեցումների ստեղծմանը և կիրառմանը: Այս առումով առաջնային դարձան սոցիալականացմանը նպաստող, ինչպես նաև դասական արդարադատությանը այլընտրանք ծառայող ընթացակարգերը: Պետք է նշել, որ այս մոտեցումները հատկապես կիրառելի էին անչափահասների և երիտասարդների հետ աշխատանքում, և ոստիկանության և իրավապահ այլ մարմիններ նոր մոտեցումները սկսեցին կիրառել հենց անչափահասների հետ աշխատանքում: Սոցիալականացման հարցում էական նշանակություն ստացավ նախական-խումբ և կանխարգելումը, որտեղ առաջնային է անչափահասի դաստիարակության, կրթության, հասարակության արժեքանորմատիվ համակարգին համապատասխան անձի ձևավորումը: Կանխարգելման երկու հիմնական ուղղություններ առաջ եկան, որոնք արդյունավետ կիրառվում են ամբողջ աշխարհում՝ լրացնելով միմյանց և կիրառվելով տարբեր փուլերում՝ որպես նախականիսման և վաղ արձագանքման՝ անչափահասների արդարադատության մոտեցումներ: Աստիճանաբար փորձարարական այս ծրագրերն իրավական կարգավորում ստացան և սահմանվեցին միջազգային կոնվենցիաներով: Կանխարգելման մոտեցումը հատկապես էական զարգացում է ապրել վերջին քսան տարում և տարբեր երկրներում: Կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա՝ առանձնացվում են կանխարգելման հետևյալ 4 ուղղությունները.

- **Հանցավորության կանխարգելումը սոցիալական զարգացման միջոցով** - Այս ուղղությունը ներառում է կրթական, առողջապահական, զբաղվածության ծրագրեր այն երեխաներին և նրանց ընտանիքներին, որոնք ռիսկային են՝ տարբեր գործոններից ելնելով (ռիսկային գործոնները կներկայացվի առանձին): Ծրագրերն իրականացվում են տարբեր կրթական հաստատություններում, հիմնականում դպրոցներում, իսկ թափառաշրջիկ և մուրացիկ երեխաների հետ նման աշխատանքները կազմակերպվում են համայնքային կենտրոններում:

- Համայնքահեն կամ լոկալ տեղակայության կանխարգելման ռազմավարություն**-ի տարրերություն կանխարգելման առաջին մոտեցման, այս ռազմավարությունը աշխատանքի թիրախ է դարձնում ոչ թե երեխաներին կամ ընտանիքները, այլ բնակավայրերը, թաղամասերը, համայնքի այն մասերը, որոնք առավել ռիսկային են հանցագործությունների կատարման առումով: Դրանց նպաստող գործոններ կարող են լինել առավել խոցելի թաղամասերը, չզարգացած ենթակառուցվածքները, այդ թվում սակավ ծառայություններ ունեցող թաղամասերը, բնակչության կուտակումներ ունեցող թաղամասերը, որտեղ առկա է բնակչության խիտ, ներառյալ ներքին կամ արտաքին միգրացիա ունեցող զանգված, որտեղ շատ են ժամանակավոր բնակիչները, որոնք իրենց հիմնական վայրից տեղափոխվել են տվյալ բնակավայր՝ հիմնականում եկամուտ գտնելու նպատակով: Կանխարգելման այս ռազմավարությունը ենթադրում է տվյալ տարածքում, կամ ռիսկային շինություններում հսկողության, անվտանգության միջոցների էապես ուժեղացում, միաժամանակ սոցիալական խնդիրների լուծման ծառայությունների ստեղծում կամ զարգացում: Համայնքահեն կանխարգելման ուղղությունը ենթադրում է համայնքային տարբեր ծառայությունների, այդ թվում ՀԿ-ների ակտիվացում և ուժեղացում՝ իրենց համայնքում առկա խնդիրները լուծելու համար:
- Հանցավորության իրավիճակային կանխարգելման ուղղություն** - Այն ներառում է մարդկանց կողմից հանցագործություն կատարելու հնարավորությունների էական նվազեցումը, հանցագործությունների կատարման դեպքում դեպքերի հայտնաբերման մեխանիզմների ուժեղացման, պատժի անխուսափելիության ազդեցությամբ անհատների վրա հանցագործության ռիսկերի նվազեցումը: Իրավիճակային կանխարգելումը հիմնականում ներառում է կոնկրետ տեխնիկաներ և մեթոդներ և յուրաքանչյուր հանցագործության համար առանձնացվում են դրա կանխարգելման համապատասխան մեթոդները: Օրինակ՝ շենք շինություններից

գողությունները կանխելու նպատակով դրանք կառուցվում են որոշակի դիզայնով և անվտանգության համակարգերով՝ նվազեցնելու գողության հնարավորությունները: Այս ուղղությունը սերտորեն կապված է բնապահպանական ուղղության հետ, երբ տարածքները, բնակավայրերը կառուցվում և զարգանում են՝ հաշվի առնելով հանցավորության ռիսկերը:

- **Վերահստեգրման միջոցով կանխարգելման ուղղություն** - Այս ուղղությունը կիրառելի է արդեն իսկ հանցագործություն կատարած անձանց կողմից երկրորդ և ավելի անգամներ հանցագործությունների կատարումը բացառելուն, քրեական արդարադատության և պատժից հետո նրանց ինտեգրումը ապահովելուն ուղղված տարբեր ծրագրերով:

Կանխարգելման այս ռազմավարությունները հիմնված են հանցավորության պատճառների բազմամասնագիտական գիտելիքի և փորձի վրա և պահանջում են միջգիտակարգային հմտություններ: Անչափահասների հանցավորության կանխարգելումը պետք է ներառված լինի նաև սոցիալական պաշտպանության, կրթության կազմակերպման քաղաքականության մեջ՝ ռիսկային, խոցելի և զոհականացված ընտանիքների սոցիալական ներառմանն ուղղված տարբեր ծրագրերի մշակման, կրթության ոլորտում իրավական սոցիալականացման միջոցներով:

Դպրոցական միջավայրում կանխարգելման գործողությունները կիրառվում են համալիր՝ ներառելով և կրթական և անվտանգության ապահովման միջոցառումներ: Դպրոցական տեսուչի գործունեության շրջանակը ներառում է՝

- դպրոցում կոնֆլիկտների, անկարգությունների կանխարգելում, նախականիսում,
- դպրոցի տարածքում և շրջակայքում պարբերական շրջայցեր՝ անվտանգության ապահովման նպատակով,
- ոստիկանության այլ բաժինների հետ պարբերաբար տեղեկատվության փոխանակում,

- դպրոցում տեղակայված անվտանգության միջոցների պահպանում:

Դպրոցական տեսուչի կրթական գործառույթները ներառում են դասընթացներ և քննարկումներ աշակերտների հետ՝ ներառված դպրոցական արտադասարանային ծրագրերի մեջ: Թեմատիկ պլանները ներառում են՝

- ոստիկանության ծառայության ներկայացում
- օրենք և օրինապահություն
- քաղաքացիություն և իրավունքներ
- թմրամիջոցների և ալկոհոլի օգտագործման կանխարգելիչ իրազեկման դասընթաց
- կոնֆլիկտների կարգավորում
- ընտանեկան բռնությունների կանխում
- ճանապարհային երթևեկության անվտանգություն:

8.2. Վերականգնողական արդարադատություն

Անչափահասների հանցավորության դեմ պայքարի և արդյունավետ միջամտության զարգացող երկրորդ կարևոր մոտեցումն է վերականգնողական արդարադատությունը (restorative justice):

Արդարադատության վերականգնողական մոտեցումները գործնական կիրառություն ստացան սկսած 1970-ականներից՝ ԱՄՆ-ում և Կանադայում կիրառվող փորձնական ծրագրերից: Դրանք առաջին անգամ հանդես եկան որպես այլընտրանք դասական արդարադատության, դատավարական երբեմն ոչ արդյունավետ մոտեցումներին: Հասարակական տարբեր շարժումներ առաջ էին քաշում այն գաղափարը, որ հանցագործությունը կոնֆլիկտ է հասարակության և անձի միջև և հանցագործություն կատարած անձանց պատժի դատապարտումը բավարար չէ խախտված հարաբերությունները վերականգնելու համար, քանի որ այդ կերպ հաշվի չեն առնվում համայնքի և տուժողի իրավունքները, նրանց հասցված վնասը: Ավելին, տվյալ պատիժները որևէ կերպ չեն նպաստում կոնֆլիկտի լուծմանը: Տարբեր երկրներում տուժող-իրավախախտ հաշտեցման արդյունավետ փորձի

զարգացումը հիմք դարձավ՝ միավորվելու մեկ միասնական նոր մոտեցման մեջ, որը ընկալվում է որպես վերականգնողական արդարադատություն: Այսպիսով, վերականգնողական արդարադատությունը ընկալվում է որպես իրավախախտմանն արձագանքելու մի գործընթաց, որը ներառում է տուժողի և իրավախախտի համագործակցությունը, տուժողի կարիքները, մասնագետների աջակցությամբ տուժողի և իրավախախտի համատեղ աշխատանքը ֆիզիկական, նյութական վնասների փոխհատուցման ուղղությամբ, ինչպես նաև խաթարված հարաբերությունների վերականգնումը, հանցանքը ծնող պատճառների վերհանումը և անհատական ու համայնքային մակարդակով դրանց լուծումը՝ համայնքային ներուժի կիրառմամբ:

Աստիճանաբար վերականգնողական արդարադատությունը դարձավ արդյունավետ և լայնորեն կիրառվող այլընտրանք, որը ուներ իր գաղափարախոսությունը, մեթոդաբանությունը և կիրառման բազմաթիվ տեխնիկաներ: Ներկայումս բազմաթիվ երկրներ իրենց օրենսդրությամբ և պրակտիկայում ներառել են վերականգնողական արդարադատության մոդելները: Միջազգային չափորոշիչներով դրանք սահմանված են նաև ՄԱԿ-ի կողմից՝ որպես քրեական գործերում վերականգնողական արդարադատության ծրագրերի կիրառման հիմնարար սկզբունքներ³⁵:

Ակզբունք 1

Հանցագործությունը, նախ և առաջ, մարդկային հարաբերությունների դեմ ուղղված հանցանք է և ապա հետո՝ օրենքի ոտնահարում, քանզի օրենքները գրված են մարդկային հարաբերություններում անվտանգությունն ու արդարությունը պաշտպանելու համար:

Ակզբունք 2

Վերականգնողական արդարադատությունը համարում է, որ հանցագործությունը ոչ ցանկալի երևույթ է և մարդկային հարաբերությունների ոտնահարում է, որն ընդհանրապես պետք է տեղի չունենա: Սակայն եթե ամեն դեպքում հանցագործությունը կատարվել է, ապա դրա հետ կապվում են ինչպես վտանգներ,

³⁵ peace.fresno.edu/rjprinc.html
seekjusticeforall.com/uploads/Restorative_Justice_2.pdf

այնպես էլ հնարավորություններ: Վտանգը կայանում է նրանում, որ հանցագործության նկատմամբ ունեցած արձագանքի արդյունքում թե՛ համայնքի անդամները, թե՛ տուժածները և թե՛ իրավախախտները կարող են իրենց զգալ ավելի մեկուսացած, վնասված և վտանգված, իսկ հնարավորությունը կայանում է նրանում, որ կոնֆլիկտի ճիշտ լուծման և կառուցողական ելքի ապահովման ժամանակ անարդարությունն ընկալվում և ընդունվում է, անաչառությունն ու արդարությունը վերականգնվում է, ինչն ապահովում է հարաբերությունների դրական զարգացում, և ընդգրկված բոլոր կողմերն իրենց զգում են ավելի ապահով, ավելի հարգալից մեկը մյուսի նկատմամբ, հնարավորինս համագործակցող և իրենց համայնքի ապագայի մասին հոգ տանելու գործառույթներով ավելի լիազորված:

Սկզբունք 3

Վերականգնողական արդարադատությունն ամեն ինչ հնարավորինս՝ «ճիշտ դարձնելու» գործընթաց է, որը ներառում է իրավախախտման հետևանքով ի հայտ եկած կարիքների բավարարումը, օրինակ՝ անվտանգությունը և ի հայտ եկած ֆիզիկական վնասների և խաթարված հարաբերությունների վերականգնումը իրավախախտի կողմից, ինչպես նաև հանցանքը ծնող պատճառների վերհանումը (կախվածությունները, սոցիալական և աշխատանքային հմտությունների պակասը, բարոյական և էթիկական հիմքերի պակասը և այլն):

Սկզբունք 4

Հանցագործության առաջնային զոհեր են համարվում նրանք, ովքեր անմիջականորեն են տուժել հանցանքից, իսկ երկրորդային՝ ընտանիքի անդամները, ընկերները, համայնքը:

Սկզբունք 5

Իրավախախտի, տուժողի և հասարակության անվտանգությանն առնչվող խնդիրները բավարարելուց հետո վերականգնողական արդարադատությունն իրավախախտի համար տվյալ իրավիճակը դիտարկում է իբրև ուսուցանող փորձ, որից կարելի է դասեր քաղել:

Սկզբունք 6

Վերականգնողական արդարադատությունը նախընտրում է հանցագործությանն արձագանքել հնարավորինս վաղ փուլում՝ առավելագույն չափով կիրառելով կամավոր համագործակցության սկզբունքները, քանզի հարաբերությունների բարելավումը և նոր դասեր քաղելը կամավոր և համագործակցություն ենթադրող գործընթաց է:

Սկզբունք 7

Վերականգնողական արդարադատությունը նախընտրում է հանցագործությունների մեծ մասը դիտարկել համագործակցային մեխանիզմով՝ ներգրավելով հանցանքից առավել տուժածներին՝ աջակցելու և հաշվետու լինելու նպատակով: Այս գործընթացին կարող են մասնակցել առաջնային և երկրորդային տուժողներն ու նրանց ընտանիքները (կամ նրանց փոխարինողները, եթե վերջիններս չեն ցանկացել մասնակցել), իրավախախտը և նրա ընտանիքը, համայնքի, կառավարության, կրոնական համայնքի, դպրոցի ներկայացուցիչները:

Սկզբունք 8

Վերականգնողական արդարադատությունն ընդունում է, որ ոչ բոլոր իրավախախտները կրնտրեն համագործակցության ճանապարհը: Հետևաբար, կարող է իշխանության միջամտության անհրաժեշտություն առաջանալ, որը որոշումներ կկայացնի իրավախախտի փոխարեն: Իշխանության գործողությունները և դրա հետևանքները պետք է լինեն ողջամիտ, վերականգնողական բնույթի և հարգալից տուժողների, իրավախախտների և համայնքի նկատմամբ:

Սկզբունք 9

Վերականգնողական արդարադատությունը նախընտրում է չհամագործակցող և հասարակության համար էական վտանգ ներկայացնող իրավախախտներին ուղղորդել այնպիսի վայրեր, որտեղ շեշտը դրված է անվտանգության, արժեքների, էթիկայի, պատասխանատվության, հաշվետվողականության և բարեկրթության վրա: Պետք է այնպես անել, որ նրանք հնարավորություն ունենան տեսնելու, զգալու և ընկալելու տուժողների վրա իրենց

հանցագործության ունեցած հետևանքը/ազդեցությունը, պետք է նրանց քաջալերել սովորել ապրումակցել, ցավակցել, հասարակության արդյունավետ անդամ դառնալու համար պետք է անհրաժեշտ հմտությունների ձեռք բերելու համար հնարավորություններ ստեղծել: Նրանց անընդհատ պետք է կոչ անել (ոչ թե ստիպել) դառնալ համայնքի հետ ավելի համագործակցող և անընդհատ տալ հնարավորություն՝ համապատասխան հանգամանքներում հնարավորինս շուտ դրսևորելու իրենց համագործակցելու ունակությունը:

Սկզբունք10

Վերականգնողական արդարադատությունը պահանջում է շարունակականության և հաշվետվողականության մեխանիզմներ՝ հնարավորինս օգտագործելով համայնքի բնական հնարավորությունները, քանզի վստահող համայնք կառուցելու ամենակարևոր պայմաններից է ձեռք բերված համաձայնությունների կատարումը:

Սկզբունք11

Վերականգնողական արդարադատությունը ընդունում և քաջալերում է համայնքային հաստատությունների՝ ներառյալ եկեղեցու դերը՝ համայնքի հիմնասյուն հանդիսացող բարոյական և էթիկական չափանիշներն ուսուցանելու և հաստատելու գործում:

Վերականգնողական արդարադատության գործնական կիրառվող ծրագրերից են, օրինակ՝ **տուժող-իրավախախտ հաշտեցման գործընթացը (կամ մեդիացիան), համայնքային վերականգնողական խորհուրդների կողմից վարած նիստերը, ընտանեկան խմբերի կոնֆերանսները** և այլ:

Վերականգնողական արդարադատության մոտեցումները կիրառվում են արդի ոստիկանականության ծառայություններում և անչափահասների հետ կանխարգելիչ և վաղ միջամտության աշխատանքի արդյունավետ մոդելներից են: ՀՀ-ում վերականգնողական արդարադատության մոտեցումների ներդրման փորձն սկսվել է 2006 թվականից՝ «Փի-Էյչ Ինթերնեշնլ» կազմակերպության և ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով պատասխանատու բաժնի համատեղ ջանքերով³⁶ : Վերականգնողական

³⁶ Ներկայումս բաժինը ընդլայնվել է և կոչվում է Ընտանեկան բռնության դեմ պայքարի և անչափահասների իրավունքների պաշտպանության վարչություն

գործընթացները կիրառվել են այն համայնքներում, որտեղ ստեղծվել են համայնքային վերականգնողական կենտրոններ³⁷:

| Ավանդական արդարադատության և վերականգնողական արդարադատության համեմատություն | |
|--|---|
| Ավանդական (պատժող) արդարադատության Retributive Justice | Վերականգնողական արդարադատության Restorative Justice |
| Հանցագործությունը պետության դեմ ուղղված գործողություն է. այն օրենքի ոտնահարում է: | Հանցագործությունը մեկ այլ մարդու և համայնքի դեմ ուղղված գործողություն է: |
| Հանցագործության վերահսկումը կատարում է քրեական արդարադատության համակարգը: | Հանցագործության վերահսկումը կատարում է համայնքը: |
| Իրավական պատասխանատվություն կրելու, ինչպես նաև հաշվետու լինելու մեխանիզմ է համարվում ազատագրկող պատիժը: | Հանցագործության համար պատասխանատվություն կրելը սահմանվում է որպես իրավախախտի կողմից պատասխանատվության ստանձնում և վնասի վերականգնում: |
| Հանցագործությունը անհատական գործողություն է և ենթադրում է անհատական պատասխանատվություն: | Հանցագործությունն ունի և անհատական, և սոցիալական պատասխանատվության սահմաններ: |
| Պատիժը արդյունավետ է, որովհետև ա. պատժի սպառնալիքը կրճատում է հանցագործությունների թիվը, բ. պատիժը փոխում է վարքը: | Միայն պատիժը արդյունավետ չէ վարքագիծը փոխելու համար և ավելին, այն քայքայում է համայնքի ներդաշնակությունն ու լավ հարաբերությունները: |
| Տուժողները գործընթացի եզրագծում են մնում: | Տուժողները հանցագործության լուծման գործընթացի կենտրոնում են: |
| Համարվում է, որ իրավախախտը որոշակի թերություններ ունեցող անհատ է: | Համարվում է, որ իրավախախտ ունակ է վերականգնել իր իսկ պատճառած վնասը: |

³⁷ Աղբյուրը՝ «Վերականգնողական արդարադատությունն ու համայնքային վերականգնողական կենտրոնները Հայաստանում»:

| | |
|---|--|
| Կենտրոնացում անցյալի մեղադրանքի վրա (արդյոք նա է արել): | Կենտրոնացում ապագայում խնդիրը լուծելու և պարտավորությունների վրա (ինչ է արվելու): |
| Շեշտադրվում է ընդդիմադիր և բացառող հարաբերությունը: | Շեշտադրվում է երկխոսությունը և բանակցությունը: |
| Ցավի հարկադրանք՝ որպես պատժելու և կանխելու միջոց: | Հատուցումը՝ որպես երկու կողմերի վերականգման միջոց: |
| Համայնքը գործընթացի անմիջական մասնակից չէ, այլ անուղղակիորեն ներկայացվում է պետության կողմից: | Համայնքը հանդես է գալիս որպես վերականգնողական գործընթացի կազմակերպիչ: |
| Արձագանքը կենտրոնանում է հանցագործի՝ անցյալում դրսևորած վարքի վրա: | Արձագանքը կենտրոնանում է հանցագործի արարքի վնասակար հետևանքների վրա և շեշտադրում է ապագան: |
| Կախվածություն լիազորված մասնագետից: | Մասնակիցների ուղղակի ներգրավվածություն: |

8.3. Առանց ծնողական խնամքի մնացած (ԱԾԽՄ) երեխաների սոցիալական պաշտպանության իրավական կարգավորումները և խնամքի կազմակերպման հիմնական ձևերը

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների պաշտպանությունը կարգավորվում է ազգային օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով, որոնց միացել է Հայաստանի Հանրապետությունը:

Համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ **«Առանց ծնողական խնամքի մնացած երեխա» է համարվում** 18 տարին չլրացած այն երեխան, որի ծնողները (կամ միակ ծնողը) մահացել են, զրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափում են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք» են համարվում 18-23 տարեկան այն անձինք, որոնց ծնողները (կամ միակ ծնողը) մինչև նրանց 18 տարին լրանալը մահացել են, զրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափել են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են³⁸:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության և դրանից բխող հարցերը կարգավորող իրավական ակտերը հետևյալն են՝

1. «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը,
2. «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը,
3. ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների եվ առանց

³⁸ «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք

- ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց կենտրոնացված հաշվառման կարգը հաստատելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի N 917-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 962-Ն որոշում,
4. ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 8-ի «Երեխային խնամատար ընտանիք հանձնելու կարգը, յուրաքանչյուր երեխայի պահելու համար խնամատար ընտանիքին ամսական վճարվող դրամական միջոցների եվ երեխայի խնամքի եվ դաստիարակության համար խնամատար ծնողների վարձատրության վճարման կարգն ու չափը եվ խնամատար ընտանիք երեխային դաստիարակության հանձնելու մասին պայմանագրի ձևը հաստատելու մասին» N 459-Ն որոշում,
 5. ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին» N 1044-Ն որոշումը,
 6. ՀՀ սոցիալական ապահովության նախարարի 2003 թվականի սեպտեմբերի 8-ի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց անձնական քարտի ձևը, հաշվառման մատյանի ձևը, կենտրոնացված հաշվառման մատյանի ձևը հաստատելու մասին» N 86-Ն հրաման,
 7. ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների լիազորությունների իրականացման և սոցիալական ծառայությունների տրամադրման կարգն ու պայմանները սահմանելու մասին» N 1061-Ն որոշում
 8. Առնչվող միջազգային և տեղական օրենսդրություն. («Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա, ՀՀ Սահմանադրություն, ՀՀ ընտանեկան օրենսգիրք, ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք և այլն):

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների պաշտպանությունը համալիր աշխատանք է, որի կարևոր դերակատարներն են ՀՀ ոստիկանությունը: Ոստիկանության գործունեության մեջ երեխաների իրավունքների պաշտպանության շրջանակում առաջնային նշանակություն ունի առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հայտնաբերման, հաշվառման և խնամքի կազմակերպման գործընթացներին մասնակցությունը լիազոր մարմինների հետ համագործակցությամբ:

ԱԾԽՄ երեխաների հայտնաբերման գործառույթը ուղղակիորեն սահմանված չէ ՀՀ ոստիկանության ծառայության լիազորությունների շրջանակում: Այնուամենայնիվ, համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 110 հոդվածի, հիմնարկների (նախադպրոցական կրթական, հանրակրթական, բժշկական կամ նմանատիպ այլ կազմակերպությունների) պաշտոնատար անձինք, որոնք տեղեկություններ ունեն սույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով նշված երեխաների մասին, պարտավոր են այդ մասին հաղորդել խնամակալության և հոգաբարձության մարմիններին՝ ըստ երեխաների փաստացի գտնվելու վայրի³⁹:

Ոստիկանության ծառայողները, հանրության հետ պարբերական շփումների, համայնքում ներգրավվածության, մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների հայտնաբերման և հաշվառման աշխատանքների կազմակերպման շրջանակում, առավել շատ են առնչվում առանց ծնողական խնամքի մնացած, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին, հետևաբար ոստիկանության ծառայողները կարևոր դերակատարություն ունեն երեխաների հայտնաբերման և համապատասխան մարմինների հետ համագործակցությամբ նրանց խնամքի կազմակերպման գործում: Այդ նպատակով երեխաների իրավունքների պաշտպանության, նրանց պատշաճ ընտանեկան խնամքի կազմակերպման խնդիր կամ ակնհայտ բացթողում հայտնաբերելու դեպքում ոստիկանության ծառայողը պետք է իրականացնի հետևյալ գործողությունները.

- Պետք է լրացուցիչ տեղեկատվություն հավաքի երեխայի խնամքի կազմակերպման, երեխայի փաստացի և իրավական կարգավիճակի վերաբերյալ, այն է.

³⁹ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150028>

- ✓ Երեխան ունի՞ ծնողներ, խնամակալներ:
- ✓ Խնամակալները փաստացի ապահովո՞ւմ են երեխայի խնամքը:
- ✓ Արդյո՞ք երեխան փաստացի չի գտնվում առանց խնամքի, սակայն դեռևս հաշվառված չէ:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխայի հայտնաբերման դեպքում տեղեկությունները պետք է փոխանցվեն համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց (այսուհետ՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ) հաշվառումն իրականացնում են խնամակալության և հոգաբարձության մարմինները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով⁴⁰:

Երեխան ճանաչվում է ԱԾԽՄ երբ՝

- երեխայի ծնողները (կամ միակ ծնողը) մահացել են,
- նրանք զրկվել են ծնողական իրավունքներից,
- ծնողները ճանաչվել են անգործունակ,
- ծնողները խուսափում են երեխաների դաստիարակությունից,
- ծնողները խուսափում են երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունից,
- ծնողները օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող,
- ծնողներն անհայտ են:

Համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 110 հոդվածի 2-րդ մասի, Խնամակալության և հոգաբարձության մարմինը նման տեղեկություն ստանալու պահից երեք օրվա ընթացքում պարտավոր է անցկացնել երեխայի կյանքի պայմանների ուսումնասիրություն և նրա ծնողների կամ ազգականների կողմից խնամքի

⁴⁰ «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված

փաստի բացակայություն բացահայտելիս ապահովել երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունը մինչև նրա տեղավորման հարցի լուծումը⁴¹:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը, ինչպես նաև ՀՀ գործող փորձը ցույց են տալիս, որ հաճախ խնամակալության և հոգաբարձության մարմինը և կից գործող հանձնաժողովները վերը նշված ուսումնասիրությունն իրականացնում են ոստիկանության հետ համատեղ: Դա իրականացվում է երեխայի բնակության վայրից ծնողների վերաբերյալ տեղեկատվություն հայցելու միջոցով, ինչպես նաև անվտանգության նկատառումներից ելնելով՝ համատեղ տունայցեր կազմակերպելու և իրականացնելու միջոցով, երբ առկա է տեղեկատվություն և դրա հիման վրա ակնհայտ կասկած, որ ընտանիքում կա բռնություն, հանցագործության ռիսկ և այլն: ԱԾԽՄ երեխաների խնամքի կազմակերպման շրջանակում լիազոր մարմինների համագործակցությունը ոստիկանության համապատասխան բաժինների հետ ևս շատ կարևոր է՝ ելնելով արդի ժամանակաշրջանում բռնությանը և անվտանգությանը վերաբերող մարտահրավերներից և դրանց կանխման և երեխաների իրավունքների պաշտպանության համալիր արձագանքման անհրաժեշտությունից: Այս առումով ԱԾԽՄ երեխաների խնամքի կազմակերպման ձևերի իմացությունը կարևոր նշանակություն ունի ոստիկանության համապատասխան ծառայողների համար:

ՀՀ-ում ԱԾԽՄ երեխաների խնամքը կազմակերպվում է հաստատություններում և հաստատություններից դուրս: Շուրջօրյա խնամք ապահովում են մանկատները: Ներկայումս պետական քաղաքականությունն ուղղված է հաստատությունների բեռնաթափմանը, որից ելնելով՝ խրախուսվում է ընտանիքաին այնպիսի մոդելների կիրառումը, ինչպիսիք են խնամատար ընտանիքը, խնամակալությունը, որդեգրումը: Այդ նպատակով մշակվել է ՀՀ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հայեցակարգը:⁴² Հաշվի առնելով միջազգային պրակտիկայում

⁴¹ <http://www.irttek.am/views/act.aspx?aid=150028>

⁴² Հայաստանի Հանրապետությունում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հայեցակարգ, ՀՀ կառավարության 12.05.2016թ. նիստի N 18 արձանագրային որոշում

կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի կազմակերպման ընտանիքահեն մի շարք ձևերի կիրառման փորձը՝ հայեցակարգը նախատեսում է խնամքի այլընտրանքային ծառայությունների հետևյալ տեսակները⁴³.

Որդեգրում

Որդեգրումը համարվում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքը ընտանիքում կազմակերպելու նախապատվելի ձևը:

Խնամակալություն և հոգաբարձություն.

Խնամակալությունը կիրառվում է 14 տարին չլրացած, առանց ծնողական խնամքի մնացած անչափահասների, ինչպես նաև անգործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ, իսկ հոգաբարձությունը՝ 14-18 տարեկան առանց ծնողական խնամքի մնացած անչափահասների, ինչպես նաև սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ:

Խնամատարություն խնամատար ընտանիքներում

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ժամանակավոր տեղավորման ձևերից մեկն է, երբ երեխայի խնամքը կազմակերպվում է ընտանիքում: Խնամատար ընտանիքը պետության կողմից վճարվող, ընտանիքում երեխայի խնամքը կազմակերպելու մոդել է, որի հիմնական առավելությունը ընտանեկան միջավայրի առկայությունն է երեխայի կենսագործունեության և զարգացման գործընթացում:

Մանկական ավան

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ընտանեկան պայմաններում շուրջօրյա խնամքի կազմակերպման ձև է⁴⁴:

Երեխաներին աջակցության կենտրոն.

Նախատեսված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների անդամների

⁴³ Հայաստանի հանրապետությունում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հայեցակարգ, ՀՀ կառավարության 12.05.2016թ. նիստի N 18 արձանագրային որոշում, 6րդ գլուխ, կետ 20

⁴⁴ Հայաստանի Հանրապետությունում նման խնամք իրականացնում է «ՍՈՍ» Մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը:

սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների տրամադրման, ընտանիքի չափահաս անդամների զբաղվածության ապահովմանն աջակցելու, երեխայի նյութական ու կենցաղային պահանջների բավարարման, կրթությանն ու դաստիարակությանն օժանդակելու, առաջին բժշկական օգնության ծառայության տրամադրման և խնամքի ապահովման համար՝ մինչև երեխային ծնողին վերադարձնելը կամ երեխայի նկատմամբ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը, կամ խնամատար ընտանիքում տեղավորելը, իսկ դրանց անհնարինության դեպքում՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում տեղավորելը:

Երեխաների բժշկասոցիալական վերականգնողական հաստատություն

Երեխաների բժշկասոցիալական վերականգնողական հաստատությունը կոչված է իրականացնել հատուկ կարիքներ ունեցող երեխաների բուժումը, խոսքի խանգարումների շտկումը, համալիր վերականգնողական այլ միջոցառումների իրականացումը, հոգեբանական աջակցության տրամադրումը, ինչպես նաև բուժման ընթացքում երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում:

Ստուգիչ հարցեր

1. Որո՞նք են հանցավորության դեմ պայքարում իրավապահ համակարգի կողմից իրականացվող ժամանակակից հայեցակարգերը:
2. Ո՞րն է հանցավորության կանխարգելման արդի ուղղությունների հիմնական նկարագիրը և դասակարգումը:
3. Որո՞նք են վերականգնողական և ավանդական արդարադատության տարբերությունները:
4. Ի՞նչ հիմնական իրավական ակտերով է կարգավորվում ԱԾԽՄ երեխաների սոցիալական պաշտպանությունը:
5. Որո՞նք են ԱԾԽՄ երեխաների խնամքի կազմակերպման հիմնական ձևերը:
6. Որո՞նք են ոստիկանության հիմնական գործառույթները ԱԾԽՄ երեխաների իրավունքների պաշտպանության հարցում:

8.4. Անչափահաս իրավախախտի ռիսկերը և կարիքները, պրոֆիլակտիկ աշխատանք կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների շրջանում

Անչափահասների կողմից կատարվող իրավախախտումները հասարակության քաղաքական, մշակութային, բարոյական, ընդհանուր առմամբ հասարակության վիճակի ուղղակի ցուցանիշներ են, և դրանց կանխարգելումը հնարավոր է միայն առկա ընդհանուր խնդիրների կարգավորման ուղիների գործադրմամբ: Անչափահասների կողմից կատարվող իրավախախտումները կայացած, հստակ ձևավորված դիրքորոշումների արդյունք չեն, չունեն հակահասարակական վարք դրսևորելու խորքային մոտիվացիա և վարքային ձևեր. որպես կանոն՝ դրանք վարքի իրավիճակային դրսևորումներ են, սոցիալ-կենցաղային, ընտանեկան խնդիրների լուծման թվացյալ հեշտ տարբերակ, հուսալքության կամ ըմբոստության այլընտրանքային միջոց: Հուսալ, որ երբևէ չեն լինի անչափահաս իրավախախտներ, իհարկե, իրատեսական չէ: Սակայն հնարավոր է կանխել սոցիալական հիմքերի վրա նրանց իրավախախտ վարքի դրսևորման աճը: Առավելապես վտանգավոր է, որ սկզբնական շրջանում սոցիալական հանգամանքներից «հարկադրված» իրավախախտումը, հետագայում կարծրանալով, վերածվում է կայուն վարքագծի նմուշի, ինչի պատճառով անչափահաս տարիքում մեկ անգամ հանցագործություն կատարած անձանց մոտ չափահաս տարիքում ձևավորվում է հանցածին վարքագծի տեսակ:

Ընդհանուր առմամբ, իրավախախտում կատարած և հատկապես հանցագործություն կատարած անչափահասների շրջանում տարբեր երկրներում կատարված հետազոտությունները ցույց են տվել այն գործոնները, որոնց ազդեցությամբ անչափահասը կատարում է իրավախախտում: Այս գործոնները ընկալվում են որպես ռիսկեր և կարիքներ, որոնք անչափահասի սոցիալականացման գործընթացում նպաստում են հակաօրինական վարքագծի դրսևորմանը: Պրակտիկան ցույց է տվել, որ իրապես հասարակության մեջ ռիսկային գործոնների նվազեցման դեպքում արձանագրվում է անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների նվազում: Անչափահասի վարքի ձևավորման,

նրա սոցիալականացման համար անփոխարինելի և առաջնային նշանակություն ունի ընտանիքը. անչափահասի իրավախախտ վարքի ձևավորմանը նպաստում են ընտանիքները, որոնք լիարժեք չեն իրենց գործառույթամբ: Վերջին տարիներին առավել կարևոր է դառնում ցերեկային կենտրոնների և ծառայությունների առկայությունը, քանի որ դրանք լրացնում և աջակցում են դժվարություններ ունեցող ընտանիքներին՝ դրանով իսկ երեխաներին զերծ պահելով հնարավոր իրավախախտ վարքից, հանցավոր խմբավորումների մեջ ներգրավվելուց, աշխատանքային շահագործումից և այլն: Համայնքային նման կենտրոնների առավելությունը կայանում է նրանում, որ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաները չեն ուղղորդվում հաստատություն և ծնողները հնարավորություն են ստանում համայնքի աջակցությամբ իրականացնել երեխայի համալիր խնամքն ու դաստիարակությունը:

Ռիսկային գործոն է դիտարկվում երեխայի բնակության վայրը. քաղաքի արվարձաններում, սոցիալապես աղքատ հատվածներում բնակվող երեխաները առավել հակված են իրավախախտ վարք դրսևորելու: Շատ վիճելի գործոն է աղքատությունը: Առանձին վերցրած այն՝ որպես ուղղակի պատճառ, չի կարող անմիջականորեն ազդել իրավախախտ վարքի ձևավորման վրա, սակայն նկատի ունենալով, որ աղքատությունը ինքնին զուգորդվում է տարբեր ռիսկային պատճառներով, ապա դրանք ամբողջության դեպքում մեծացնում են իրավախախտման վտանգը: Այսպես, կրթություն և աշխատանք չունեցող ծնողների խնամքին մնացած երեխաները տնտեսական աղքատության հետ մեկտեղ յուրացնում են աղքատության բոլոր մյուս ատրիբուտները՝ առողջության կորուստ (այդ թվում և՛ ֆիզիկական, և՛ հոգևոր առողջության), կոնֆլիկտայնություն ընտանիքում, բռնություններ և այլն: Այսպիսով, աղքատությունը՝ որպես ընդհանրական գործոն, դառնում է իրավախախտման որոշիչ պատճառ: Սա է պատճառը, որ հաճախ երեխաների հետ աշխատող բազմամասնագիտական խմբերը դժվարանում են տարանջատել դեֆանտ վարքագծի տեսակները միևնույն անչափահասի մոտ՝ առաջնության տեսակետից փորձելով դասակարգել դրանք: Որպես կանոն՝ անկանոն սոցիալականացման արդյունքում երեխաների մոտ ձևավորվում են դեֆանտ վարքագծի տարբեր նմուշներ միմյանց զուգահեռ,

որոնք փոխլրացնում են նրա հակասոցիալական վարքագիծը: Այսպես, մուրացիկ և գող երեխան զուգահեռ դրսևորում է այս երկու դևիանտ վարքագծերը՝ որպես այլընտրանք իրավիճակին:

«Օրենսդրությամբ բոլոր ռիսկային իրավիճակները միախմբված են մեկ իրավիճակի մեջ, որը սահմանվում է որպես կյանքի դժվարին իրավիճակ:

Կյանքի դժվարին իրավիճակ՝ հաշմանդամության, հիվանդության, տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, առանց ծնողական խնամքի մնալու, աղքատության, գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկվելու, անօգնականության, միայնակության, սոցիալական մեկուսացման, վնասակար սովորույթների, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ազատազրկման վայրերում գտնվելու կամ այդ վայրերից վերադառնալու հանգամանքներից որևէ մեկով կամ դրանց համակցմամբ մարդու կենսագործունեությանը խանգարող օբյեկտիվ իրավիճակ, որն անձն ինքնուրույն հաղթահարել չի կարող⁴⁵: Կարիքի բավարարումը սոցիալական բնականոն կենսագործունեության երաշխիք է և առողջ զարգացման նախապայման:

Երեխաների կարիքները հենց առանձնահատուկ են նրանով, որ պահանջում են յուրահատուկ մոտեցում՝ հիմնված մարդու իրավունքների արժևորման վրա: Եթե դասակարգենք ռիսկերն ու կարիքները ըստ դրանց ծագման, ապա կարող ենք ասել, որ անչափահասների հետ պրոֆիլակտիկ աշխատանքը պահանջում է համալիր մոտեցում և արձագանք հետևյալ մակարդակներում՝ անհատական, ընտանեկան, խմբային, դպրոցական, համայնքային:

Պրակտիկան ցույց է տվել, որ առավել արդյունավետ են այն ծառայությունները, որոնք ընդգրկում են մի քանի բաղադրիչներ, այդ թվում՝ ընտանիքի հետ աշխատանք, դպրոց, կրթություն, թերապևտիկ աշխատանքներ: Ընտանիքի հետ աշխատանքը կարևորվում է նրանով, որ դրա շնորհիվ չափահաս մարդկանց ևս տրվում է հնարավորություն՝ նոր հմտություններ ձեռք բերելու,

⁴⁵ Սոցիալական աջակցության մասին «Օրենք

իսկ ծնողները երեխաների դաստիարակության և վերահսկողության լավագույն հնարավորությունն ունեն:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի հետ պրոֆիլակտիկ աշխատանքում առաջնային նշանակություն ունի հետևյալ մեթոդների համալիր կիրառումը.

1. Երեխայի հայտնաբերում, որն իրականացվում է ոստիկանության ծառայության շրջայցի, ստացված տեղեկատվության, օպերատիվ աշխատանքի կամ այլ գործողության արդյունքում:
2. Երեխայի, ծնողների/օրինական ներկայացուցիչների հետ նախնական զրույց. շատ կարևոր է երեխայի հետ առաջնային զրույցը, որը պետք է վստահություն ստեղծի երեխայի հետ աշխատանքը շարունակելու համար:
3. Երեխայի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, նախնական ուսումնասիրություն և ըստ հետագա անհրաժեշտության՝ գնահատում: Տեղեկատվությունը պետք է հավաքագրվի հնարավոր բոլոր աղբյուրներից:
4. Տեղեկատվության փոխանցում համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովին և/կամ երեխայի իրավունքների պաշտպանության բաժնին:
5. Երեխաների իրավունքների պաշտպանության բարելավմանն ու խնամքի պատշաճ կազմակերպմանն ուղղված համատեղ միջոցառումների իրականացում՝ բոլոր գործընկեր կառույցների հետ յուրաքանչյուր անհատական գործի շրջանակում:
6. Ըստ ուսումնասիրության արդյունքների, ծնողների կողմից երեխաների խնամքի կազմակերպման հարցում ծնողական պարտականությունների ոչ պատշաճ կատարման, երեխաների վրա բացասական ազդեցություն ունեցող, հակասոցիալական վարքագիծ դրսևորող ծնողների (կամ նրանց օրինական ներկայացուցիչների) նկատմամբ պրոֆիլակտիկ հաշվառման իրականացում:
7. Ուսումնասիրության արդյունքներով պարզված իրավախախտում կատարած անչափահասների պրոֆիլակտիկ հաշվառման իրականացում:
8. Հաշվառման մեջ գտնվող անչափահասների վարքի նկատմամբ վերահսկողություն դպրոցում, համայնքում:

9. Հաշվառման մեջ գտնվող անչափահասների հետ պարբերական հանդիպումներ, խորհրդատվության տրամադրում, ուղղորդում համայնքային վերականգնողական կենտրոններ կամ այլ ծառայություններ:
10. Հաշվառման մեջ գտնվող անչափահասների ներգրավում համայնքի սոցիալ-մշակութային, կրթական միջոցառումներին:
11. Բացասական ազդեցություն ունեցող և հաշվառման մեջ գտնվող ծնողների հետ պարբերական գրույցներ, կանխարգելիչ միջոցառումներ, ինչպես նաև ուղղորդում աջակցության ծառայություններ:

8.5. Անչափահասի հանցավորության ու նրա կողմից կրկնահանցագործության ռիսկի գնահատում

Անչափահասների հանցավորության դեմ պայքարի արդյունավետությունը, հիրավի, կարելի է գնահատել կանխարգելմանն ուղղված ջանքերի արդյունավետությամբ: Ինչպես հուշում են ՄԱԿ-ի ուղենիշները⁴⁶, անչափահասների հանցավորության կանխարգելումը վերաբերում է պատկան մարմինների կողմից մշակված և հասցեական ներդրված ծրագրերի ու մեխանիզմների ամբողջությանը, որոնք նպատակ ունեն ստեղծել ու զարգացնել հանցավորության նվազեցման համար արդյունավետ միջավայր⁴⁷:

Սույն գլխում կրիտարկենք հանցավորության կանխարգելման երկու մակարդակ՝ հնարավոր հանցավորության կանխում (կամ նախականխում) և կրկին անգամ նույն մարդու կողմից հանցանք կատարելու հավանականության կանխարգելում:

Ռիսկ (ռիսկայնություն) ասելով դիտարկում ենք անչափահասի վարքային և անձնային գործոններ կամ գործոնների համախումբ, որոնց առկայության դեպքում կարելի է կանխատեսել անչափահասի կողմից հնարավոր հակասոցիալական/հրավախախտ վարքի դրսևորում:

Ինչպես տեսանք նախորդ վերնագրերում, անչափահասների հանցավորությունն ինտեգրալ երևույթ է՝ պայմանավորված

⁴⁶ Տես Գլուխ 1. 1 կետ

⁴⁷ ՄԱԿ-ի Ռիադյան ուղենիշներ, գլուխ 1.1

անձնային ու սոցիալական տարբեր պայմանների միաժամանակյա համադրմամբ, որի արդյունքում ծնվում է իրավախախտումը: Այս իմաստով, ոստիկանության առջև ծառանում են հետևյալ կարևոր խնդիրները՝

- ուսումնասիրել այն գործոնները, որ կարող են նպաստել տվյալ համայնքում անչափահասների հանցավորությանն ընդհանուր առմամբ (կրիմինոգեն կամ քրեաձին գործոններ)⁴⁸,
- բացահայտել անչափահասների, ովքեր առավել մեծ հավանականությամբ առնչվում են այդ գործոններին,
- գնահատել այդ գործոններին առնչվելու բնույթն ու աստիճանը,
- ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ տվյալ քրեաձին գործոնների ազդեցությունը նվազեցնելու և տվյալ անչափահասի նկատմամբ հասցեական միջամտություն կազմակերպելու ուղղություններով (անհրաժեշտության ու նպատակահարմարության դեպքում՝ օգտագործելով համայնքային ու հանրապետական ծածկույթով ծառայություններ մատուցող պետական ու ոչ պետական մարմինների):

Ներկայացվածը քրեական արդարադատության վերաբերյալ արդի տեսություններն ու պրակտիկան դիտարկում ու անվանում են որպես անչափահասների հանցավորության դիսկի գնահատում: Մի դեպքում գնահատվում է, թե արդյոք որքանով է հավանական տվյալ անչափահասի կողմից իրավախախտում կատարելը, մյուս կողմից՝ ինչպիսին է տվյալ անչափահասի կողմից կրկին անգամ հանցանք կատարելու հավանականությունը:

Հանցավորությունը սոցիալական երևույթ է: Այն, ունենալով ձևավորման ու զարգացման համար հաճախ նույնական պատճառականություն (անձնային գործոններ, կրթություն, ընտանիք, համայնք և այլն), այդուհանդերձ, տարբեր է տարբեր

⁴⁸ Գործոնների ամբողջություն է, որոնց առկայությունը թույլ է տալիս առավել մեծ հավանականությամբ կռահել կամ ենթադրություն անել հնարավոր հանցավոր վարքի վերաբերյալ: Օրինակ՝ կրթության բացակայությունը, ընտանիքում առկա կոնֆլիկտներն ու բռնությունը, խիստ ցածր/բարձր ինքնագնահատականը, բարձր կոնֆլիկտայնությունն ու ագրեսիվությունը և այլն:

հասարակություններում ու մշակույթներում: Աշխարհի տարբեր երկրներ ձևավորել ու զարգացրել են իրենց սոցիալ-մշակութային ու այլ առանձնահատկություններին համապատասխան ռիսկի գործիքներ, որոնք պարունակում են ամենատարբեր քրեաձին գործոններ, ռիսկի գնահատման տարբեր մեխանիզմներ ու ընթացակարգեր⁴⁹:

Անհրաժեշտ է փաստել, որ ռիսկի գնահատումը գործընթաց է և ո՛չ վերջնարդյունք: Այն, անվերջ փոփոխվող սոցիալական հարաբերություններին, քրեաձին գործոններին զուգընթաց, մշտապես փոփոխվող ու թարմացվող գործընթաց է: Այն գործոնները, որոնք միավոր ժամանակահատվածում եղել են քրեաձին ու բարձրացրել են իրավախախտում կատարելու հավանականությունը, որոշ ժամանակ հետո կարող են կորցնել իրենց ռիսկայնության նախկին աստիճանը: Փոխարենը կարող են առաջանալ նոր գործոններ կամ նախկին նվազ ռիսկայնություն ենթադրող գործոնները կարող են առավել մեծ հավանականությամբ ենթադրել իրավախախտման ռիսկ: Օրինակ՝ ֆորմալ (դիցուք՝ դպրոցական կամ ԲՈՒՀ-ական) կրթությանն այսօր փոխարինելու են գալիս ոչ ֆորմալ կրթության տարատեսակներ, աշակերտների առաջադիմությունը գնահատելու (որոշ դեպքերում, նույնիսկ չգնահատելու (կրթության ֆիննական մոտեցում)) տարբեր ցուցիչներ, որոնք թեև կարող են դասվել «կրթության առկայություն/բացակայություն», «առաջադիմության առկայություն» քրեաձին գործոնների շարքում, սակայն այսօր պահանջում են առավել խորքային ու դետալիզացված վերլուծություն:

Այս իմաստով, ռիսկի գնահատման գործընթացը թույլ է տալիս հնարավորինս արդյունավետ կանխարգելել հնարավոր իրավախախտումները՝ մշտապես «ձեռքը զարկերակին պահելու» սկզբունքով:

Մշտապես պետք է հիշել, որ անչափահասի իրավախախտման ռիսկի գնահատումն առավելապես միտված է բացահայտել անչափահասի նկատմամբ խնամք ու հոգատարություն դրսևորելու անհրաժեշտ ուղղությունները: Այն որևէ կերպ չպետք է դիտարկել որպես «պոտենցիալ հանցագործ» կամ

⁴⁹ Risk Assessment in Juvenile Justice: A Guidebook for Implementation. Gina M. Vincent at all, T. MacArthur Foundation, 2012

«ղժվար երեխա» պիտակավորելու հնարավորություն կամ հանցագործին պատժելու գործիք:

Այս իմաստով, չափազանց աչալրջություն, մասնագիտական բարձր պատրաստականություն և երեխայակենտրոնություն է պետք դրսևորել որևէ երեխայի իրավախախտման ռիսկը գնահատելը հանձն առնելիս: Ռիսկի գնահատման գործընթացն ու գործիքները լուծում են հենց այդ խնդիրը՝ տարանջատելով ու գնահատելով բոլոր «կռվարարներին», «ղժվար երեխաներին», «համայնքում աչքի ընկնողներին» և այլն: Այսպիսի պիտակավորում ունեցող անչափահասները բնավ էլ կարող են չենթադրել հնարավոր իրավախախտման բարձր ռիսկ:

8.5.1. Ինչի համար են և ինչ են մեզ տալիս ռիսկի գնահատման գործիքները

Անչափահասների վերաբերյալ որոշում կայացնողները, մասնավորապես՝ ոստիկանության աշխատակիցները, հաճախ բախվում են խնդրի, թե ինչպես գնահատել այս կամ այն անչափահասի կողմից շրջապատին հնարավոր հասցվելիք վնասը: Ինչպես գնահատել, թե ինչպիսի կանխարգելիչ և/կամ պաշտպանությանն ուղղված միջամտություններ են անհրաժեշտ իրեն ու շրջապատին: Իրավախախտման ռիսկի գնահատման գործիքները կարող են որոշ իմաստով լուծել այս խնդիրների մի մասը:

Այսպես, առաջին հերթին, ռիսկի գնահատումը հնարավորություն է տալիս գնահատել անչափահասի կողմից իրավախախտում կատարելու հնարավորությունը կամ հավանականությունը: Ավելին, հնարավորություն է տալիս ոստիկանին գնահատել տվյալ ռիսկի բարձր կամ ցածր լինելը: Օրինակ՝ երեխան կարող է չունենալ կրթություն, չցանկանա կրթվել դպրոցում, ունենա թմրամոլ հայր, միևնույն ժամանակ՝ ողջ օրը նվիրել կիթառի (կամ երաժշտական այլ գործիքի) դասերի, որևէ օտար լեզու պարապելու կամ իր հասակակիցներին համակարգչային հմտություններ ուսուցանելուն: Ոստիկանի խնդիրն է գնահատել, թե որքանով կարող են առաջին գործոնները (լինելով բավականին քրեածին իրենց բնույթով) մղել անչափահասին իրավախախտ վարքի: Երկրորդ խումբ գործոններն ուսումնասիրելիս էլ պիտի գնահատի, թե որքանով

դրանք կարող են չեզոքացնել ֆորմալ կրթություն ստանալու կամ հոր թմրամոլ լինելու գործոնները և հետևությունն անի հնարավոր ռիսկի բարձր կամ ցածր լինելու վերաբերյալ: Ռիսկի գնահատումն, այս իմաստով, հնարավորություն է տալիս պատկերացում կազմել նաև ռիսկային գործոնների վերաբերյալ և գնահատել դրանք ոչ թե առանձին-առանձին, այլ համամասնության ու ամբողջակա-նության մեջ:

Երկրորդ, ռիսկի գնահատումը հնարավորություն է տալիս մոտավոր պատկերացում կազմել այն միջամատության ձևե-րի մասին, որոնք կարող են հասցեական լինել տվյալ անչափա-հասի կողմից հնարավոր իրավախախտման ռիսկը նվազեցնելու համար: Իհարկե, ռիսկի գնահատման գործիքի հիման վրա միջա-մատության պլան կազմելու համար, խիստ ցանկալի է, որպեսզի այդ գործիքները պարունակեն ռիսկի դինամիկ (փոփոխվող, աճող, զարգացող՝ ոչ ստատիկ) գործոններ (ստատիկ և դինամիկ գործոնների մասին առավել մանրամասն՝ Հայաստանում ներդր-ված ու սույն ձեռնարկում ներկայացված հատվածում): Օրինակ՝ երեխան (Գագիկը) մեծացել է տարբեր մշակույթներ ու արժեհա-մակարգեր ունեցող ծնողների միջավայրում, որտեղ հաճախ են եղել բռնության դրսևորումներ, ծնողների միջև անառողջ մրցակ-ցություն, երեխայի նկատմամբ անտարբեր և/կամ վատ վերա-բերմունք և այլն: Որոշ ժամանակ անց՝ 7-8-րդ դասարաններում (14-15 տարեկան), դպրոցի ուսուցիչների ու տնօրինության կողմից հնչում են բողոքներ, որ Գագիկը սկսել է դրսևորել բարձր ագրեսի-վություն, կոնֆլիկտային է, ֆիզիկական բռնություն է գործադրում հասակակիցների նկատմամբ և այլն: Թե միջավայրը և թե տար-բեր հոգեվիճակներ ու հոգեբանական առանձնահատկություն-ներ պատկանում են դինամիկ գործոնների խմբին և կարող են, հասցեական միջամտությունների արդյունքում, կամ ժամանակի ընթացքում փոփոխվել: Ուստիկանի խնդիրն է դառնում, առն-վազն, գնահատել, թե ում կողմից և ինչպիսի հասցեական միջամ-տության արդյունքում կարող է նվազեցվել Գագիկի բացասական ապրումները բռնությամբ ուղեկցվող ընտանիքում և ագրեսիվու-թյան ու կոնֆլիկտայնության աստիճանը:

Երրորդ դեպքում, ռիսկի գնահատումը հնարավորու-թյուն է տալիս ստանդարտացված գործիքի միջոցով հավաքել

հանցավորության վերաբերյալ անհրաժեշտ ու կարևոր տեղեկատվություն: Այն կարող է մատնացույց անել անչափահասների կողմից իրավախախտումներ կատարելու հիմնական պատճառներն ու պայմանները, ինչը կնպաստի ուժերի (ռեսուրսների) արդյունավետ բաշխմանն ու հանցավորության կանխարգելման գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Այսպիսով, ռիսկի գնահատման գործընթացը թույլ է տալիս հասկանալ, թե ինչ է կատարվում կամ փոփոխվում միջավայրում, ինչը կարող է ազդել հանցավորության ձևավորմանն ու զարգացման վրա և ինչպես նվազեցնել իրավախախտումներին նպաստող գործոններն ու անբարենպաստ միջավայրի ազդեցության աստիճանը:

Գործոնները, որ ընգրկված են անչափահասների հանցավորությանն ու կրկնահանցագործությանն ռիսկի գնահատման գործիքներում հիմնականում կրում են ստատիկ կամ դինամիկ բնույթ⁵⁰: Որպես կանոն, ստատիկ են համարվում այն գործոնները, որոնք ժամանակի ընթացքում անփոփոխ են, անցյալում կատարված և ավարտված երևույթներ ու հատկանիշներ են: Օրինակ՝ ստատիկ ռիսկային գործոնների խմբին են դասվում առաջին իրավախախտման պահին անչափահասի տարիքը, ծնողների (նրանցից մեկի) մահացած լինելու հանգամանքը, նախկինում դատված լինելու հանգամանքը և այլն:

Այսուհանդերձ, ինչպես արդեն վերը նշվեց, ռիսկի գնահատումը գործընթաց է՝ փոփոխվող, լրացվող ու դինամիկ: Այս իմաստով, ռիսկի գնահատումը մեծապես պարունակում է դինամիկ, կամ քրեածին գործոններ, որոնք ենթադրում են անընդհատապես փոփոխություն, զարգացում: Օրինակ՝ անչափահասի կոնֆլիկտայնությունը, ագրեսիվության բարձր աստիճանը, ծնողների նկատմամբ բացասական վերաբերմունքը կամ «հանցավոր հեղինակությունների» նկատմամբ հարգանքը, կրթությունը, հետաքրքրությունները և այլն: Սրանք այն գործոններն են, որ ժամանակի ընթացքում փոփոխելի են, ճկուն են, և ռիսկի գնահատումը հանգեցնում է հենց այս հանգամանքների ու գործոնների հնարավոր փոփոխությունների մասին ենթադրություններ անելուն:

⁵⁰ Tools to identify and assess the risk of offending among youth Published by National Crime Prevention Centre (NCPC); Public Safety Canada, 2010

Հայաստանի Հանրապետությունում դեռևս 2015թ-ից ձևավորվեց ու 2016թ-ին ՀՀ ոստիկանությանը տրամադրվեց դպրոցական տեսուչների կողմից կիրառվելիք «Անչափահասի վարքի նախնական ու խորքային ուսումնասիրման և գնահատման գործիքներ»⁵¹: Այս գործիքների հիմնական նպատակն ավագ դպրոցներում իրավախախտման ռիսկ ունեցող անչափահասների բացահայտումն է, ռիսկի գնահատումն ու հասցեական միջամտության պլանավորումը: Սույն ձեռնարկին կից հավելվածներով ներկայացվում են անչափահասների ռիսկի «նախնական գնահատման» (Հավելված 8) ու «խորքային գնահատման» (Հավելված 9) գործիքները: Դրանք անհրաժեշտ է դիտարկել որպես անչափահասների կողմից հավանական իրավախախտման գնահատման ուղեկիշ կամ ուղեցույց՝ անկախ այն հանգամանքից, թե որտեղ ու ինչ միջավայրում է (դպրոց, համայնք, հաճախող խմբակ և այլն):

Բացի հանցավորության ռիսկի գնահատումից, ոստիկանության առջև հաճախ կարող է ծառանալ նույն անչափահասի կողմից կրկին անգամ հանցագործություն կատարելու ռիսկի գնահատման անհրաժեշտություն: Թեպետ, ռիսկի գործոնները հաճախ կարող են համընկնել, սակայն հարցերի շրջանակը փոքր-ինչ տարբերվում է՝ հաշվի առնելով նախկինում իրավախախտում կամ հանցանք գործելու առկայությունը: Այս իմաստով, կրկնահանցագործության ռիսկի գնահատումը պահանջում է լինել առավել դիպուկ և թիրախային: Ոստիկանը պիտք է կարողանա հնարավորինս դետալիզացված ու կոնկրետացված ներկայացնել արարքի կատարման հավանականությունը, հնարավոր արարքի բնույթը, կատարման եղանակները, հնարավոր զոհը և այլն:

Ստորև ներկայացվում են հարցադրումներ, որոնց պատասխանները զգալիորեն կարող են հեշտացնել ոստիկանի առջև դրված կրկնահանցագործության ռիսկի գնահատման խնդրի լուծման գործընթացը: Այսպես.

1. Ի՞նչ է ավելի հավանական, որ տեղի կունենա. Ինչպիսի՞ հանցագործություն է ավելի հավանական, որ կկատարի անչափահասը:

⁵¹ ԱՄՆ-ում կիրառվող «Երիտասարդների գնահատման և ուսումնասիրության գործիք»ի ադապտացված տարբերակը (Youth Assessment and Screening Instrument: (YASI)): Կազմվել է «ՓԻ-Էյչ» Ինթերնեշնլ» կազմակերպության աջակցությամբ և տրամադրվել ՀՀ ոստիկանությանը, 2016թ.

2. Կա՞ արդյոք հավանականություն, որ ինչ որ մեկը կտուժի, եթե այո, ապա ո՞վ:
3. Ի՞նչ ծանրության հանցանք ամենայն հավանականությամբ դա կլինի (արդյոք կուղեկցվի դաժանությամբ, ֆիզիկական կամ այլ բնույթի բռնություններով և այլն):
4. Ամենայն հավանականությամբ, ե՞րբ տեղի կունենա այդ հանցագործությունը:
5. Ի՞նչ հանգամանքների բերումով ավելի մեծ կամ փոքր հավանականությամբ դա տեղի կունենա:
6. Ի՞նչ է հնարավոր անել այդ հանգամանքների վրա ազդելու ուղղությամբ:
7. Ո՞րն է եղել անցյալում իրականացված ամենալուրջ հանցանքը և ինչպիսի հանգամանքներում է դա տեղի ունեցել:
8. Առկա՞ են արդյոք ներկայում այն վարքագիծը և հանգամանքները, որոնք անցյալում հանգեցրել են հանցագործության իրագործման:
9. Կա՞ն արդյոք անցյալում նման օրինակներ նրա վարքագծում:
10. Ի՞նչ է անչափահասն ասում իր հնարավոր գործողությունների մասին:
11. Ցանկանո՞ւմ է արդյոք անչափահասը, որ իրեն հետ կանգնեցնեն:
12. Ի՞նչ այլ տեղեկատվություն է առկա այլ աղբյուրներից՝ հաշվետվություններ, արձանագրություններ:

Անչափահասի ռիսկայնության վերաբերյալ եզրակացություն կազմելը բազմամասնագիտական թիմային աշխատանքի արդյունք է: Եվ, թեպետ, ցանկալի է հարցազրույցն իրականացնել հնարավորինս մեկուսի պայմաններում, այդուհանդերձ, անչափահասի ռիսկայնության վերաբերյալ գնահատականը պետք է կրի թիմային բնույթ: Այս առումով, ցանկալի է վերջնական գնահատման արդյունքները քննարկել տվյալ անչափահասի հետ աշխատող/աշխատած մասնագետներից կազմված խմբում (համայնքի խնամակալության ու հոգաբարձության հանձնաժողով, սոցիալական դեպք վարող, համայնքահեն ՀԿ-ներ, մասնագիտական կենտրոններ և այլն):

Տեղեկատվություն ստանալու համար առաջնային աղբյուր են հանդիսանում անչափահասները: Բոլոր գործոնների առկայության և դրանց դրսևորման վերաբերյալ տեղեկատվությունը ստացվում է անչափահասի հետ անմիջական հարցազրույցի ընթացքում: Բոլոր այն դեպքերում, երբ անչափահասի վերաբերյալ տեղեկատվությունը սակավ է, անչափահասը չի պատմում իր մասին կամ անհրաժեշտ է այլ անձի պատասխան ու տեսակետ, անչափահասների գործերով ոստիկանը դիմում է համապատասխան մարդկանց կամ կառույցների, որոնք հանդիսանում են տեղեկատվության արտաքին աղբյուրներ:

Անչափահասի վերաբերյալ տեղեկատվության արտաքին աղբյուրներ կարող են հանդիսանալ՝

- ընտանիքի անդամներ,
- բակի ընկերներ/համայնքի անդամներ,
- համայնքային պետական ու ոչ պետական ծառայություններ (այդ թվում՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ, հասարակական կազմակերպություններ, զբաղվածության կենտրոններ, այլ դպրոցներ (որտեղից տեղափոխվել/հեռացվել է անչափահասը), առողջապահական հաստատություններ և այլն),
- աշխատանքի վայր կամ մասնագիտական կրթական հաստատություններ, ուր հաճախում է անչափահասը,
- դպրոցի ուսուցչական կազմ, օգնող մասնագետներ (սոցիալական աշխատող, սոցիալական մանկավարժ, հոգեբան):

ՕՐԻՆԱԿՆԵՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ/ԿԱՍ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Օրինակ 1.

Լուսինեն 17 տարեկան է: Մոր հետ, որն ունի ալկոհոլային հակում, ապրում է բազմաբնակարան շենքում: Հայրը մահացել է: Լուսինեն բազմաթիվ անգամներ բացակայել է դպրոցից, կատարել տարատեսակ իրավախախտումներ (բայց ոչ հանցագործություն) և դպրոցի կողմից առկա ահազանգի պատճառով, հայտվել է ոստիկանության ուշադրության կենտրոնում: Հայտնի է, որ աղջիկը հետաքրքրված է համակարգչային տեխնոլոգիաներով: Ավելին, դպրոցի տնօրինության կարծիքով, իր տարիքին ոչ համապատասխան պրոֆեսիոնալությամբ նույնիսկ մրցում է իրեն դասավանդող համակարգչի ուսուցչի հետ: Սակայն, որևէ այլ առարկայի նկատմամբ չունի հետաքրքրություն: Առաջադիմությունը տարեցտարի նվազում է:

Լուսինեն նախորդ դպրոցից արդեն հեռացվել է տղաների հետ վիճաբանությունների պատճառով, սակայն երբևէ չի եղել հաշվառված ՈԲ-ում:

Հայտնի է նաև, որ Լուսինեն հաճախ չի գիշերում տանը և չի ցանկանում շփվել մոր հետ:

Առաջադրանք

- Դիտարկեք Լուսինեի՝ իրավախախտում կատարելու հավանականությունը և ռիսկի աստիճանը
- Գնահատե՞ք գործոններն առանձին-առանձին և համամասնության մեջ
- Դիտարկե՞ք, թե էլ ինչպիսի գործոններ են անհրաժեշտ Լուսինեի իրավախախտման ռիսկի գնահատումն ամբողջացնելու համար
- Ինչպիսի՞ն կլինի երեխայակենտրոն մոտեցումը և ինչպիսի՞ միջամտություն կնախատեսեք

Օրինակ 2.

Գևորգը 14 տարեկան է: Սովորում է հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանում: Մեկ տարի մնացել է նույն դասարանում՝

ցածր առաջադիմության պատճառով: Ապրում է հոր հետ: Մայրը հաճախ լինում է արտագնա աշխատանքների:

Տեղեկատվություն կա այն մասին, որ Գևորգը, մոր խնամքի բացակայության պատճառով, հոր կողմից հանձնվել է խնամքի հաստատություն և 3-5 տարեկան հասակում բնակվել այդ հաստատությունում:

Գևորգն ունի իրենից 4 տարի փոքր քույրիկ և հոր ուշադրության կենտրոնում է:

Գևորգը ոստիկանության ուշադրության կենտրոնում է հայտնվել ընկերների հետ բակում ալկոհոլ օգտագործելու պատճառով հարևանների ահազանգերի արդյունքում:

Հայտնի է, որ նման գինարբույքներ Գևորգն ու իր ընկերները հաճախ են կազմակերպում բակի տաղավարում: Առկա տեղեկատվությամբ պարզ է դառնում, որ Գևորգի ընկերներն իր դպրոցի 12-րդ դասարանի աշակերտներն են, որոնց «ղեկավարում են» 21 և 22 տարեկան երկու եղբայրներ:

Գևորգը 3 տարի հաճախել է երաժշտական դպրոց՝ ջութակի դասերի: Այնուհետ, բակում ծաղրի արժանանալու պատճառով, թողել է երաժշտական դպրոցը:

Ներկայումս Գևորգը գտնվում է ուսուցիչների խիստ ուշադրության կենտրոնում, սակայն արդյունքը դեռևս դրական չէ:

Առաջադրանք

- Դիտարկեք Գևորգի՝ իրավախատում կատարելու հավանականությունը և ռիսկի աստիճանը:
- Գնահատեք գործոններն առանձին-առանձին և համամասնության մեջ:
- Դիտարկեք, թե էլ ինչպիսի գործոններ են անհրաժեշտ Գևորգի իրավախախտման ռիսկի գնահատումն ամբողջացնելու համար:
- Ինչպիսի կլինի երեխայակենտրոն մոտեցումը և ինչպիսի միջամտություն կնախատեսեք:

Օրինակ 3.

Սուրենը 17 տարեկան է: Նա 15 տարեկան էր, երբ առաջին անգամ հայտնվեց ոստիկանության ուշադրության կենտրոնում, իսկ 16 տարեկանից վերցվել է հաշվառման:

Սուրենն ապրում է հոր կողմից տատիկի հետ: Մայրը մահացել է, երբ նա 14 տարեկան էր, իսկ հայրը գրեթե մշտապես գտնվում է ՌԴ-ում՝ արտագնա աշխատանքների: Սուրենն ընտանիքում միակ զավակն է:

Տասնվեց տարեկանից Սուրենն ու իր ընկերները (մեծ մասամբ բանակից նոր վերադարձած բակի ընկերներ) բռնություն կիրառելու միջոցով գումարներ են շորթում ամբողջ թաղամասի տղաներից՝ պատճառաբանելով, որ այդ գումարներն անհրաժեշտ են բանտում գտնվող իրենց ընկերներին: Նրանց հիմնական թիրախն են համայնքում իրենց պատկերացրած «հարուստների» երեխաները:

Ծեծի հիմքով Սուրենի նկատմամբ 16 տարեկան հասակում հարուցվել է քրեական գործ, սակայն տուժողների կողմից բողոքի բացակայության հիմքով գործը կարճվել է:

Վերջերս Սուրենն իր ուսին դաջել է արջի պատկեր և ընկերներին ներկայացնում է այն որպես ուժի խորհրդանիշ:

Սուրենի համար հեղինակություն է իր խմբի տղաներից մեկը, ով բանակում հասցրել է 1 տարի ազատազրկման դատապարտվել՝ ծառայակիցների նկատմամբ բռնություն գործադրելու պատճառով:

Սուրենն ունի սիրած աղջիկ, ով սովորում է դպրոցում իրենից մեկ տարի ցածր դասարանում:

Առաջադրանք

- Դիտարկեք Սուրենի՝ կրկին անգամ իրավախախտում կատարելու հավանականությունը և ռիսկի աստիճանը:
- Գնահատեք գործոններն առանձին-առանձին և համամասնության մեջ:
- Դիտարկեք, թե էլ ինչպիսի գործոններ են անհրաժեշտ Սուրենի կրկնահանցագործության ռիսկի գնահատումն ամբողջացնելու համար:

- Ինչպիսիքն կլինի երեխայակենտրոն մոտեցումը և ինչպիսիք միջամտություն կնախատեսեք:

Ստուգիչ հարցեր

1. Ի՞նչ պայմաններ են նպաստում անչափահասների հանցավորության ձևավորմանն ու զարգացմանը:
2. Ինչպե՞ս է բնութագրվում անբարենպաստ ընտանիքը և ինչպիսի՞ առանձնահատկություններ ունի:
3. Ի՞նչ է դևիանատ վարքը:
4. Ինչպիսի՞ տարատեսակներ ունի դևիանտ վարքը:
5. Ինչպե՞ս կբնութագրեք հանցավորության ու կրկնահանցագործության ռիսկը:
6. Ի՞նչու է անհրաժեշտ գնահատել հանցավորության ռիսկը:
7. Ի՞նչ պետք է սպասել ռիսկի գնահատման գործիքներից:
8. Ինչպիսի՞ գործոններ են պայմանավորում անչափահասների հանցավորության ռիսկը:
9. Ինչո՞վ են տարբերվում հանցավորության ու կրկնահանցագործության ռիսկերի գնահատման գործընթացները:
10. Ի՞նչ եք հասկանում ռիսկի գնահատման գործընթացում երեխայակենտրոն մոտեցման ենթատեքստում:

ՀԱՎԵԼՎԱԾ 8

ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ՎԱՐՔԻ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔ

Հարցաթերթիկը լրացվում է անչափահասի պատասխանների հիման վրա, իսկ ներկայացված ինֆորմացիայի հավաստիությունը ստուգվում է փաստաթղթերով:

1. Անչափահասի (*անուն, ազգանուն, հայրանուն*)

2. Ծննդյան ամսաթիվ (*օր, ամիս, տարի*)

/տարիք _____ / _____ տարեկան

3. Դասարան _____

4. Հաշվառման հասցե _____

5. Փաստացի բնակության հասցե _____

6. Կոնտակտային հեռախոսահամար _____

7. Սեռ (*ընդգծել*) _____ արական/իգական

8. Ազգություն _____

9. Գործիքի կիրառման պատճառը, առիթը *(ընդգծել)*
- Համայնքում բացասական գերակտիվություն (կռվարարություն, հանցավոր խմբավորումներին մասնակցություն, հանցավոր խմբավորումների ստեղծում)
 - Դասերից անհարգելի բացակայություն
 - Իրավախախտում
 - Հաշվառում ՈԲ-ում
 - Այլ _____

10. Դեպքի արձանագրման ամսաթիվ *(օր, ամիս, տարի)* _____

11. Հարցման ամսաթիվ *(օր, ամիս, տարի)* _____

Հարցման վայր _____

Հարցազրուցավարներ

12. Հարցազրուցավար *(Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն)*

13. Ուսումնասիրման ընթացքում տեղեկատվություն տրամադրած անձինք /կազմակերպություն

| Հ/Հ | Անուն, ազգանուն, հայրանուն | Պաշտոն |
|-----|----------------------------|--------|
| 1. | | |
| 2. | | |
| 3. | | |
| 4. | | |

**ՀԱՐՑԱԹԵՐԹ
(ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ)**

| Հ/Հ | ՌԻՍԿԻ ԳՈՐԾՈՆՆԵՐ | ՄԻԱՎՈՐ | |
|-----------|--|----------|----------|
| 1. | Առաջադիմությունը | V | 3 |
| | Գերազանց | | 0 |
| | Լավ | | 1 |
| | Բավարար | | 2 |
| | Անբավարար | | 3 |
| 2. | Մասնագիտական հետաքրքրությունը | V | 1 |
| | Ունի մասնագիտական հետաքրքրություն | | 0 |
| | Չունի մասնագիտական հետաքրքրություն | | 1 |
| 3. | Ընտանիքի կազմը | V | |
| | Երկու ծնողների առկայություն | | 0 |
| | Ծնողները ամուսնալուծված են/փաստացի ապրում են անջատ | | 1 |
| | Ծնողներից մեկը մահացած է | | 1 |
| | Երկու ծնողն էլ մահացած են | | 1 |
| | Ինսամակալ ընտանիք | | 1 |
| | | | |
| 4. | Ընտանեկան հարաբերությունները | V | 2 |
| | Մշտական լավ հարաբերությունների մեջ է ծնողների/ հարազատների հետ | | 0 |
| | Չունի մերձավոր ազգականներ | | 1 |
| | Ունի մերձավոր ազգականներ, սակայն վատ հարաբերությունների մեջ է | | 2 |
| | Առ այսօր չի բացահայտվել որևէ խնդիր ընտանիքում | | 0 |
| | Բացահայտվել են որոշ խնդիրներ ընտանիքում (վեճ, ծեծ) | | 2 |
| 5. | Բնակության պայմանները | V | 2 |
| | Ապրում է ծնողների/մերձավոր ազգականների տանը | | 0 |
| | Ապրում է հանրակացարանում կամ այլ հաստատությունում | | 1 |
| | Անօթևան է | | 2 |

| | | | |
|------------|--|----------|----------|
| 6. | Կեցության պայմանները | V | 3 |
| | Գերազանց կեցության պայմաններ | | 0 |
| | Լավ կեցության պայմաններ | | 1 |
| | Բավարար կեցության պայմաններ | | 2 |
| | Անբավարար կեցության պայմաններ | | 3 |
| 7. | Վարքը և առաջադիմությունը դպրոցում | V | 2 |
| | | V | 1 |
| | Դրսևորում է օրինակելի վարք և կանոնավոր կերպով հաճախում է դպրոց նվազագույնը վերջին 3 ամիսների ընթացքում | | 0 |
| | Դրսևորում է հակասոցիալական/իրավախախտ վարք և կանոնավոր կերպով չի հաճախում դպրոց նվազագույնը վերջին 3 ամիսների ընթացքում | | 1 |
| | | V | 1 |
| | Ընգրկված է դպրոցի կյանքին, մասնակցում է միջոցառումներին | | 0 |
| | Ընգրկված չէ դպրոցի կյանքին, դպրոցին վերաբերվում է որպես ժամանց | | 1 |
| | Շրջապատը (շփում) | V | 1 |
| 8. | Հիմնականում շփվում է հասակակիցների հետ | | 0 |
| | Հիմնականում շփվում է մեծահասակների հետ | | 1 |
| | Հիմնականում խուսափում է շփումներից, մեկուսացված է և ինքնամոխի | | 1 |
| | Շրջապատը (ազդեծություն) | V | 1 |
| 9. | Հիմնականում շփվում է օրենքի հետ խնդիր չունեցող և/կամ դրական վարքագիծ դրսևորող անձանց հետ | | 0 |
| | Հիմնականում շփվում է օրենքի հետ խնդիր ունեցող և/կամ բացասական վարքագիծ դրսևորող անձանց հետ | | 1 |
| 10. | Հետաքրքրությունները | V | 4 |
| | Ունի հետաքրքրություններ և կարողանում է կազմակերպել իր ազատ ժամանակը | | 0 |
| | Ցանկանում է զարգանալ, զբաղվել հետաքրքիր գործունեությամբ, սակայն չունի հնարավորություններ | | 1 |

| | | | |
|------------|--|----------|----------|
| | Չունի հետաքրքրություններ | | 2 |
| | Չի կարողանում ինքնուրույն կազմակերպել իր ազատ ժամանակը | | 3 |
| | Չի ցանկանում զարգանալ, զբաղվել հետաքրքիր և օգտակար գործունեությամբ | | 4 |
| 11. | Առնչությունը իրավապահ մարմինների հետ | V | 3 |
| | Չի առնչվել իրավապահ մարմինների հետ | | 0 |
| | Ներկայացվել է ոստիկանություն, բայց չի հաշվառվել | | 1 |
| | Հաշվառված է ոստիկանությունում | | 2 |
| | Ենթարկվել է պատասխանատվության | | 3 |
| 12. | Առաջին անգամ ոստիկանության հետ առնչվելու տարիքը | V | 3 |
| | Չի առնչվել | | 0 |
| | 16-18 տարեկան | | 1 |
| | 14-16 տարեկան չլրացած | | 2 |
| | Մինչև 14 տարեկան լրանալը | | 3 |
| 13. | Վնասակար վարքագիծը | V | 3 |
| | Չի ծխում, չի օգտագործում ալկոհոլ կամ թմրամիջոցներ | | 0 |
| | Ծխում է | | 1 |
| | Օգտագործում է ալկոհոլ կամ թմրամիջոցներ | | 2 |
| | Զբաղվում է մուրացկանությամբ | | 3 |
| | Զբաղվում է թափառաշրջիկությամբ | | 3 |
| 14. | Հոգեկան վիճակը | V | 3 |
| | Հոգեկան առողջության հետ կապված խնդիրների բացակայություն | | 0 |
| | Հոգեկան առողջության հետ կապված խնդիրների առկայություն (որևէ կլինիկայում հաշվառում) | | 1 |
| | Ազդեցիվ վարքագծի դրսևորում | | 2 |
| | Երբևէ կատարված ինքնավնասման փորձ | | 3 |

ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ԱՂՅՈՒՍԱԿ

| | ԳՈՐԾՈՆՆԵՐ | ՄԻԱՎՈՐ |
|-----|---|--------|
| 1. | Առաջադիմությունը | |
| 2. | Մասնագիտական հետաքրքրությունը | |
| 3. | Ընտանիքի կազմը | |
| 4. | Ընտանեկան հարաբերությունները | |
| 5. | Բնակության պայմանները | |
| 6. | Կեցության պայմանները | |
| 7. | Վարքը և առաջադիմությունը դպրոցում | |
| 8. | Շրջապատը (շփում) | |
| 9. | Շրջապատը (ազդեցություն) | |
| 10. | Հետաքրքրությունները | |
| 11. | Առնչությունը իրավապահ մարմինների հետ | |
| 12. | Առաջին անգամ ոստիկանության հետ առնչվելու տարիքը | |
| 13. | Վնասակար վարքագիծը | |
| 14. | Հոգեկան վիճակը | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | |

ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ

Ցածր՝ 0-10 միավոր (ավարտել գնահատումը)

Միջին՝ 11-20 միավոր (շարունակել գնահատումը)

Բարձր՝ 21 և բարձր միավոր (շարունակել գնահատումը)

ՀԱՎԵԼՎԱԾ 9

ՀԱՐՑԱԹԵՐԹ

Անչափահասի վարքի ռիսկայնության խորը գնահատման

Հարցաթերթիկը լրացվում է «Նախնական գործիքի» տվյալներով «միջին» կամ «բարձր» միավոր հավաքելու դեպքում՝ կրկին անչափահասի պատասխանների հիման վրա:

Ներկայացված տեղեկատվության հավաստիությունը ստուգվում է փաստաթղթերով

1. Անչափահաս (*անուն, ազգանուն, հայրանուն*)

2. Դեպքի արձանագրման ամսաթիվ (*օր, ամիս, տարի*)

____/____/____

3. Գնահատման ամսաթիվ (*օր, ամիս, տարի*) ____/____

____/____

4. Հարցման վայր _____

5. Հարցագրուցավար (*անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն*)

6. Գնահատման ընթացքում տեղեկատվություն տրամադրած անձինք /կազմակերպություն

| Հ/Հ | Ա.Ա.Հ | Պաշտոն | Ամսաթիվ | Ծանոթություն |
|-----|-------|--------|---------|--------------|
| | | | | |
| | | | | |
| | | | | |

| Հ/Հ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ | ՄԻԱՎՈՐ | |
|----------|--|----------|-----------|
| 1 | Անչափահասն ընտանիքում | V | 14 |
| 1.1. | Սովորաբար չի ենթարկվում ընտանիքում առկա կանոններին | | 1 |
| 1.2. | Անտեսված է ընտանիքի անդամների/մերձավոր ազգականների կողմից (եթե չունի ծնողներ) | | 1 |
| 1.3. | Ունի կոնֆլիկտներ ընտանիքի անդամների/մերձավոր ազգականների հետ | | 1 |
| 1.4. | Ծնողները/մերձավոր ազգականները չեն հաճախում դպրոց և ներգրավված չեն անչափահասի կյանքին | | 1 |
| 1.5. | Ընտանիքի անդամները/մերձավոր ազգականները բազասական ազդեցություն ունեն անչափահասի վրա | | 1 |
| 1.6. | Ծնողները տեղյակ են անչափահասի վարքագծից և չեն խրախուսում այն | | 1 |
| 1.7. | Ծնողները տեղյակ են անչափահասի վարքագծից ու խրախուսում կամ «հպարտանում են» դրանով | | 3 |
| 1.8. | Բացահայտված են անչափահասի նկատմամբ բռնության դեպքեր | | 1 |
| 1.9. | Բացահայտված են անչափահասի կողմից կատարված բռնության դեպքեր | | 2 |
| 1.10. | Առկա են տանից փախչելու դեպքեր | | 2 |
| 2 | Տեղեկություններ ընտանիքի անդամների վերաբերյալ | V | 18 |
| 2.1. | Ծնողներից մեկը կամ երկուսը եղել են դատապարտված | | 1 |
| 2.2. | Ծնողներից մեկը կամ երկուսը ներկայումս պատիժ են կրում | | 2 |
| 2.3. | Ծնողներից մեկը կամ երկուսը չարաշահել/չարաշահում են ակրոհոլը, օգտագործել/ուժ են հոգեմետ նյութեր կամ թմրամիջոց | | 2 |

| | | | |
|----------|--|----------|-----------|
| 2.5. | Ընտանիքը հաշվառված է որպես անհաշտ ընտանիք | | 2 |
| 2.6. | Ծնողներից մեկը կամ երկուսն ունեն հոգեկան առողջության խնդիրներ | | 2 |
| 2.7. | Ընտանիքում անընդհատ լարված մթնոլորտ է, բռնության սպառնալիքներ | | 2 |
| 2.8. | Ընտանիքում առկա է բռնություն անդամների միջև (ոչ անչափահասի նկատմամբ կամ կողմից) | | 2 |
| 2.9. | Ծնողները զբաղվում են մուրացկանությամբ/թափառաշրջիկությամբ | | 2 |
| 2.10. | Ընտանիքը մեկուսացած է համայնքից, ներգրավված չէ համայնքի կյանքին | | 1 |
| 3 | Վարքը դպրոցում | V | 11 |
| 3.1. | Անհարգալից է ուսուցիչների նկատմամբ | | 2 |
| 3.2. | Հիմնականում ներգրավվում է կոնֆլիկտային, հաճախակի բռնությամբ ուղեկցվող գործողություններում | | 2 |
| 3.3. | Դպրոցն ընկալում է որպես ժամանց կամ ժամանակի անհիմաստ կորուստ | | 2 |
| 3.4. | Որպես կանոն, ինքն է հրահրում կոնֆլիկտներ, վեճեր և բռնությամբ ուղեկցվող գործողություններ | | 3 |
| 3.5. | Եղել են դպրոցից հեռացման դեպքեր | | 2 |
| 4 | Շրջապատ/ համայնք | V | 14 |
| 4.1. | Հասակակիցների շրջանում բացասական հեղինակություն է կամ ձգտում է լինել այդպիսին | | 1 |
| 4.2. | Կազմակերպում կամ մասնակցում է հակասոցիալական/իրավախախտ խմբավորումներին | | 3 |
| 4.3. | Հիմնականում շփվում է բացասական ազդեցություն ունեցող անձանց հետ | | 1 |
| 4.4. | Շրջապատում ունի դատվածություն ունեցող անձիք | | 1 |
| 4.5. | Չունի կայուն շփումներ/ընկերներ | | 1 |
| 4.6. | Խուսափում է խորհուրդներից, համայնքում դրական վարք ունեցող մարդկանցից | | 1 |
| 4.7. | Կովարար է, ագրեսիվ, պոռթկուն | | 2 |
| 4.8. | Դժվարություններ ունի արդյունավետ կերպով սեփական կարիքներն ու պահանջներն արտահայտելու մեջ | | 2 |
| 4.9. | Չի կարող իր կարիքների մասին տեղեկացնել մյուսներին՝ առանց նրանց հետ միջանձնային կոնֆլիկտի մեջ մտնելու | | 2 |
| 5 | Հետաքրքրություններ | V | 4 |
| 5.1. | Չունի կայուն հետաքրքրություններ, չի ցանկանում զբաղվել որևէ օգտակար գործունեությամբ | | 1 |

| | | | |
|----------|---|----------|-----------|
| 5.2. | Անտարբեր և արհամարհական վերաբերմունք ունի մասնագիտություն ձեռք բերելու, աշխատելու և այլ հասարակական գործունեության հանդեպ: | | 1 |
| 5.3. | Հիմնականում հետաքրքրությունները կրում են վնասակար բնույթ | | 2 |
| 6 | Վնասակար հակումներ | V | 8 |
| 6.1. | Օգտագործում է ակոհոլ կամ թմրամիջոցներ, բայց պատրաստակամ է հրաժարվել | | 1 |
| 6.2. | Օգտագործում է ակոհոլ կամ թմրամիջոցներ և չի պատրաստվում հրաժարվել | | 2 |
| 6.3. | Զբաղվում է մուրացկանությամբ/թափառաշրջիկությամբ, բայց պատրաստակամ է հրաժարվել | | 1 |
| 6.4. | Զբաղվում է մուրացկանությամբ/թափառաշրջիկությամբ և չի պատրաստվում հրաժարվել | | 2 |
| 6.5. | Կայուն ծխող է | | 2 |
| 6.6. | Վաղաժամ սեռական ակտիվություն, անկանոն սեռական հարաբերություններ | | 2 |
| 7 | Հոգեկան առողջություն | V | 19 |
| 7.1. | Չունի որևէ հոգեկան խնդիր | | 0 |
| 7.2. | Ունի ուշադրությունը կենտրոնացնելու դժվարություն | | 2 |
| 7.3. | Ունի նկատելի խոսքային կամ ֆիզիկական ագրեսիվություն | | 2 |
| 7.4. | Ունի խոսքի դժվարություններ, հոգեկանի զարգացման թերություններ/ հապաղումներ | | 3 |
| 7.5. | Ունի վերլուծության, մտահանգումներ կատարելու դժվարություններ | | 2 |
| 7.6. | Երբևէ կատարված ինքնասպանության փորձ | | 3 |
| 7.7. | Երբևէ կատարված ինքնավնասում/ինքնախեղում | | 3 |
| 7.8. | Իմպուլսիվ է, հիպերակտիվ | | 2 |
| 7.9. | Լինում են անկառավարելի գայրույթի դեպքեր | | 1 |
| 7.10. | Չունի մեղքի զգացում | | 1 |
| 8 | Վերաբերմունքը դեպքին | V | 7 |
| 8.1. | Գիտակցում է իր արարքների բացասական բնույթը և պատրաստակամ է շտկել իր վարքը և/կամ որևէ կերպ փոխհատուցել պատճառված վնասը (նաև խորհրդանշական) | | 0 |
| 8.2. | Չի գիտակցում իր արարքների լրջությունը, արդարացնում է իրավիճակային հանգամանքներով և/կամ մեղադրում ուրիշներին | | 1 |
| 8.3. | Չի բացառում, որ հետագայում կկրկնի նույն արարքը | | 2 |
| 8.4. | Համարում է իրեն «զոհ», որի հետ անարդար են վարվել | | 1 |
| 8.5. | Բացահայտորեն գիտակցում է իր կողմից կատարվածն ու «հպարտանում» կատարածով | | 3 |

| | | | |
|-----------|--|----------|-----------|
| 9 | Իրավախախտ վարքի հիմնական «արդարացումները» | V | 11 |
| 9.1. | Ինքնին գործողության բովանդակությունը | | 2 |
| 9.2. | Գործողությունը կատարելու դեպքում հնարավոր խրախուսանքները | | 1 |
| 9.3. | Փողը, նյութական բավարարումը/դրա սպասելիքը | | 2 |
| 9.4. | Չկատարելու դեպքում, իր նկատմամբ հնարավոր պատիժը | | 1 |
| 9.5. | Հասակակիցներից ետ չմնալը | | 1 |
| 9.6. | Հեղինակություն ձեռք բերելու ձգտումը | | 2 |
| 9.7. | Պարապ չմնալու միտքը | | 1 |
| 9.8. | Այլ | | 1 |
| 10 | Արժեհամակարգ | V | 7 |
| 10.1. | Արժեվորում է հայրենասիրությունը, համագործակցությունը, փոխօգնությունը | | 0 |
| 10.2. | Արժեվորում է գումարը, ժամանցը, պերճանքի առարկաները, ցոփ ու շվալտ կյանքը | | 1 |
| 10.3. | Արժեվորում է հակասոցիալական վարքագիծը, իրավախախտումները | | 1 |
| 10.4. | Արժեվորում է հանցագործներին և հանցավորությունը | | 1 |
| 10.5. | Կարծում է՝ օրենքները սահմանափակում են իր ազատությունը | | 2 |
| 10.6. | Կարծում է՝ հետաքրքիր «գործի» համար դրանք կարելի է շրջանցել | | 2 |
| 11 | Կյանքի հետազա պլաններ | V | 8 |
| 11.1. | Ունի հետազա կյանքի հստակ դրական ծրագիր | | 0 |
| 11.2. | Ունի պասիվ ցանկություններ, որոնց կատարման ուղղությամբ չունի նպատակասլացություն ու ջանասիրություն | | 1 |
| 11.3. | Շահագրգռված չէ, չունի իրատեսական նպատակներ ու պլաններ մշակելու ցանկություն | | 2 |
| 11.4. | Կարծում է, որ քիչ բան կա, հանուն որի արժե սպրել, և որ ինքը ապագա չունի | | 2 |
| 11.5. | Պլանները կապված են հանցավոր միջավայրում «հայտնվելու» հետ | | 3 |

Ռիսկային գործոններ
Հնարավոր միջամտություն
Հնարավոր գործընկեր կառույցներ

ԳԼՈՒԽ 9

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՎԱՐԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9.1. Անչափահասների հետ հարցազրույց վարելու ընթացակարգային ընդհանուր ուղենիշներ

Ինչպես հանցավորության, այնպես էլ անչափահասների կրկնահանցագործության ռիսկի գնահատման առաջնային և հիմնական աղբյուր է անչափահասը: Այսինքն, որևէ նմանատիպ գործիքում առկա տեղեկատվությունը պետք է հավաքագրել, առաջին հերթին, հենց անչափահասից՝ հարցազրույցի ընթացքում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռիսկի գնահատման գործիքները, որպես կանոն, հագեցված են լինում անչափահասի կյանքի տարբեր ոլորտներին առնչվող հարցերով, որոնք մեծագույն հավանականությամբ հուզական ազդեցություն են ունենում անչափահասի վրա՝ ցանկալի է հարցազրույցն իրականացնել հնարավորինս փոքրաթիվ անգամներ: Հնարավորության դեպքում, նույնիսկ մեկ անգամ: Այս իմաստով, միջազգային պրակտիկան որդեգրել է անչափահասի հետ հարցազրույցները տեսաձայնագրելու կարևոր պրակտիկա՝ զերծ պահելով անչափահասին բազմաթիվ անգամներ իրողությունը վերապրելու և ներկայացնելու սթրեսային գործընթացներից⁵²:

9.1.1. Հարցազրույցի փնտրությունը

Որպես կանոն, ցանկալի է, որպեսզի հարցազրույցը տևի ոչ ավելի, քան 40-50 րոպե: Հնարավորության և/կամ անհրաժեշտության դեպքում, հարցազրույցը կարելի է իրականացնել 2 փուլով, որոնցից յուրաքանչյուրի տևողությունը ցանկալի է, որպեսզի չգերազանցի 20-25 րոպեն:

Պետք է հիշել, որ ցանկացած հարցազրույց պարունակում է սթրեսային գործոններ, անսպասելիություն, լարվածություն:

⁵² Guidelines Promoting the Human Rights and the Best Interests of the Child in Transnational Child Protection Cases. Council of Baltic Sea States Secretariat Stockholm, Sweden, 2015

Անչափահասների պարագայում այս գործոնների կարևորությունը բազմապատկվում է, «ցավոտ հարցերն» ավելի շատ են և առավել հուզական են ընկալվում:

Այս իմաստով, ցանկալի է, որպեսզի, փուլային հարցազրույցների դեպքում, դրանք չիրականացվեն նույն օրվա ընթացքում: Խիստ անհրաժեշտության դեպքում, անհրաժեշտ է յուրաքանչյուր 20-25 րոպեն մեկ անգամ տրամադրել 5-10 րոպե ընդմիջումներ:

9.1.2. Հարցերի շարադրումը

Խիստ կարևոր են հարցերը շարադրելու և հարց ձևակերպելու հմտությունները: Այսպես, ռիսկայնության գործիքներում (այդ թվում՝ հավելվածներով ներկայացված գործիքներում) առկա բոլոր ցուցիչները (ռիսկային գործոնները) խիստ կարևոր են բացահայտման ու գնահատման տեսակետից: Սակայն, անհրաժեշտ չէ դրանք ձևակերպել ուղիղ հարցի տեսքով: Օրինակ՝ «տանից փախչելու դեպքեր» ռիսկային գործոնը պետք է գնահատել ոչ թե հենց նույնատիպ հարցով (երբևէ փախել ես տանից կամ գրանցվել են արդյոք տանից փախչելու դեպքեր), այլ այդ իրավիճակն ուսումնասիրելու հարցադրումների միջոցով: Օրինակ՝ «եղե՞լ են դեպքեր, երբ մտածել ես տանից հեռանալու մասին» կամ «եղե՞լ են դեպքեր, երբ տանից դուրս ես եկել և չես ցանկացել հետ վերադառնալ: Պատմիր ինձ այդ մասին, ի՞նչն է քեզ ստիպել նման կերպ մտածել/վարվել» և այլն:

Ավելին, հարցերը պետք է ձևակերպել այնպես, որ անչափահասի կողմից հնչեցված պատասխանները լինեն բովանդակային ու ծավալուն՝ ընդգրկելով պատասխանողի հույզերն ու ապրումները: Այս իմաստով, խորհուրդ է տրվում հաճախ օգտագործել, այսպես կոչված, «բաց հարցեր», որոնք սկսվում են «...ինչպես ես կարծում...», «...ինչպես կմեկնաբանես...», հարցադրումներով:

Կամ, օրինակ՝ համայնքային ոստիկանների և/կամ այլ արտաքին աղբյուրի կողմից տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ անչափահասը ստեղծում և/կամ ընդգրկված է հակասոցիալական/իրավախախտ խմբավորումներում: Անչափահասին տրվող ուղիղ հարցն այս մասին կարող է խիստ անարդյունավետ ու սակավ տեղեկատվական լինել: Սակայն, սա կարևոր

գործոն է, որի վերաբերյալ արժե լսել անչափահասի կարծիքն ու մեկնաբանությունը, օրինակ՝ հետևյալ հարցադրմամբ՝ «...ինչպե՞ս կմեկնաբանես այն տեղեկատվությունը, որ հաճախ ժամանակ ես անցկացնում այսինչ մարդկանց շրջապատում» կամ «դու հաճախ լինում ես այսինչ միջավայրում, կխնդրեմ մեկնաբանես» և այլն:

Այս հարցերը «ստիպում են» անչափահասին «պատմել» և ընչ միայն «պատասխանել»՝ սոսկ պատասխաններ հնչեցնելու համար: Այսպիսի հարցադրումների միջոցով է, որ հնարավոր է դառնում բացահայտել ոչ միայն եղելությունն ու այս կամ այն ռիսկային գործոնի առկայությունը, այլև՝ անչափահասի ապրումներն ու վերաբերմունքն այդ գործոններին:

Տեղեկատվական կարող են լինել նաև, այսպես կոչված, «փակ հարցերը», որոնց դեպքում անչափահասը կարող է պատասխանել միայն «այո» կամ «ոչ»: Խորհուրդ է տրվում այս հարցադրումներն օգտագործել հարցազրույցի ավարտին, երբ անհրաժեշտ են որոշակի հստակեցումներ ու ճշգրտումներ (օրինակ՝ «ճիշտ հասկացա, որ...», «ճիշտ եմ հիշում, որ...», «կարող ե՞ք համարել, որ...» և այլն):

Պետք է հիշել, որ գործոններին ռիսկայնություն են հաղորդում ոչ միայն և ոչ այնքան գործոններն՝ «առանձին վերցրած», այլ անչափահասի վերաբերմունքն ու ապրումներն այդ գործոնների նկատմամբ: Այս իմաստով խիստ ցանկալի է տեղեկատվությունը ստանալ հատկապես բաց հարցերի շարադրմամբ (քրեաձին ամենատարբեր գործոնների վերաբերյալ ուստիկանին հուշող ուղենիշային հարցաշար է ներկայացված հավելված 10-ում):

9.2. Հարցազրույցի վայրի ընտրությունը ևս կարևոր է

Պակաս կարևոր չէ նաև հարցազրույցի իրականացման վայրի ընտրությունը: Որպես կանոն, այդ վայրը անչափահասների գործերով ուստիկանի աշխատասենյակն է: Այստեղ պետք է նորից հիշել, որ ուստիկանի հետ հարցազրույցը, այն էլ ուստիկանության շենքում, կարող է բավականին սթրեսաձին լինել երեխայի համար: Հատկապես նրանց համար, ովքեր առաջին անգամ, հանգամանքների բերումով հայտնվել են ուստիկանությունում (անկախ այն հանգամանքից թե ինչ կարգավիճակում է հանդես

գալիս անչափահասը՝ իրավախախտ, վկա կամ տուժող/զոհ), առաջին շփումը ոստիկանության հետ կարող է հետք թողնել և հետագա ազդեցություն ունենալ ինչպես հնարավոր քրեական գործի ընթացքի, այնպես էլ անչափահասի հոգեկանի վրա: Օրինակ՝ աշխատակիցների անընդհատ ելումուտը, ձայները, ուշադրությունը շեղող այլ երևույթները (որոնց մասին ներկայացված է ստորև) կամ անչափահասի նկատմամբ որևէ բացասական վերաբերմունք կարող է ոչ միայն «փակել» անչափահասին ու նվազեցնել համագործակցության պատրաստականությունը, այլև՝ հետք թողնել մեծահասակների նկատմամբ արդեն իսկ ունեցած (առկայության դեպքում) վերաբերմունքի դաշտում: Ինչպես ներկայացվեց 2-րդ գլխում, անչափահասների իրավախախտումների պատճառականության առյուծի բաժին պատասխանատվությունն ընկնում է մեծահասակների ուսերին (ընտանիք, համայնք): Եվ հաճախ, երեխաներն, իրավախախտումներ կատարելով, անգիտակցաբար վրեժ են լուծում իրենց ցավ պատճառողներից, հոգատարությունից զրկողներից և այլն: Ոստիկանի կողմից ոչ պատշաճ վերաբերմունքն ու հարցազրույցի կազմակերպումը կարող է խորացնել հենց այս ապրումներն ու զգացողությունները:

Կախված գործի հանգամանքներից (օրինակ՝ ընտանեկան կամ այլ բռնության զոհ, մահվան ելքով ավտոկթարի կամ դաժան սպանության ականատես)՝ կարելի է, հնարավորության դեպքում, հարցազրույցի վայրը տեղափոխել: Տարբեր երկրներում ընդունված պրակտիկաներից մեկն է համայնքում առկա հոգեբանական ծառայության աշխատասենյակներից մեկը: Հոգեբանի աշխատասենյակը, ենթադրվում է, որ հարմարեցված է այցելուների՝ հատկապես երեխաների հետ աշխատելու համար: Նման հնարավորության բացակայության դեպքում, կարելի է օգտագործել դպրոցի որևէ դասարան, զբոսահրապարակ, պուրակ, այգի և այլն:

Ցանկալի է, որպեսզի հարցազրույցի վայրը չլինի խիստ կաշկանդող, լարող, սթրեսային (այդ թվում՝ դասասենյակ, տնօրենի կամ այլ պաշտոնյայի սենյակ կամ վայր, որը կարող է ասոցացվել «պարտադրանքի», լարվածության, «պատժի», նախատինքի ու այլ բացասական հույզերի հետ):

Այսուհանդերձ, հատկապես իրավախախտումների մեջ կասկածվողների պարագայում, պետք չէ նաև տուրք տալ խիստ «հարմարավետությանն» ու «թուլանալուն»: Հարցազրույցը չպետք է վերածել «խիստ հարցաքննության», բայց և անչափահասը պետք է գիտակցի պատասխանատվության իր չափաբաժինն այդտեղ հայտնվելու համար:

Որոշ նվազագույն պահանջներ, որոնց արժե հետևել հարցազրույցի իրականացման վայրն ընտրելիս.

- **Հնարավորինս մեկուսացում «օտար աչքերից և ականջներից»** - Ցանկալի է «հարմարավետություն» ապահովել ոչ այնքան հարցազրույցի վայրի ընտրությամբ, որքան անչափահասին պաշտպանվածության, ապահովության զգացում հաղորդելով: Այս իմաստով, ցանկալի է հնարավորինս կանխել հարցազրույցի ընթացքում կողմնակի անձանց մուտքը աշխատասենյակ, այլ աշխատակիցների ելումուտը: Օրենսդրության թույլատրելիության շրջանակում և անչափահասի ցանկության դեպքում, ապահովել հնարավորինս մեկուսի հարցազրույց (ծնողների, օրինական ներկայացուցիչների, այլ ազգականի բացակայություն): Անհնարինության դեպքում, անհրաժեշտ է ապահովել, որպեսզի հարցազրույցի մասնակից երեխան հնարավորինս մեջքով նստած լինի սենյակում գտնվողին (առնվազն նվազեցնել երեխայի և այլ անձի հայացքների հանդիպումը): Այս պահանջի ենթատեքստում, անկարևոր չէ հիշեցնել նաև հավանական բռնության զրի երեխայի հետ հարցազրույց վարելու ընթացքում հավանական բռնարարի (կամ նույնիսկ նրա մտերիմի)՝ տարածքից բացակայելու պահանջի մասին:
- **Հնարավորինս մեկուսացում ուշադրություն շեղող արտաքին պայմաններից** – Նախորդ նվազագույն պահանջի պես, ցանկալի է հնարավորինս զերծ մնալ ուշադրություն շեղող հավանական գրգռիչներից: Գրգռիչները վերաբերում են մեր զգայություններին՝ հոտ, համ, շոշափելիք, տեսողություն և լսողություն: Այսպես, եթե հարցազրույցի սենյակի պատուհանները նայում են փողոց,

բակ կամ աղմուկ ենթադրող վայր, ցանկալի է, հնարավորինս նվազեցնել աղմուկի հնարավորությունը: Եթե աշխատասենյակը գտնվում է առաջին հարկում կամ որևէ այլ կերպ երեխան տեսանելի է այլոց կամ նրանք տեսանելի են անչափահասին, ցանկալի է հնարավորինս նվազեցնել այդ հնարավորությունները (օգտագործել վարագույր, դուռը փակել կամ այլ կերպ նվազեցնել տեսողական զգայության գրգռումը): Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև հոտառական գրգռիչներին: Անհրաժեշտ է հետևել, որ հարցազրույցն իրականացվի արտաքին միջավայրից եկող հոտերից հեռու: Բացի արտաքին հատվածից, խիստ կարևոր է նաև, որպեսզի հարցազրուցավարը նույնպես հետևի օձանելիքի արտահայտվածությանը, որպեսզի այն չլինի խիստ թունդ ու «պարտադրող»: Տեսողական գրգռիչներից խուսափելու համար, արժե մտածել նաև սենյակի կահավորանքի մասին:

- **Հնարավորինս հարմարավետ նվազագույն պայմանների առկայություն** – «Նվազագույն» բառն այստեղ ամբողջապես արտացոլում է հարցազրույց վարելու համար սենյակի նկատմամբ առկա պահանջները: Անչափահասների հետ աշխատանքի համար անհրաժեշտ ու բավարար պայմաններն են՝ աթոռ կամ բազմոց, սեղան, անձեռոցիկ, սպիտակ թղթեր, գրիչներ ու մատիտներ: Մանկահասակ երեխաների հետ հարցազրույցի պարագայում, կարող են տեղ գտնել նաև տարատեսակ խաղալիքներ:

Ինչպես տեսանք, հարցազրույցի վայրի ընտրությունը պակաս կարևոր նշանակություն չունի՝ հարցազրույցի վարման արդյունավետության տեսակետից: Սակայն, եթե, ամեն դեպքում, հնարավոր չի եղել ապահովել վերը ներկայացված նվազագույն պահանջները, միևնույն է հարցազրույցը պետք է շարունակել և փորձել լինել հնարավորինս կոմպետենտ: Այս առումով, երեխայի յուրաքանչյուր ուշադրության շեղում կամ անհանգստություն կարելի է շատ կարճ քննարկել: Օրինակ՝ զարդերի շփշփսկոց, օձանելիքի սուր հոտ, պատից կախված շատ գունեղ նկար, անընդհատ

սենյակ ելումուտ անող աշխատակիցներ և այլն, որոնք, ըստ ձեզ, խանգարում են անչափահասին: Եթե կարող եք փոխել իրավիճակը, արժի ներողություն խնդրել ու շտկել այն (օրինակ՝ հանել ապարանջանը կամ այլ զարդերը, սեղանի վրայից կամ պատից հանել գունեղ կամ հուզական ընտանեկան նկարները և այլն), իսկ եթե ոչ, հակիրճ հարցերով կամ արձագանքներով կարելի է անդրադառնալ այդ երևույթներին: Օրինակ.

«Այնպիսի զգացողություն ունեմ, որ, պատի նկարը հետաքրքրեց քեզ (սպասել երեխայի արձագանքին): Ինչ զգացողություն ես ունենում դրան նայելիս (սպասել երեխայի արձագանքին): Կուզեմ հանեմ պատից (սպասել երեխայի արձագանքին)»:

Կամ «հասկանում եմ, որ տհաճ է, երբ զրուցելիս կողմնակի մարդ է մտնում սենյակ (սպասել երեխայի արձագանքին): Նկարագրիր խնդրեմ՝ ինչ ես զգում, երբ ընդհատում են զրույցդ (սպասել երեխայի արձագանքին, հետևել միմիկային, շարժումներին)» և այլն:

9.3. Ընդհանուր ուղենիշներ անչափահասի հետ հարցազրույցի ընթացքում վստահության մթնոլորտ ձևավորելու ուղղությամբ

Հարցազրույցը տեղեկատվություն ստանալու մեթոդ է, որտեղ ակտիվ են թե՛ «հարց տվողը» և թե՛ «հարցերին պատասխանողը»: Այս իմաստով, ցանկալի է հասնել վստահության՝ անչափահասի առավելագույն ներգրավվածությամբ: Իսկ անձը որևէ գործունեության մեջ ներգրավված է, երբ գիտի, թե իրենից ինչ է պահանջվում կատարել:

Ուստի, առաջին քայլը, որ պետք է անել, անչափահասից տեղեկանալն է, թե արդյոք նա պատկերացնում է, թե ինչու է այստեղ, ինչու են իր հետ ցանկանում զրուցել, ինչ նպատակով է իրականացվում այդ զրույցը:

Երկրորդ քայլն անչափահասին հնարավորինս մանրամասն իրազեկելն է ողջ գործընթացի մասին՝ ներառյալ ապագայում իրավախախտ վարքի շտկման կամ քրեաձին գործոնների նվազեցման ուղղությամբ իր հետ իրականացվելիք հնարավոր աշխատանքների

ընույթը: Այս ընթացքում պետք է չմոռանալ ներկայանալ և ներկայացնել ձեր պաշտոնական-մասնագիտական առաքելությունն ու դերակատարումը:

Տույց տվեք, որ դուք հոգատար եք նրա հանդեպ և հարգում եք նրա անհատականությունը: Հարցրեք այդ տղայի կամ աղջկա որպիսության մասին: Հարցրեք, թե ինչպես է նա իրեն զգում: Հաճախ, նույնիսկ հանցարարքն ընտրություն է, որ կատարել է անչափահասը: Ու, որքան էլ ձեզ համար անտրամաբանական ու «դատապարտելի» թվա նրա կողմից կատարված արարքը, երեխան պիտի հնարավորություն ունենա արտահայտելու իր պատկերացումներն ու հույզերը իրողության վերաբերյալ: Նույնիսկ «ամենաստոր արարքի» դեպքում, անչափահասը կարող է ցույց տալ (թեկուզ դեմոստրատիվ կերպով) իր արժանապատվության ոտնահարման անթույլատրելիությունը: Արձագանք պիտի լինի, որ դուք կարևորում եք իր՝ արժանապատվություն երևույթը կարևորելու ցանկությունը (նույնիսկ, եթե առաջին հայացքից դուք կասկածի տակ եք առնում իր կատարած արարքի և «արժանապատվություն» երևույթի համադրությունը):

Տուցաբերեք էմպաթիա (ապրումակցում) և դրական հույզեր: Զրուցեք անչափահասի հետ այն ամենի մասին, ինչ հետաքրքրում է հենց իրեն ու կարևորում է ինքը:

Պարզեք՝ արդյոք անչափահասը հարմարավետ է զգում իրեն: Վերահաստատեք, որ նա պատարստ է ձեզ հետ զրուցել:

Անհրաժեշտ է կարողանալ կառավարել ժամանակը: Հաճախ անչափահասները կարող են ժամերով լռել կամ հակառակը՝ հույզերի ազդեցության տակ խոսել ու խոսել: Ոստիկանից պահանջվում է, որպեսզի կարողանա գծել հարցազրույցի շրջանակը, բայց և հնարավորություն ընձեռել անչափահասին արտահայտել իր հույզերն իրողության վերաբերյալ (նույնիսկ, եթե դրանք շատ կարևոր չեն քրեական գործի ընթացքի համար):

Հաջորդիվ քայլերով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, թե արդյոք անչափահասն ամբողջությամբ հասկացել է տրված հարցը կամ նկատառումը: Անհրաժեշտ է ողջամիտ ժամանակ տալ անչափահասին հավաքել մտքերն ու կառավարել հույզերը: Այս իմաստով, խիստ կարևոր են դադարները: Մի քանի վայրկյան դադարները հնարավորություն են տալիս

անչափահասին լավաճ ու հասկացված լինելու զգացում ունենալ: Հաճախ լսելը կարող է առավել օգտակար լինել, քան ձեր ուղեղում պտտվող հարցերի անվերջ տարափը:⁵³

Ստուգիչ հարցեր

1. Ո՞վ է ռիսկի գնահատման համար հիմնական տեղեկատվության աղբյուրը:
2. Ինչպիսի՞ մոտեցումներ կան անչափահասների հետ հարցազրույցի տևողության վերաբերյալ:
3. Ինչպիսի՞ պահանջներ կան հարցազրույցի հարցերի շարադրման ուղղությամբ:
4. Ինչպե՞ս են բնութագրվում բաց և փակ հարցերը:
5. Ինչպիսի՞ պահանջներ կան հարցազրույցի վայրի ընտրության նկատմամբ:
6. Ինչպիսի՞ քայլեր կամ գործողություններ են անհրաժեշտ անչափահասի հետ վստահության մթնոլորտ ձևավորելու ուղղությամբ:
7. Ինչպե՞ս է արտահայտվում երեխայակենտրոնությունը հարցազրույցի վարման ենթատեքստում:

⁵³ http://www.childcentre.info/public/PROTECT/Guidelines_promoting_the_Human_Rights_and_the_Best_Interest_of_the_Child_in_Transnational_Child_Protection_Cases.pdf

ՀԱՎԵԼՎԱԾ 10

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱՐՑԱՇԱՐ

1. Քո անուն-ազգանունը:
2. Քո ծննդյան ամիս-ամսաթիվը, վայրը:
3. Ովքե՞ր են ընտանիքիդ անդամները, ո՞րերորդ երեխան ես:
4. Ի՞նչ պայմաններում եք ապրում, ինչպիսի՞ն է ձեր սոցիալական վիճակը:
5. (Եթե քույր կամ եղբայր կան) Ո՞վ է մեծը:
6. Փոքր ժամանակ ունեցե՞լ ես ինչ-որ հիվանդություններ:
7. Ստացե՞լ ես համապատասխան բուժում:
8. Քանի՞ տարեկանից ես խոսել, քայլել:
9. Ըստ քեզ ցանկալի՞ երեխա ես եղել:
10. Գնացե՞լ ես մանկապարտեզ: Ո՞ր տարիքից:
11. Հաճույքո՞վ էիր գնում:
12. Ունեի՞ր ընկերներ, ովքե՞ր էին նրանք: Պատմի՞ր նրանց մասին:
13. Իսկ սիրելի ուսուցիչներ ունեի՞ր:
14. Հանդեսներին մասնակցո՞ւմ էիր, ի՞նչ էիր անում:
15. Մանկության տարիքում ինչի՞ կարիք ունեիր: Արդյոք դա ստանում էիր, ո՞ւմ կողմից:
16. Դպրոց գնացե՞լ ես: Քանի՞ տարեկանից: Քանի՞ տարի ես սովորել:
17. Ինչպիսի՞ն է եղել առաջադիմությունդ:
18. Ունեի՞ր դպրոցում ընկերներ: Պատմի՞ր նրանց մասին: Ովքե՞ր են նրանք: Նրանք կարևո՞ր են քեզ համար (խոսել նրանց մասին): Նրանք քո դասարանից էին, թե՞ այլ: Ի՞նչն էր ձեզ միավորում:
19. Ի՞նչ ես կարծում, կա՞ն արդյոք ընկերներ, որոնց համար կարելի է ոչինչ չխնայել:
20. Ինչպիսի՞ն է լավ ընկերը, ինչպիսի՞ հատկանիշներ պետք է նա ունենա:
21. Ի՞նչ հարաբերությունների մեջ էիր դպրոցի ուսուցիչների հետ:
22. Եղե՞լ են դպրոցում կոնֆլիկտներ, որի համար ծնող կանչե՞ն: Ի՞նչ պատճառով:

23. Ի՞նչն էր դպրոցում քեզ հետաքրքիր, իսկ ի՞նչը՝ ոչ: Ո՞ր առարկաներն էիր սիրում:
24. Ինչո՞վ ես աչքի ընկել դպրոցական տարիքում:
25. Հաճախե՞լ ես ինչ-որ խմբակներ:
26. Ծնողների ունե՞ն կրթություն, մասնագիտություն: Պատմի՞ր նրանց մասին:
27. Ինչպիսի՞ն է ծնողներիդ հետ հարաբերությունները:
28. Ծնողներից ո՞վ է ավելի խիստ եղել քեզ հետ, (ի՞նչ է արել):
29. Ծնողներից ո՞ւմ հետ ես ավելի շատ կապված, ո՞ւմ հետ ես ավելի շատ կիսվում:
30. Ձեր ընտանիքում հաճա՞խ են լինում վեճեր: Հիմնականում ինչի՞ շուրջ են այդ վեճերը:
31. Ինչպիսի՞ն է հարաբերությունների քրոջդ/եղբորդ հետ:
32. Օգտագործե՞լ ես ակոհոլ, թմրանյութ: Ծխո՞ւմ ես: Իսկ ո՞ր տարիքում ես առաջին անգամ փորձել:
33. Ինչի՞ մասին էիր երազում ավելի փոքր տարիքում:
34. Ինչո՞վ ես սիրում զբաղվել ազատ ժամանակ:
35. Ի՞նչն է դրա մեջ քեզ գրավում: Ի՞նչ ես զգում, երբ քո սիրած գործով ես զբաղվում:
36. Ինչի՞ մասին ես երազում:
37. Ի՞նչ հետաքրքրություններ ունես:
38. Ունե՞ս նպատակներ: Որո՞նք են դրանք: Դրանք հասանելի՞ են արդյոք: Ի՞նչ է պետք դրանց հասնելու համար:
39. Հե՞շտ էր հանցանքի մասին որոշում կայացնելը: Ի՞նչ էիր զգում այդ պահին: Իսկ դրանից առաջ և հետո:
40. Ի՞նչն է քեզ այս աշխարհում ամենից շատ հետաքրքրում:
41. Ի՞նչ պլաններ ունես հիմա ապագայի հետ կապված:
42. Ի՞նչն է քո կյանքում ամենակարևորը և ամենաթանկը:
43. Կա՞ մեկը, ով ամենակարևորն է քո կյանքում: Ունե՞ս այնպիսի մեկին, որին վստահաբար պատմես քեզ անհանգստացնող խնդիրների մասին:
44. Եթե հնարավորություն ունենայիր ինչ-որ բան փոխել քո կյանքում, ի՞նչը կփոխեիր:
45. Կա՞ ինչ-որ բան, որի մասին չխոսեցինք, և դու կուզեիր խոսել:



ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում

Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)

Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)

Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63

Էլ. փոստ՝ info@asoghik.am